
Կորպորատիվ կառավարման զեկույց



Ardshinbank

Մենք ուժեղ ենք **միասին**

Բովանդակություն

1. Ներածություն 3
2. 2025թ. Կորպորատիվ կառավարման կարևորագույն իրադարձությունները 4
3. Վարչակազմակերպական կառուցվածք 5
4. Կորպորատիվ կառավարման կառուցվածք 6
4.1 Բաժնետերերի ընդհանուր ժողով 6
4.2 Խորհուրդ 7
4.3 Խորհրդին կից կոմիտեներ 11
4.4 Գործադիր մարմին՝ Վարչություն և Վարչության նախագահ 12
5. Խորհրդի և Վարչության անդամների վարձատրությունը 13
6. Բանկի բաժնետերերի իրավունքները 16
7. Բանկի կողմից կորպորատիվ կառավարման ոլորտում ձեռքբերված ծառայություններ 17
8. Կորպորատիվ կառավարման 2025թ. տարեկան հայտարարագիր 19
9. Հավելվածներ 48

Հաստատված է «Արդշինբանկ» ԲԲԸ Խորհրդի 29 հունիսի 2026թ. թիվ 07/26-04Լ որոշմամբ

Կորպորատիվ Կառավարման Զեկույց

Հաշվետու տարի՝ 2025թ.

01 Ներածություն.

Արդյունավետ կորպորատիվ կառավարումը՝ ռազմավարական առաջնահերթությունների շարքում

Հավատարիմ մնալով որդեգրված քաղաքականությանը՝ «Արդշինբանկ» բաց բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ Բանկ) շարունակաբար առանձնահատուկ ուշադրություն է դարձնում կայուն և արդյունավետ կորպորատիվ կառավարման համակարգի ձևավորմանն ու զարգացմանը՝ այն դիտարկելով որպես երկարաժամկետ աճի, ֆինանսական կայունության և շահառուների վստահության ամրապնդման հիմնասյուներից մեկը: Բանկն իր գործունեության հիմքում դրել է կորպորատիվ կառավարման բարձր չափանիշների պահպանումն ու շարունակական կատարելագործումը՝ այն ընկալելով որպես պատասխանատու, թափանցիկ և հաշվետու գործունեության անբաժանելի բաղադրիչ: Այս համատեքստում Բանկը հետևողականորեն զարգացնում և արդիականացնում է իր կառավարման համակարգը՝ ապահովելով դրա համապատասխանությունը ինչպես Հայաստանի Հանրապետության կորպորատիվ կառավարման կանոնագրքի (այսուհետ՝ Կանոնագիրք) դրույթներին, այնպես էլ միջազգային լավագույն փորձին և առաջատար պրակտիկաներին:

Հաշվետու՝ 2025 թվականի ընթացքում Բանկը շարունակել է իրականացնել հետևողական քայլեր՝ ուղղված կորպորատիվ կառավարման ոլորտում միջազգային լավագույն չափանիշների ներդրմանը և կառավարման գործընթացների շարունակական կատարելագործմանը: Այս նախաձեռնությունների առանցքում են կառավարման բոլոր մակարդակներում թափանցիկության, պատասխանատվության և հաշվետվողականության ապահովումը, ինչպես նաև արդյունավետ վերահսկողական և կառավարչական մեխանիզմների ամրապնդումը:

Այս սկզբունքների հիման վրա Բանկը ձևավորում է կառավարման այնպիսի միջավայր, որը ոչ միայն լիովին համապատասխանում է Հայաստանի Հանրապետության օրենսդրական պահանջներին, այլև արտացոլում է համաշխարհային առաջատար ստանդարտներին համարժեք կորպորատիվ մշակույթ, իսկ Կանոնագիրքը շարունակում է հանդիսանալ Բանկի կորպորատիվ կառավարման համակարգի շարունակական զարգացման և բարելավման կարևոր ուղենիշներից մեկը:

02 2025թ. Կորպորատիվ կառավարման կարևորագույն իրադարձությունները

Կորպորատիվ կառավարման տեսանկյունից հաշվետու 2025 թվականը կարևոր և նշանակալի փուլ էր Բանկի զարգացման պատմության մեջ՝ առանձնանալով մի շարք ռազմավարական և կառուցվածքային իրադարձություններով:

«Արդշինինվեստբանկ» ՓԲԸ-ի (նախկինում՝ «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ**) միացումը Բանկին**.

«Արդշինինվեստբանկ» ՓԲԸ-ի միացումը հանդիսացավ Բանկի կողմից «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ 100% ձեռքբերման՝ 2024թ. նոյեմբերին ավարտված գործարքի շարունակությունը և գրանցվեց ՀՀ Կենտրոնական բանկի կողմից 18.04.2025թ.: Միացման արդյունքում Բանկի մասնաճյուղային ցանցն ընդլայնվել է ևս 6 մասնաճյուղով՝ ապահովելով «Արդշինինվեստբանկ» ՓԲԸ հաճախորդների սպասարկման անխափան և բնականոն շարունակականությունը: Բանկը հանդիսանում է «Արդշինինվեստբանկ» ՓԲԸ լիիրավ իրավահաջորդը:

Բանկի կանոնադրական կապիտալի համալրում

Բանկի կանոնադրական կապիտալի համալրման նպատակով 2024 թվականի դեկտեմբերին Բանկի բաժնետերերի կողմից ընդունվել է որոշում՝ 495,456 հատ սովորական (հասարակ) և 480,000 հատ արտոնյալ բաժնետոմսերի թողարկման և տեղաբաշխման իրականացման վերաբերյալ: Բաժնետոմսերի տեղաբաշխումն իրականացվել է 2025 թվականի հունիսին, որի արդյունքում Բանկի կանոնադրական հիմնադրամն ավելացել է 97,545,600,000 ՀՀ դրամով և կազմել 200,000,000,000 ՀՀ դրամ:

Արդյունքում, Բանկի կանոնադրական կապիտալը կազմվել է՝

- 1,500,000 հատ սովորական բաժնետոմսերից՝ յուրաքանչյուրն 100,000 ՀՀ դրամ անվանական արժեքով, և
- 500,000 հատ «B» դասի փոփոխական շահութաբաժնով փոխարկելի արտոնյալ բաժնետոմսերից՝ յուրաքանչյուրն 100,000 ՀՀ դրամ անվանական արժեքով:

Հետագայում, «Արդշինբանկ» ԲԲԸ կանոնադրության պետական գրանցման արդյունքում «B» դասի փոփոխական շահութաբաժնով փոխարկելի արտոնյալ բաժնետոմսերը փոխարկվել են նույն անվանական արժեքով և նույն քանակի «A» դասի փոփոխական շահութաբաժնով արտոնյալ բաժնետոմսերի:

Վերակազմավորում բաց բաժնետիրական ընկերության

«Արդշինբանկ» փակ բաժնետիրական ընկերությունը բաց բաժնետիրական ընկերության վերակազմավորելու վերաբերյալ թիվ 2025-4-4 Լ որոշումն ընդունվել է 29.04.2025թ. Բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովի շրջանակներում: Այնուհետև, Բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովի՝ 2025 թվականի հունիսի 20-ի թիվ 2025-5-2-Լ որոշմամբ հաստատվել է «Արդշինբանկ» ԲԲԸ նոր ֆիրմային անվանումը, ինչպես նաև իրականացվել է բաժնետոմսերի փոխարկում՝ պահպանելով դրանց անվանական արժեքն ու քանակը:

«Արդշինբանկ» ԲԲԸ կանոնադրությունը գրանցվել, իսկ լիցենզիան վերաձևակերպվել է ՀՀ Կենտրոնական բանկի կողմից 2025թ. նոյեմբերի 25-ին: Վերակազմավորված «Արդշինբանկ» ԲԲԸ հանդիսանում է «Արդշինբանկ» ՓԲԸ լիիրավ իրավահաջորդը:

Իրականացված միջոցառումները առավել մանրամասն ներկայացված են սույն զեկույցի համապատասխան բաժիններում:

Կորպորատիվ կառավարման մշակույթի զարգացմանն ուղղված նախաձեռնություններ

Հաշվետու տարվա ընթացքում Բանկը շարունակել է իրականացնել կորպորատիվ կառավարման համակարգի ամրապնդման, կառավարման արդյունավետության բարձրացման և միջազգային լավագույն փորձին համապատասխանության ապահովմանն ուղղված նախաձեռնություններ, որոնց շրջանակում առանձնահատուկ նշանակություն են ունեցել հետևյալ միջոցառումները՝

- շարունակվել են կորպորատիվ կառավարման համակարգի կատարելագործմանն ուղղված աշխատանքները, որոնց շրջանակում իրականացվել է գործող կառավարման համակարգի համապարփակ գնահատում (gap analysis), ներգրավվել են անկախ փորձագետներ, ինչպես նաև սահմանվել են կառավարման արդյունավետության, թափանցիկության և հաշվետվողականության շարունակական բարձրացմանն ուղղված ռազմավարական առաջնահերթություններ,
- 2025թ. ընթացքում նախաձեռնվել է Բանկի Խորհրդի (ինքնա)գնահատման գործընթացի իրականացումը՝ միջազգային փորձագիտական և խորհրդատվական աջակցության ներգրավմամբ, իսկ 2026թ. նախատեսվում է շարունակել ստանձված նախաձեռնությունը՝ նպատակ ունենալով հետագա բարձրացնել Խորհրդի գործունեության արդյունավետությունը, հաշվետվողականությունը և կորպորատիվ կառավարման լավագույն միջազգային փորձին համապատասխանությունը:

2025 թվականին Բանկը միացել է ՀՀ կորպորատիվ կառավարման կանոնագրքին և իրականացրել համապատասխանության գնահատում: Բացահայտված մասնակի անհամապատասխանությունների մասով Բանկի Խորհրդին կից հաստատվել է գործողությունների ծրագիր, որի շրջանակներում ձեռնարկվել և շարունակվում են ձեռնարկվել համապատասխան քայլեր՝ Բանկի կորպորատիվ կառավարման համակարգի համապատասխանությունն ապահովելու և այն ՀՀ կորպորատիվ կառավարման կանոնագրքի սկզբունքներին լիարժեք համապատասխանեցնելու նպատակով:

Նշված նախաձեռնությունները նպատակաուղղված էին Բանկի կառավարման համակարգի շարունակական զարգացմանը, խորհրդի գործունեության արդյունավետության բարձրացմանը և միջազգային լավագույն փորձին համահունչ կառավարման մշակույթի ձևավորմանը:

03 Վարչակազմակերպական կառուցվածք

Բանկի վարչակազմակերպական կառուցվածքը պարբերաբար վերանայվում և կատարելագործվում է՝ ապահովելու կառավարման և վերահսկողության արդյունավետ կազմակերպումը, բիզնես գործընթացների օպտիմալացումը, ինչպես նաև հաճախորդների լավագույն շահերի պաշտպանությունն ու սպասարկման բարձր որակը: Հաշվետու՝ 2025 թվականի ընթացքում կազմակերպական կառուցվածքի վերանայումը հիմնականում պայմանավորված էր «Արդշին-ինվեստբանկ» ՓԲԸ-ի՝ Բանկին միացման գործընթացով և դրան հաջորդած ինտեգրացիոն միջոցառումներով:

Խորհրդի 20.11.2025թ. թիվ 13/25-01Լ որոշմամբ հաստատված Բանկի վարչակազմակերպական կառուցվածքը ներկայացված է սույն Զեկույցի Հավելված 1-ում:

04 Կորպորատիվ կառավարման կառուցվածք

Համաձայն «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի, «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի և Բանկի Կանոնադրության՝ Բանկի կառավարման մարմիններն են.

- Բանկի բաժնետերերի Ընդհանուր ժողովը.
- Բանկի Խորհուրդը.
- Բանկի կոլեգիալ գործադիր մարմինը՝ Վարչությունը.
- Բանկի միանձնյա գործադիր մարմինը՝ Վարչության նախագահը:

4.1 Բաժնետերերի ընդհանուր ժողով

Բաժնետերերի ընդհանուր ժողովը Բանկի բարձրագույն կառավարման մարմինն է, որը, ի թիվս Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և Բանկի կանոնադրությամբ սահմանված բացառիկ իրավասությունների, պատասխանատու է Բանկի գործունեության ռազմավարական ուղղությունների և հիմնարար նշանակության որոշումների ընդունման համար:

Ժողովի իրավասությունների շրջանակում են, մասնավորապես, Բանկի տարեկան ֆինանսական հաշվետվությունների հաստատումը, շահաբաժնային քաղաքականության սահմանումն ու շահույթի բաշխման վերաբերյալ որոշումների ընդունումը, Խորհրդի անդամների ընտրությունն ու նշանակումը, կանոնադրական կապիտալի և Բանկի կանոնադրության փոփոխությունները:

Հաշվետու՝ 2025 թվականի ընթացքում Բանկի բաժնետեր «ՄԲՑ» ՓԲԸ-ի կողմից իրեն սեփականության իրավունքով պատկանող 2,462 հատ սովորական (հասարակ) և 20,000 հատ արտոնյալ բաժնետոմսերի օտարումից և Բանկի մյուս բաժնետեր՝ «Արինս Գրուպ» ՍՊԸ-ի կողմից 2025 թվականի ապրիլի 8-ին նշված բաժնետոմսերի ամբողջ ծավալով ձեռքբերումից հետո, Բանկի հասարակ (սովորական) բաժնետոմսերի սեփականատեր են հանդիսանում.

1. մեկ իրավաբանական անձ - «Արինս Գրուպ» ՍՊԸ, ի դեմս կառավարող կազմակերպություն «Արինս Մենեջմենթ» ՍՊԸ նախագահ Կարեն Սուրենի Սաֆարյանի,
2. երեք ֆիզիկական անձ. - Արամ Հուսիկի Անդրեասյան, Ռուդիկ Արմենի Մկրտումյան, Խաչիկ Հակոբի Զաքարյան:

2025 թվականին լրացուցիչ բաժնետոմսերի թողարկման և տեղաբաշխման միջոցով Բանկի կանոնադրական կապիտալի ավելացումից, ինչպես նաև 2025 թվականի հունիսի 25-ին «Արդշինբանկ» ՓԲԸ կանոնադրության և 2025 թվականի նոյեմբերի 18-ին «Արդշինբանկ» ԲԲԸ կանոնադրության՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից պետական գրանցում ստանալուց հետո, Բանկի բաժնետերերի մասնակցությունը կանոնադրական կապիտալում ձևավորվել է հետևյալ կերպ.

№	Բաժնետերեր	Հասարակ (սովորական) բաժնետոմսեր			
		քանակ	Անվանական արժեք ՀՀ դրամ	Մասնաբաժին	
				%	ՀՀ դրամ
1	«Արինս Գրուպ» ՍՊԸ	1,483,771	100,000	98.918067%	148,377,100,000
3	Անդրեասյան Ա.Հ.	10,453	100,000	0.696867%	1,045,300,000
4	Մկրտումյան Ռ.Ա.	2,888	100,000	0.192533%	288,800,000
5	Զաքարյան Խ.Հ.	2,888	100,000	0.192533%	288,800,000
	Ընդամենը	**1,500,000**	–	**100.00%**	**150,000,000,000**

№	Բաժնետերեր	«A» դասի փոփոխական շահաբաժնով ա**րտոնյալ բաժնետոմսեր**			
		քանակ	Անվանական արժեք ՀՀ դրամ	Մասնաբաժին	
				%	ՀՀ դրամ
1	«Արդշինբանկ» ԲԲԸ – անվանատիրոջ արժեթղթերի հաշիվ	494,807	100,000	98.9614%	49,480,700,000
3	Անդրեասյան Ա.Հ.	3,345	100,000	0.669%	334,500,000
4	Մկրտումյան Ռ.Ա	924	100,000	0.1848%	92,400,000
5	Զաքարյան Խ.Հ.	924	100,000	0.1848%	92,400,000
	Ընդամենը	**500,000**	–	**100.00%**	**50,000,000,000**

«Արինս Գրուպ» ՍՊԸ միակ մասնակիցն է Բանկի Խորհրդի նախագահ Կարեն Սուրենի Սաֆարյանը:

Բանկի բաժնետեր Արամ Հուսիկի Անդրեասյանը, ով հանդիսանում է Բանկի 10,453 հատ (0.696867%) սովորական (հասարակ) և 3,345 արտոնյալ բաժնետոմսերի սեփականատեր, միևնույն ժամանակ հանդիսանում է Բանկի Խորհրդի անդամ:

4.2 Խորհուրդ

Խորհուրդը Բանկի գործունեության ընդհանուր ղեկավարումն իրականացնող մարմին է, որը որոշումներ է ընդունում Խորհրդի իրավասությանը վերապահված հարցերով, ներառյալ՝ գործադիր մարմնի և ներքին աուդիտի ստորաբաժանման ձևավորումը, հսկողական գործառույթներ իրականացնող անձանց՝ ռիսկերի կառավարման գործառույթի իրականացման համար պատասխանատու անձի և համապատասխանության ապահովման գործառույթի իրականացման համար պատասխանատու անձի, ֆինանսական դիտարկումների մարմնի ղեկավարի նշանակումների համաձայնեցումը, վարչակազմակերպական կառուցվածքի հաստատումը և այլն:

Հաշվետու 2025թ. ընթացքում Խորհրդի կազմում տեղի են ունեցել որոշակի փոփոխություններ, մասնավորապես՝ 2025թ. մայիսին սեփական դիմումի համաձայն դադարեցվել են Խորհրդի անդամ Գարեգին Տոսունյանի լիազորությունները, իսկ դեկտեմբերին ՀՀ Կենտրոնական բանկի կողմից որպես Բանկի Խորհրդի անդամ է գրանցվել Ֆիլիպպ Դեռ Մեգրեդիտչիանը:

Այսպիսով, 2025թ. վերջի դրությամբ Խորհուրդը գործում էր հետևյալ կազմով.

№	Անուն, Ազգանուն	Նշանակման տարեթիվ	Խորհրդում	Կարգավիճակ	
				անկախություն	գործադիր/ոչ գործադիր
1	Սաֆարյան Կարեն Սուրենի	2003	Նախագահ	Ոչ անկախ	Ոչ գործադիր
2	Անդրեասյան Արամ Հուսիկի	2009	Անդամ	Ոչ անկախ	Ոչ գործադիր
3	Գաբրիելյան Վաչե Վազգենի	2019	Անդամ	Անկախ	Ոչ գործադիր
4	Ֆոն Գլայխ Ալեքսանդր	2023	Անդամ	Անկախ	Ոչ գործադիր
5	Սարգսյան Տիգրան Սուրենի	2022	Անդամ	Անկախ	Ոչ գործադիր
6	Ֆիլիպպ Դեռ Մեգրեդիտչիան	2025	Անդամ	Անկախ	Ոչ գործադիր
	Տեսակարար կշիռ	-	-	67%	100%

Խորհրդի անդամների հակիրճ կենսագրությունները ներկայացված են սույն Զեկույցի Հավելված 2-ում:

Խորհրդի անդամի անկախությունը գնահատվել և որոշվել է՝ հիմք ընդունելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքով սահմանված չափանիշների հիման վրա մշակված և հաշվետու 2025 թվականին Բանկի Խորհրդի կանոնակարգում ամրագրված անկախության չափանիշները, հետևյալ կերպ.

	Անկախության չափանիշ	Կարեն Սաֆարյան	Արամ Անդրեասյան	Վաչե Գաբրիելյան	Ալեքսանդր Ֆոն Գլայխ	Տիգրան Սարգսյան	Ֆիլիպպ Դեռ Մեգրեդիտչիան
1	վերջին հինգ տարվա ընթացքում Բանկում Վարչության անդամի պաշտոն չի զբաղեցրել, չի աշխատել Բանկում կամ դրա հետ փոխկապակցված այլ անձի մոտ.	V	V	V	V	V	V
2	վերջին հինգ տարվա ընթացքում Բանկից կամ Բանկի հետ փոխկապակցված անձից (անձանցից) ուղղակիորեն կամ անուղղակիորեն չի ստացել որևէ վարձատրություն, բացառությամբ որպես Խորհրդի անդամ ստացած վարձատրության և այդ վարձատրությունը չի կազմում նրա տարեկան եկամուտի զգալի մասը.	V	V	V	V	V	V
3	վերջին հինգ տարվա ընթացքում ինչպես ուղղակիորեն, այնպես էլ անուղղակիորեն՝ որպես գործընկեր, նշանակալից բաժնետեր, Խորհրդի անդամ, գործադիր մարմնի անդամ (ներկայացուցիչ) չի ունեցել էական որևէ գործարար հարաբերություն Բանկի և (կամ) Բանկի հետ փոխկապակցված անձի (անձանց) հետ.	X	V	V	V	V	V
4	վերջին հինգ տարվա ընթացքում չի հանդիսացել Բանկի արտաքին աուդիտն իրականացնող անձի և (կամ) դրա հետ փոխկապակցված անձի (անձանց) բաժնետեր և (կամ) աշխատող.	V	V	V	V	V	V
5	չի հանդիսանում Բանկի նշանակալից բաժնետեր կամ նշանակալից բաժնետիրոջ գործընկեր, բաժնետեր, տնօրեն կամ այլ ղեկավար անձ	X	V	V	V	V	V
6	կապված չէ որևէ ոչ առևտրային կազմակերպության հետ, որը զգալի ֆինանսավորում է ստանում Բանկից կամ նրա դուստր ընկերությունից	V	V	V	V	V	V

7	չի մասնակցում Բանկի կամ դրա դուստր ընկերությունների աշխատակիցների բաժնետիրացման ծրագրին կամ կենսաթոշակային ծրագրին	V	V	V	V	V	V
8	չի հանդիսանում մեկ այլ ընկերության գործադիր տնօրեն, որտեղ Բանկի ղեկավարներից որևէ մեկը հանդիսանում է խորհրդի անդամ	V	V	V	V	V	V
9	չի հանդիսանում Կանոնակարգի սույն ցանկի 1-8 կետերում նշված ցանկից որևէ մեկի ընտանիքի անդամ (և չի հանդիսանում 1-8 կետերում նշված և անգործունակ կամ մահացած անձի համապատասխանաբար խնամակալ, գույքի հավատարմագրային կառավարիչ, կտակակատար)	V	V	V	V	V	V
10	Վերջին 10 տարվա ընթացքում 6 տարուց ավելի չի հանդիսացել Բանկի խորհրդի անդամ.	X	X	V	V	V	V
11	Վերջին մեկ տարվա ընթացքում անմիջական հսկողություն չի իրականացրել Բանկի նկատմամբ՝ որպես հանրային ծառայող.	V	V	V	V	V	V
		Ոչ անկախ	Ոչ անկախ	Անկախ	Անկախ	Անկախ	Անկախ

Խորհրդի անդամն իր պաշտոնավարման ողջ ընթացքում պարտավոր է հետամուտ լինել առնվազն Խորհրդի կանոնակարգով սահմանված հետևյալ էթիկական չափանիշների պահպանմանը.

- **անկախություն.** որոշումներ կայացնելիս Խորհրդի անդամը պարտավոր է կիրառել անկախ դատողություն, առաջնորդվել բացառապես արդարամտության սկզբունքներով.

- բարեխղճություն. Խորհրդի անդամը պետք է ունակ լինի կառուցողական քննադատություն ներկայացնել Վարչության աշխատանքին և մանրակրկիտ վերլուծել կատարողականը,

- շահերի բախման բացահայտում. Խորհրդի անդամը պարտավոր է բացահայտել շահերի բախման ցանկացած հնարավոր դեպք, երրորդ անձանցից չընդունել այնպիսի օգուտներ, որոնք կարող են դիտարկվել որպես ոչ ողջամիտ և հանգեցնել Բանկի կամ դրա հետ փոխկապակցված անձանց հետ շահերի բախման:

- գաղտնիություն. Խորհրդի անդամը պարտավոր է չհրապարակել և/կամ երրորդ անձանց որևէ կերպ չփոխանցել իր պարտականությունների կատարման ընթացքում իրեն հայտնի դարձած բանկային, առևտրային կամ այլ գաղտնիք կազմող տեղեկություն, բացառել դրա՝ անձնական շահե-րով օգտագործումը,

- արդյունավետություն. իր պարտականությունները պատշաճ կատարելու համար Խորհրդի անդամը պարտավոր է հատկացնել բավարար ժամանակ, ուշադրություն և գործադրել ողջամիտ ջանքեր.

-մասնագիտական զարգացում. Խորհրդի անդամը պարտավոր է շարունակաբար արդիականացնել իր հմտություններն ու գիտելիքները, ապահովել մասնագիտական զարգացում:

Խորհրդի անկախ անդամը, ի հավելումն վերոնշյալ էթիկական չափանիշների, պարտավոր է նաև

- հավասարակշռել Խորհրդի ոչ անկախ անդամների կողմից կողմնակալության հնարավոր դրսևորման դեպքերը,

- ձեռնպահ մնալ իր անկախությունը վտանգող ցանկացած գործողությունից, իսկ անկախության կորստի դեպքում՝ այդ մասին տեղեկացնել խորհրդին՝ բացահայտելով պատճառները,

- Խորհրդի կողմից որոշված դեպքերում՝ ստանձնել Խորհրդին կից կոմիտեների նախագահների պաշտոնները:

Խորհրդի կազմը հավասարակշռված է՝ անդամների կողմից արդյունավետ գործունեության համար անհրաժեշտ առանցքային հմտությունների և փորձառության առկայության տեսանկյունից, ինչը հնարավորություն է տալիս ապահովելու Խորհրդին վերապահված գործառույթների առավելագույն արդյունավետ իրականացումը:

Խորհրդի անդամներն ունեն բարձր մասնագիտական հեղինակություն և տարբեր ոլորտներում գործող կազմակերպությունների կառավարման հաջողված փորձ, ինչպես նաև օժտված են ֆինանսական, ներդրումային և ռազմավարական զարգացման ոլորտներում անհրաժեշտ գիտելիքներով ու հմտություններով: Միևնույն ժամանակ, նրանք տիրապետում են բանկային ոլորտին հատուկ կարգավորման, կառավարման և ռիսկերի գնահատման առանձնահատկություններին, ինչը նպաստում է Բանկի կայուն և արդյունավետ կառավարմանը:

Բանկում կորպորատիվ կառավարման մշակույթի շարունակական կատարելագործման, Խորհրդի կազմում անհրաժեշտ հմտությունների և կարողությունների պատշաճ համադրության ապահովման, ինչպես նաև պարբերական կամ չնախատեսված փոփոխությունների դեպքում կառավարման կայունության և շարունակականության երաշխավորման նպատակով, Խորհուրդը 2025 թվականի դեկտեմբերի 19-ի թիվ 15/25-13-Լ որոշմամբ որպես ռազմավարական նշանակության գործընթաց հաստատել է Խորհրդի սերնդափոխության (իրավահաջորդության) պլանը:

Միևնույն ժամանակ՝ Բանկը որդեգրել է համակարգի ֆորմալ և ոչ ֆորմալ կրթության, ինքնակատարելագործման խթանման քաղաքականություն՝ Խորհրդի անդամներին և բանկի այլ աշխատակիցներին հնարավորություն ընձեռելով բանկի միջոցների հաշվին մասնակցել կրթական, վերապատրաստման և մասնագիտական զարգացման ծրագրերի: Այս մոտեցումը նպատակաուղղված է կառավարման և գործառնական կարողությունների շարունակական զարգացմանը, մասնագիտական գիտելիքների արդիականացմանը և կորպորատիվ կառավարման արդյունավետության բարձրացմանը:


Խորհրդի աշխատանքների արդյունավետ կազմակերպման շնորհիվ ապահովված է Խորհրդի անդամների բարձր մակարդակի ներգրավվածությունը ինչպես Խորհրդի, այնպես էլ Խորհրդին կից գործող կոմիտեների գործունեության մեջ: Միաժամանակ ստեղծված են անհրաժեշտ բոլոր պայմանները, ռեսուրսներն ու գործիքակազմը՝ Խորհրդի անդամների կողմից իրենց անհատական գործառույթների լիարժեք և արդյունավետ իրականացման համար, ինչը նպաստում է որոշումների կայացման որակի բարձրացմանը և կառավարման համակարգի արդյունավետության ամրապնդմանը:

2025 թվականի ընթացքում Խորհրդի կողմից գումարվել է 15 նիստ, որոնց շրջանակում կայացվել է 89 որոշում:

Նիստերի օրակարգը ընդգրկել է Բանկի գործունեության համար ռազմավարական և գործառնական նշանակություն ունեցող մի շարք ոլորտներ, այդ թվում՝ ֆինանսների, արժեթղթերի շուկայի, ռազմավարական պլանավորման, վերահսկողության և հաշվետվողականության հարցեր, ներքին և արտաքին աուդիտի գործունեության արդյունքների քննարկում, ինչպես նաև ռիսկերի կառավարման գործառույթի և համապատասխանության ապահովման գործառույթի իրականացման համար պատասխանատու անձանց, ֆինանսական դիտարկումների մարմնի հաշվետվությունների ներկայացում:

Բացի այդ, Խորհրդի որոշումները վերաբերել են Բանկի կառավարման մարմինների անդամների և առանցքային ղեկավար պաշտոններ զբաղեցնող աշխատակիցների նշանակմանը և վարձատրությանը, ինչպես նաև իրավական կարգավորման և այլ կարգավորիչ բնույթի հարցերին

2025թ. ընթացքում Խորհրդի կողմից կայացված որոշումներն ըստ կարգավորման առարկայի



Հաշվետու ժամանակահատվածում Խորհուրդն անդրադարձել է մասնավորապես հետևյալ հարցերի քննարկմանը.

Հաշվետու 2025թ. ընթացքում Խորհրդի որևէ անդամի շահագրգռվածությամբ գործարք չի կնքվել:

2025թ. ընթացքում գումարված նիստերին արձանագրվել է Խորհրդի անդամների գրեթե 100% մասնակցություն: Օրակարգային հարցերի քննարկման ընթացքում ապահովվել է ակտիվ և բովանդակալից քննարկում, որի շրջանակում հաշվի են առնվել Խորհրդի յուրաքանչյուր անդամի կարծիքներն ու առաջարկությունները:

4.3 Խորհրդին կից կոմիտեներ

Բանկի Խորհուրդն իր աշխատանքն արդյունավետ կազմակերպելու նպատակով ստեղծել է խորհրդակցական որոշումներ կայացնելու իրավասությամբ օժտված կոլեգիալ մարմիններ՝ Կոմիտեներ:

2025թ. ընթացքում Խորհրդին կից կոմիտեները գործել են հետևյալ փաստացի կազմերով.

№	Ռազմավարության կոմիտե	Կադրային քաղաքականության և մոտիվացիայի կոմիտե	Աուդիտի և ռիսկերի կոմիտե	Կորպորատիվ կառավարման և մեթոդոլոգիայի կոմիտե
1	Սաֆարյան Կարեն Սուրենի (նախագահ)	Սաֆարյան Կարեն Սուրենի (նախագահի ժ/պ)	Ֆոն Գլայխ Ալեքսանդր (նախագահ)	Անդրեասյան Արամ Հուսիկի (նախագահ)
2	Գաբրիելյան Վաչե Վազգենի	Անդրեասյան Արամ Հուսիկի	Սաֆարյան Կարեն Սուրենի	Գաբրիելյան Վաչե Վազգենի
3	Ֆոն Գլայխ Ալեքսանդր	Գասպարյան Օլգա Միքայելի	Անդրեասյան Արամ Հուսիկի	

Կոմիտեների աշխատանքներին խորհրդակցական ձայնի իրավունքով կարող են ներգրավվել նաև խորհրդատուներ և փորձագետներ: Մասնավորապես՝ Խորհրդին կից Աուդիտի և Ռիսկերի կոմիտեի կազմի հաստատման վերաբերյալ Խորհրդի որոշմամբ որպես մշտական խորհրդատու ներգրավված է նաև Օլգա Միքայելի Գասպարյանը:

Հաշվետու 2025թ. ընթացքում Խորհրդին կից կոմիտեների կողմից գումարվել են հետևյալ քանակությամբ նիստերը, որոնց վերաբերյալ եռամսյակային հաշվետվությունները ներկայացվել են Խորհրդին. Բոլոր կոմիտեների նիստերը հրավիրվել են անձնական մասնակցությամբ և/կամ էլեկտրոնային կապի միջոցների կիրառմամբ, ընդ որում բոլոր դեպքերում անդամների մասնակցության ցուցանիշը կազմել է 100%:

հ/հ	**Կոմիտե**	**Անդամների փաստացի քանակ**	**Նիստերի քանակ**
1	Աուդիտի և ռիսկերի կոմիտե	3 անդամ	106
2	Կադրային քաղաքականության և մոտիվացիայի կոմիտե	3 անդամ	18
3	Կորպորատիվ կառավարման և մեթոդոլոգիայի կոմիտե	2 անդամ	9
4	Ռազմավարության կոմիտե	3 անդամ	6

Կոմիտեներինիստերըհրավիրվելենըստանհրաժեշտության՝Կոմիտեինախագահի,և/կամԿոմիտեի անդամի, և/կամ Բանկի շահագրգիռ կառուցվածքային ստորաբաժանման նախաձեռնությամբ: Կոմիտեի նախագահն անձամբ կամ Կոմիտեի քարտուղարի միջոցով այդ մասին տեղեկացրել է Կոմիտեի մյուս անդամներին և խորհրդատուներին/փորձագետներին:

Բանկում կորպորատիվ կառավարման մշակույթի շարունակական բարելավման, ինչպես նաև կորպորատիվ կառավարման ոլորտում Հայաստանի Հանրապետության օրենսդրության և միջազգային լավագույն փորձի ու չափանիշների հետ համապատասխանեցման նպատակով 2025 թվականի ընթացքում վերանայվել են Աուդիտի և ռիսկերի կոմիտեի, ինչպես նաև Կադրային քաղաքականության և մոտիվացիայի կոմիտեի կանոնակարգերը: Նշված վերանայումների շրջանակում, մասնավորապես, հստակեցվել և ամրագրվել են կոմիտեների կազմերին ներկայացվող պահանջները, վերանայվել և խմբագրվել են դրանց իրավասություններն ու նպատակները՝ ուղղված կոմիտեների գործունեության արդյունավետության բարձրացմանն ու վերահսկողական գործառույթների ամրապնդմանը:

4.4 Գործադիր մարմին՝ Վարչություն և Վարչության նախագահ

Բանկի Վարչությունը՝ որպես կոլեգիալ և Վարչության նախագահը՝ որպես միանձնյա գործադիր մարմին, իրականացնում են Բանկի ընթացիկ գործունեության ղեկավարումը՝ որոշումներ կայացնելով օրենսդրությամբ և Բանկի կանոնադրությամբ Բաժնետերերի ընդհանուր ժողովի և Խորհրդի իրավասությանը չվերապահված հարցերով:

Վարչության նախագահի և Վարչության իրավասությունները սահմանազատված են Բանկի Կանոնադրության 31 և 32 Գլուխներով:

Հաշվետու 2025 թվականի ընթացքում Վարչության կազմում կատարվել են մի շարք փոփոխություններ: Վարչությանն են միացել նոր անդամներ՝ Իրավական հարցերի գծով տնօրեն Ռուստամ Բադասյանը, Ֆինանսական տնօրեն Գարեգին Գևորգյանը, ինչպես նաև Փոքր և միջին բիզնեսի տնօրեն Միհրան Մուրադյանը: Վերջինս հետագայում՝ Վարչության անդամ Արտակ Խաչատրյանի լիազորությունների դադարեցումից հետո, ստանձնել է Մանրածախ բիզնեսի տնօրենի պաշտոնը՝ Փոքր և միջին բիզնեսի ղեկավարումը փոխանցելով Արամ Փինաջյանին: Միաժամանակ Վարչության կազմում ընդգրկվել է նաև Արմինե Խաչատրյանը՝ փոխարինելով սեփական դիմումի հիման վրա լիազորությունները դադարեցված Գլխավոր հաշվապահ Հովհաննես Մկրտիչյանին:

2025թ. տարեվերջի դրությամբ Վարչությունը գործում էր հետևյալ կազմով.

	Անուն ազգանուն	Պաշտոն	Որպես Վարչության անդամ (նախագահ/ նախագահի տեղակալ) նշանակման տարեթիվ
1	Անանյան Արտակ Կլիմենտի	Վարչության նախագահ	2018թ.[1]
2	Գյուլազյան Արթուր Էդուարդի	Վարչության նախագահի տեղակալ, փրայվիթ բանկինգի տնօրեն	2013թ.
3	Սարգսյան Դավիթ Ռաֆայելի	Վարչության նախագահի տեղակալ, ներդրումային բիզնեսի տնօրեն	2014թ.
4	Ներսիսյան Լուսինե Ռուբենի	Վարչության անդամ, ռիսկերի կառավարման տնօրեն	2023թ.[2]
5	Գասպարյան Արմեն Արթուրի	Վարչության անդամ, կորպորատիվ բիզնեսի տնօրեն	2015թ.
6	Իսպիրյան Հարություն Զաքարի	Վարչության անդամ, թվայնացման և տաղանդների կառավարման գծով տնօրեն	2015թ.
7	Բադասյան Ռուստամ Վարդանի	Վարչության անդամ, Իրավական հարցերի գծով տնօրեն	2025թ.
8	Խաչատրյան Արմինե Սերյոժայի	Վարչության անդամ, Գլխավոր հաշվապահ	2025թ.
7	Մուրադյան Միհրան Գառնիկի	Վարչության անդամ, մանրածախ բիզնեսի տնօրեն	2025թ.
8	Գևորգյան Գարեգին Արարատի	Վարոչթյան անդամ, Ֆինանսական տնօրեն	2025թ.
9.	Փինաջյան Արամ Էդուարդի	Վարչության անդամ, Փոքր և միջին բիզնեսի տնօրեն	2025թ.

Վարչության անդամների հակիրճ կենսագրությունները ներկայացված են սույն Զեկույցի Հավելված 3-ում:

05 Խորհրդի և Վարչության անդամների վարձատրությունը

«Արդշինբանկ» ԲԲԸ-ն որդեգրել է աշխատակիցների կողմից ապահովված արդյունքներին համարժեք վարձատրության և մոտիվացիայի քաղաքականություն, որը պատշաճ կերպով արտացոլված է նաև վարձատրության և խրախուսման հարաբերությունները կարգավորող ներքին իրավական ակտերում:

Կանոնադրությամբ և Խորհրդի կանոնակարգով ամրագրված են Վարչության նախագահի, նրա տեղակալների և Վարչության այլ անդամների, Խորհրդի կողմից նշանակվող այլ ղեկավարների վարձատրության վճարման կարգն ու պայմանները:

Խորհրդի կանոնակարգի համաձայն Խորհրդի անդամների վարձատրության և (կամ) փոխհատուցումների չափը և վճարման կարգը սահմանվում է տարեկան կտրվածքով՝ Բաժնետերերի Տարեկան Ընդհանուր Ժողովի որոշմամբ հետևյալ սկզբունքների հիման վրա.

Կայունություն – Խորհրդի անդամի վարձատրությունը չպետք է կախվածության մեջ դրվի կարճաժամկետ թիրախների և նպատակների հետ,

Կանխատեսելիություն - վարձատրության կառուցվածքը պետք է լինի պարզ, կանխատեսելի,

1 2017թ.-ից՝ Վարչության նախագահի տեղակալ, ոչ պրոֆիլային ակտիվների կառավարման տնօրեն
2 2017թ.- Գլխավոր հաշվապահ,
2018թ. – Ներքին աուդիտի ծառայության ղեկավար

երկարաժամկետ հեռանկարում՝ կայուն:

Համաչափություն – վարձատրությունը կարող է պայմանավորված լինել խորհրդի անդամների պատասխանատվության ծավալով, Խորհրդին կից կոմիտեներում անդամակցությամբ (նախագահությամբ), աշխատանքի կատարմանը հատկացված ժամանակով, Խորհրդի անդամի համակարգման ոլորտի բարդությամբ, ինչպես նաև Խորհրդի աշխատանքում և Բանկի երկարաժամկետ զարգացման մեջ Խորհրդի անդամի անձնական մասնակցության աստիճանով:

Մրցունակություն - Վարձատրության չափանիշները պետք է պարբերաբար վերանայվեն՝ հաշվի առնելով շուկայի պայմանները, Բանկի ռազմավարությունը և կառավարման զարգացումը:

Համահունչություն կորպորատիվ կառավարմանը - Վարձատրության համակարգը պետք է բխի Բանկի կառավարման կառուցվածքից և կորպորատիվ կառավարման ընդհանուր սկզբունքներից:

Խորհուրդը կարող է Ընդհանուր ժողովի քննարկմանը ներկայացնել Խորհրդի անդամներին վճարվող վարձատրության և (կամ) փոխհատուցման չափի և կարգի վերաբերյալ իր առաջարկությունները: Ընդհանուր ժողովի կողմից Խորհրդի անդամներին վճարվող վարձատրության չափի սահմանման մեխանիզմը պետք է ապահովի Խորհրդի անդամների գործողությունների անկախությունն ապահովվելու հնարավորությունը: Հարկ է ավելացնել, որ Խորհրդի անդամին կարող է տրամադրվել լրացուցիչ վարձատրություն նրա ակտիվ աշխատանքի, Խորհրդին առընթեր ստեղծվող մարմիններում նրա մասնակցության, ճշտապահության և այլ դրական արդյունք ապահովելու դեպքում:

Վարչության կանոնակարգի համաձայն, Վարչության անդամի աշխատավարձն ու դրան հավասերցված վճարումները երաշխավորված դրամական վարձատրություն են վերջինիս վերապահված պարտականությունների կատարման համար՝ որոշվող Բանկի ռազմավարական նպատակների և Խորհրդի կողմից հաստատված կատարողական պլանի իրականացման Վարչության անդամի մասնակցության չափի, դերակատարման, պատասխանատվության մակարդակի, պահանջվող մասնագիտական գիտելիքների ու փորձի, շարունակական զարգացման, շուկայում ձևավորված համադրելի վարձատրության չափորոշիչների, ինչպես նաև Վարչության նախագահի և Գլխավոր հաշվապահի կողմից Օրենքով սահմանված կարգով և ժամկետներում ներկայացվող եռամսյակային հաշվետվությունների և հեռանկարային զարգացման ծրագրերի հիման վրա և սահմանվող Բանկի ու Վարչության անդամի միջև կնքվող աշխատանքային պայմանագրով:

Վարչության անդամներին Բանկի գործունեության հետ կապված այլ ծախսերի, այդ թվում՝ ճանապարհածախսեր, կացության և այլ ծախսեր (աշխատանքային այցեր, միջոցառումներում մասնակցություն) փոխհատուցումն իրականացվում է Բանկի և Վարչության անդամի միջև աշխատանքային հարաբերությունների շրջանակներում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Բանկի արտաքին աուդիտը

Բանկի ֆինանսատնտեսական գործունեության աուդիտն իրականացնող անկախ աուդիտորական կազմակերպության ընտրության գործընթացը սահմանվում է **«Ֆինանսական կազմակերպությունների ֆինանսատնտեսական գործունեության աուդիտ իրականացնող անձին ներկայացվող չափանիշները» ՀՀ ԿԲ Խորհրդի Կանոնակարգ 22-ով, Բանկի** Խորհրդի կողմից հաստատված «Արտաքին աուդիտորական կազմակերպության ընտրության կարգով» և Վարչության կողմից հաստատված «**Արտաքին աուդիտորական կազմակերպության ընտրության ընթացակարգով**»:

Որպես հաշվետու 2025թ. ֆինանսատնտեսական գործունեության աուդիտ իրականացնող անձ՝ «Արդշինբանկ» ԲԲԸ անկախ աուդիտորական կազմակերպության ընտրության մրցութային հանձնաժողովի 07.08.2025թ. հատուկ նիստի Մրցութային արդյունքների մասին թիվ 2 արձանագրության հիման վրա Խորհրդին կից Աուդիտի և Ռիսկերի կոմիտեի 13.08.2025թ. թիվ 82-1 որոշմամբ տրված նախնական հավանությամբ Խորհրդի 04.09.2025թ. թիվ 11/25-01 որոշմամբ ներկայացված առաջարկությամբ Բանկի Բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովի 22.09.2025թ. թիվ 2025-6-1 որոշմամբ հաստատվել է «Էրնսթ ընդ Յանգ» փակ բաժնետիրական ընկերությունը, որի վարձատրության չափը Խորհրդի վերոնշյալ որոշմամբ սահմանվել է 90,000,000 ՀՀ դրամի գումարի չափով, առանց ԱԱՀ:

Աուդիտորական կազմակերպության անկախության փաստի ստուգումը, ինչպես նաև Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված ֆինանսական և տեխնիկական չափանիշներին համապատասխանության գնահատումն իրականացվում է Արտաքին աուդիտորական կազմակերպության ընտրության մրցութային հանձնաժողովի կողմից հայտարարված մրցույթի շրջանակներում:

Հաստատված «Էրնսթ ընդ Յանգ» ՓԲԸ ընկերությունը վերլուծվել և գնահատվել է ըստ Կանոնակարգ 22-ով սահմանված պահանջների և «Արտաքին աուդիտորական կազմակերպության ընտրության ընթացակարգի» 5.6 կետով սահմանված հետևյալ չափանիշների.

Անկախության չափանիշներ.

- Աուդիտորական կազմակերպությունը չի իրականացնում Բանկի ֆինանսատնտեսական գործունեության աուդիտն անընդմեջ ավելի, քան 6 տարի,
- տվյալ աուդիտորական կազմակերպության պատասխանատու աուդիտորը չի իրականացնելու Բանկի աուդիտն ավելի, քան 3 տարի,
- Աուդիտորական կազմակերպությունը, որն իրականացրել է Բանկի ֆինանսատնտեսական գործունեության աուդիտն անընդմեջ ավելի, քան 6 տարի չի իրականացնելու Բանկի աուդիտն առնվազն 3 տարի:

Տեխնիկական չափանիշներ՝

- աուդիտորական կազմակերպության ճանաչվածության աստիճան (հեղինակություն)
- աուդիտորական կազմակերպության աշխատանքային փորձ
- պատասխանատու աուդիտորի որակավորման մակարդակ և աշխատանքային փորձ՝ հաշվի առնելով բանկային աուդիտի բնագավառում աշխատանքային փորձն ու ստաժը, որակավորման և մասնագիտական վերապատրաստման վկայականները.
- աուդիտի աշխատանքներին մասնակցող մասնակիցների որակավորման մակարդակ և աշխատանքային փորձ՝ հաշվի առնելով բանկային աուդիտի բնագավառում աշխատանքային փորձն ու ստաժը, որակավորման և մասնագիտական վերապատրաստման վկայականները.
- Բանկի հետ համագործակցություն՝ հաշվի առնելով Բանկի և աուդիտորական կազմակերպության միջև առկա աշխատանքային փորձը, մասնավորապես վերջինիս կողմից նախկինում մատուցած աուդիտորական ծառայությունների որակը

Ֆինանսական չափանիշներ՝

- աուդիտի ծառայության արժեքը՝ հարկերը և ծախսերը ներառյալ և զուտ աուդիտի արժեք
- աուդիտորական ծառայության դիմաց վճարման ձևեր (նախավճար, կատարողական ակտի ստորագրումից հետո, ըստ փուլերի)
- մասնագիտական գործունեության ձախողման կամ պարտականությունների չկատարման ռիսկի ապահովագրություն՝ ռիսկերի բավարար փոխհատուցման պահանջի տեսքով:

06 Բանկի բաժնետերերի իրավունքները

Բանկի հասարակ (սովորական) և արտոնյալ բաժնետոմսերի սեփականատեր հանդիսացող բաժնետերերի իրավունքները թվարկված են Բանկի Կանոնադրության 9 և 11րդ Գլուխներում, մասնավորապես.

Բանկի սովորական բաժնետոմսերի սեփականատեր հանդիսացող բաժնետերերը իրավունք ունեն՝

1. **անձամբ կամ լիազորված ներկայացուցչի միջոցով մասնակցել Ընդհանուր ժողովներին և քվեարկել՝ ժողովի իրավասությանը վերապահված բոլոր հարցերով.**
2. **քվեարկության ժամանակ օգտվել ձայնի իրավունքից՝ իր կողմից լրիվ վճարված բաժնետոմսերի քանակին համապատասխան.**
3. **անձամբ կամ լիազորված ներկայացուցչի միջոցով մասնակցել Բանկի կառավարմանը.**
4. **ստանալ շահութաբաժիններ՝ Կանոնադրությամբ սահմանված կարգով.**
5. **Բանկի լուծարման դեպքում ստանալ Բանկի գույքի իր հասանելիք մասը.**
6. **իրացնել Բանկի կողմից տեղաբաշխվող լրացուցիչ բաժնետոմսերի ձեռքբերման նախապատվության իրավունքը՝ կանոնադրական հիմնադրամում իրենց բաժնեմասերին համամասնորեն.**
7. **ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով ստանալ տեղեկություններ Բանկի գործունեության վերաբերյալ.**
8. **ստանալ Բանկի վերջին տարեկան հաշվետվության և արտաքին աուդիտի եզրակացության պատճենները, ծանոթանալ հաշվիչ հանձնաժողովի արձանագրություններին.**
9. **դիմել դատարան՝ Ընդհանուր ժողովի կողմից ՀՀ օրենսդրության պահանջների խախտմամբ ընդունված որոշումների բողոքարկման նպատակով.**
10. **նվիրել կամ այլ ձևով այլ անձանց անհատույց փոխանցել իրենց սեփականություն հանդիսացող Բանկի բաժնետոմսերը.**
11. **վաճառել կամ այլ ձևով այլ անձանց հատուցմամբ փոխանցել իրենց սեփականություն հանդիսացող Բանկի բաժնետոմսերը.**
12. **պահանջել Բանկից հետ գնել իրենց բաժնետոմսերը՝ ՀՀ օրենսդրությամբ և Կանոնադրությամբ սահմանված դեպքերում և կարգով.**
13. **ծանոթանալ Ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող անձանց ցուցակին.**
14. **Բանկի սովորական տեղաբաշխված բաժնետոմսերի 2 (երկու) և ավելի տոկոս ունենալու դեպքում՝ ֆինանսական տարվա ավարտից հետո 30 (երեսուն) օրվա ընթացքում երկուսից ոչ ավելի առաջարկություններ ներկայացնել տարեկան ժողովի օրակարգի վերաբերյալ, ինչպես նաև առաջարկել Խորհրդի անդամների թեկնածություններ,**
15. **Բանկի քվեարկող տեղաբաշխված բաժնետոմսերի առնվազն 5 (հինգ) տոկոս ունենալու դեպքում՝**

- պահանջել գումարել Խորհրդի նիստ՝ պահանջի մեջ նշված հարցերի քննարկման համար.
- պահանջել անցկացնել Բանկի ֆինանսատնտեսական գործունեության ստուգում արտաքին աուդիտորի կողմից: Այդ դեպքում Բանկի արտաքին աուդիտ իրականացնող անձին ընտրում, նրա հետ պայմանագիր են կնքում, նրա ծառայությունների դիմաց վճարում են ստուգում պահանջող բաժնետերերը, ընդ որում, նրանք կարող են Բանկից պահանջել իրենց կատարած ծախսերի հատուցում, եթե այդ ստուգումն Ընդհանուր ժողովի որոշմամբ արդարացված է եղել Բանկի համար:

16. **Ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու օրվա դրությամբ Բանկի տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի 10 (տասը) և ավելի տոկոս ունենալու դեպքում՝**

- առանց ընտրության ընդգրկվել Խորհրդի կազմում կամ դրանում նշանակել իր ներկայացուցչին.
- պահանջել գումարել Բանկի բաժնետերերի արտահերթ Ընդհանուր ժողով, իսկ Կանոնադրության 18.9 կետով սահմանված դեպքում՝ նաև ինքնուրույն գումարել արտահերթ Ընդհանուր ժողով,

17. **օգտվել ՀՀ օրենսդրությամբ, Կանոնադրությամբ և Ընդհանուր ժողովի՝ իր լիազորությունների սահմաններում ընդունած որոշումներով նախատեսված այլ իրավունքներից:**

Բանկի արտոնյալ բաժնետոմսերի սեփականատեր հանդիսացող բաժնետերերը իրավունք ունեն՝

- ստանալ շահութաբաժին Կանոնադրությամբ սահմանված կարգով,
- իրականացնել ՀՀ օրենսդրությամբ իրենց վերապահված այլ լիազորություններ:

07 Բանկի կողմից կորպորատիվ կառավարման ոլորտում ձեռքբերված ծառայություններ

Բանկի և FMO-ի (Nederlandse Financierings-Maatschappij voor Ontwikkelingslanden N.V., Dutch Entrepreneurial Development Bank, Հոլանդական ձեռնարկատիրական զարգացման բանկ) միջև համագործակցությունը, որը մեկնարկել է դեռևս 2023 թվականի վերջին, ներառում է կորպորատիվ կառավարման, ինչպես նաև բնապահպանական և սոցիալական կառավարման համակարգերի գնահատման ու կատարելագործմանն ուղղված խորհրդատվական աշխատանքներ:

FMO-ի փորձագետների կողմից իրականացվել է Բանկի կորպորատիվ կառավարման համակարգի, ինչպես նաև 2022 թվականի կեսից ներդրված բնապահպանական և սոցիալական կառավարման համակարգի համապարփակ ուսումնասիրություն: Խորհրդատվական աշխատանքներն իրականացվել են ավելի քան կես տարվա ընթացքում՝ FMO-ի երկու մասնագիտական թիմերի ներգրավմամբ՝ կորպորատիվ կառավարման փորձագետների թիմի և բնապահպանական ու սոցիալական կառավարման համակարգի մասնագիտական թիմի կողմից:

Ուսումնասիրության արդյունքում FMO-ի փորձագետները Բանկին ներկայացրել են կորպորատիվ կառավարման համակարգի բարելավման պլան, ինչպես նաև բնապահպանական և սոցիալական կառավարման համակարգի կատարելագործման պլան՝ նպատակ ունենալով համապատասխանեցնել Բանկում գործող համակարգերը միջազգային լավագույն փորձին և չափանիշներին:

Ներկայացված փաստաթղթերը հաստատվել են Բանկի գործադիր մարմնի և Խորհրդի կողմից՝ սահմանելով յուրաքանչյուր գործողության համար հստակ պատասխանատուներ և իրականացման ժամկետներ: Ներկայումս այդ ծրագրերով նախատեսված միջոցառումների մեծ մասն արդեն իրականացվել է, իսկ մնացածը՝ հաստատված ժամանակացույցի համաձայն, գտնվում է ներդրման փուլում:

FMO-ի խորհրդատվությամբ որպես Խորհրդի (ինքնա)գնահատման գործընթացին օժանդակող արտաքին խորհրդատու ընտրվել է Silk Road Group BV-ի ներկայացուցիչ Դուրդոնա Կադիրովան, ով 2025 թվականի հունիսից իրականացրել է Բանկի կորպորատիվ կառավարման համակարգի և մշակույթի, ինչպես նաև Խորհրդի և Խորհրդին կից կոմիտեների աշխատանքի կազմակերպման համապարփակ վերլուծություն և 2026թ. տարեսկզբին ներկայացրել համապատասխան հաշվետվություն Խորհրդին:

Բանկը, որդեգրելով կորպորատիվ կառավարման համակարգի շարունակական կատարելագործումն ու միջազգային լավագույն չափանիշներին համապատասխանեցումը որպես ռազմավարական առաջնահերթ ուղղություններից մեկը, մշտապես իրականացնում է կառավարման մարմինների գործունեության արդյունավետության, բիզնես գործընթացների և վերահսկողական մեխանիզմների գնահատում և զարգացում:

Այդ շրջանակում Բանկի կողմից միջազգային բարձր համբավ և փորձառություն ունեցող կազմակերպությանը պատվիրակվել է IPO Readiness Gap Analysis հաշվետվության պատրաստումը՝ նպատակ ունենալով գնահատել Բանկի կորպորատիվ կառավարման, վերահսկողության և գործառնական համակարգերի համապատասխանությունը միջազգային լավագույն փորձին և բաց հանրային ընկերության (IPO) կարգավիճակին անցման ակնկալվող չափանիշներին: Ուսումնասիրության նպատակն էր բացահայտել հնարավոր անհամապատասխանությունները, սահմանել զարգացման առաջնահերթ ուղղությունները և ապահովել շարունակական բարելավման գործընթացը՝ հիմնվելով ներկայացված առաջարկությունների և լավագույն միջազգային պրակտիկայի վրա:

Վերլուծությունն իրականացվել է հետևյալ առանցքային ուղղություններով.

- Ռիսկերի կառավարում, ներքին հսկողություն և ներքին աուդիտ,
- Հաշվետվողականություն և հաշվապահություն,
- Տեղեկատվական տեխնոլոգիաներ,
- Հարկեր:

Նշված համապարփակ գնահատման արդյունքները Բանկը ստացել է 2025 թվականի կեսին, և այդ ժամանակահատվածից սկսած ինտենսիվ և հետևողական աշխատանքներ են իրականացվում կորպորատիվ կառավարման համակարգի, վերահսկողական միջավայրի և ներքին գործընթացների շարունակական զարգացման և կատարելագործման ուղղությամբ: Այս մոտեցմամբ Բանկը վերահաստատում է, որ իր գործունեության հիմքում դրված է ոչ միայն գործող ազգային օրենսդրության և կարգավորող պահանջների ապահովումը, այլ նաև կորպորատիվ կառավարման միջազգային լավագույն չափանիշների և առաջատար փորձի ներդրումն ու դրանց համապատասխան զարգացման շարունակական ձգտումը՝ դրանք դիտարկելով որպես Բանկի երկարաժամկետ ռազմավարական զարգացման կարևոր ուղենիշներ:

08 Կորպորատիվ կառավարման 2025թ. տարեկան հայտարարագիր

«ԱՐԴՇԻՆԲԱՆԿ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՅՏԱՐԱՐԱԳԻՐ

ԳԼՈՒԽ I. ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ, ՀԱՎԱՍԱՐ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ և ՆՇԱՆԱԿԱԼԻՑ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՍԿՁԲՈՒՆՔ I.1. Կազմակերպության կառավարմանը մասնակցելու մասնակցի իրավունքը

Կազմակերպությունը պարտավոր է ապահովել հավասար և արդարացի վերաբերմունք նույն տեսակի (դասի) բոլոր բաժնետոմսերի սեփականատերերի նկատմամբ՝ նրանց կողմից կազմակերպության կառավարմանը մասնակցելու ու քվեարկելու իրենց իրավունքներն արդյունավետ իրականացնելու, ժողովի օրակարգում ներառված հարցերի վերաբերյալ հիմնավորված դիրքորոշում ձևավորելու և տեղեկացված որոշում կայացնելու համար:

Մասնակիցը պետք է ողջամիտ ժամկետներում բավարար և արդիական տեղեկատվություն ստանա ընդհանուր ժողովի անցկացման ամսաթվի, վայրի, ձևաչափի և օրակարգի մասին, ինչպես նաև հնարավորություն ունենա ծանոթանալ ընդհանուր ժողովում քննարկվելիք որոշումների նախագծերին, փաստաթղթերին և անհրաժեշտ այլ տեղեկատվությանը:

Ընդհանուր ժողովի հրավիրման վայրն ու օրը (ժամը) չպետք է սահմանափակեն ընդհանուր ժողովում մասնակցի մասնակցությունը: Կազմակերպությունը ժողովի գումարման մասին մասնակիցներին ծանուցում է ժողովի գումարման օրվանից առնվազն 21 օր առաջ:

Ընդհանուր ժողովի ծանուցումն ու ընդհանուր ժողովում քննարկվող տեղեկությունների և նյութերի տրամադրումը պետք է հնարավորություն ընձեռեն մասնակցին ընդհանուր ժողովին նախապատրաստվել պատշաճ կերպով և կայացնել տեղեկացված որոշումներ: Ընդհանուր ժողովի հրավիրման մասին հայտարարությունը հրապարակվում է կազմակերպության համացանցային էջում: Սա չի փոխարինում ծանուցման՝ կանոնադրությամբ և օրենքով նախատեսված եղանակներին:

Ընդհանուր ժողովում քննարկվող տեղեկությունների և նյութերի էլեկտրոնային տրամադրումը հնարավոր է, եթե մասնակիցն ունի անխափան հասանելիություն տեղեկատվության համապատասխան կապուղուն կամ տեղեկատվության տրամադրման այդ եղանակն առաջարկվում է մասնակցի կողմից:

Ընդհանուր ժողովի գործընթացները, ձևաչափը և ընթացակարգերը պետք է ապահովեն հավասար վերաբերմունք բոլոր մասնակիցների նկատմամբ: Մասնակիցը պետք է տեղեկացված լինի ընդհանուր ժողովի վարման կանոններին և ընթացակարգերին, այդ թվում՝ քվեարկության ընթացակարգերին:

Ընդհանուր ժողովի վարման կանոնները պետք է ապահովեն ընդհանուր ժողովում ձայների պատշաճ հաշվարկ ու հաշվառում, ինչպես նաև քվեարկության արդյունքների ողջամիտ ժամկետում հրապարակում: Ժողովի վարման կանոնները և ընթացակարգերը պետք է հրապարակվեն կազմակերպության համացանցային էջում:

Մասնակիցը պետք է հնարավորություն ունենա քվեարկել անձամբ կամ լիազորագրով, ինչպես նաև հեռակա կամ հեռավար կարգով:

Մասնակիցների մասնակցությունն ու ներգրավվածությունը հեշտացնելու և դրանց մասնակցության ծախսերը նվազեցնելու ու ժամանակը խնայելու համար ընդհանուր ժողովը կարող է հրավիրվել հեռավար կամ հիբրիդային (ընդհանուր ժողովում մասնակիցների համատեղ ներկայության և հեռավար մասնակցության զուգակցմամբ): Նման ժողովները պետք է անցկացվեն բոլոր մասնակիցների համար տեղեկատվության հավասար հասանելիության և մասնակցության հնարավորությունների ապահովմամբ:

Կազմակերպությունը պետք է ցուցաբերի պատշաճ զգուշավորություն, որպեսզի համատեղ ներկայությամբ ժողովների համեմատությամբ հեռավար ժողովները չնվազեցնեն մասնակիցների՝ խորհրդի և գործադիր մարմնի անդամների հետ հաղորդակցվելու և հարցեր տալու հնարավորությունը:

Անկախ ժողովի հրավիրման և քվեարկության կարգից՝ մասնակիցների ձայներին պետք է տրվի հավասար նշանակություն:

Կազմակերպությունն ապահովում է, որ ընդհանուր ժողովի ընթացքում մասնակիցը հնարավորություն ունենա հարցեր տալ խորհրդի և գործադիր մարմնի անդամներին, ինչպես նաև արտաքին աուդիտորին, եթե դրա եզրակացությունն առկա է ընդհանուր ժողովի նյութերում:

Ընդհանուր ժողովում հարցերին պատասխանելու անհնարինության դեպքում դրանց պատասխանը մասնակցին պետք է ուղարկվի գրավոր ձևով և մյուս մասնակիցներին հասանելի դարձնելու նպատակով տեղադրվի կազմակերպության համացանցային էջում, բացառությամբ գաղտնի տեղեկությունների: Պատասխանի հասանելիությունը մասնակիցներին ապահովելու համար կազմակերպությունը կարող է կիրառել նաև տեղեկատվության տրամադրման այլ միջոցներ:

Հաշվի առնելով օրենսդրական սահմանափակումները՝ ընդհանուր ժողովի ընթացքում մասնակիցները պետք է հնարավորություն ունենան հաղորդակցվել միմյանց հետ, եթե դա անհրաժեշտ է քվեարկության դրված հարցի վերաբերյալ որոշում կայացնելու կամ հարցի էությունը պարզաբանելու համար:

Բանկը բաժնետերերի ընդհանուր ժողովները գումարում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան՝ **Բանկի կանոնադրությանը,** ինչպես նաև **Բանկի բաժնետերերի ընդհանուր ժողովի կազմակերպման և վարման կարգին** (այսուհետ նաև՝ Կարգ) համաձայն:

Այս կարգավորումների համաձայն Բանկի բաժնետերն Ընդհանուր ժողովում մասնակցելու իր իրավունքը կարող է իրականացնել անձամբ կամ լիազորված ներկայացուցչի միջոցով: Բանկը, կարևորելով բաժնետերերի ակտիվ մասնակցությունը ընկերության կառավարման գործում, կիրառում է ընդհանուր ժողովի անցկացման համատեղ ֆիզիկական ներկայության, այդ թվում՝ լիազորված անձի միջոցով, այնպես էլ էլեկտրոնային միջոցներով մասնակցության եղանակները, ինչպես նաև դրանց համադրությունը:

Բանկի կանոնադրության 20-րդ գլխի 20.1 կետի համաձայն Ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող անձինք ժողովի գումարման մասին ծանուցվում են, ինչպես նաև քվեաթերթիկները տրամադրվում են հետևյալ եղանակներից որևէ մեկով. էլեկտրոնային կապի միջոցներով, ներառյալ՝ էլեկտրոնային փոստով, ծրագրային և հավելվածային հարթակներով (ներառյալ՝ բջջային հեռախոսների հավելվածներով), որոնք թույլ են տալիս հավաստիանալ հասցեատիրոջ կողմից դրանք ստանալու մասին, պատվիրված նամակներ (հանձնման մասին ծանուցմամբ) ուղարկելու միջոցով կամ անձամբ հանձնելու միջոցով՝ Ընդհանուր ժողովի գումարման օրվանից առնվազն 21 (քսանմեկ) օր առաջ: Ընդ որում՝ էլեկտրոնային փոստով ծանուցելու դեպքում՝ անձը համարվում է ծանուցված նրա կողմից տրամադրված կամ պաշտոնական (իրավաբանական անձանց ռեգիստրի կողմից գրանցված կամ անձի պաշտոնական ինտերնետային կայքում տեղադրված, ինչպես նաև այլ եղանակով պաշտոնական համարվող) կամ Բանկի կողմից նախապես այդ անձի համար բացված էլեկտրոնային փոստին ուղարկելու պահից հինգերորդ օրը:

Ընդհանուր ժողովի նախապատրաստման ընթացքում բաժնետերերին ներկայացվող տեղեկություններն ու նյութերը թղթային կամ էլեկտրոնային տեսքով ուղարկվում են (տրամադրվում են) բաժնետերերին Ընդհանուր ժողովի մասին ծանուցմամբ՝ ժողովում քննարկվող հարցերին վերաբերող տեղեկություններին և նյութերին ծանոթանալու համար սահմանված կարգով և ծավալով : Ընդհանուր ժողով գումարելու մասին ծանուցումը Կանոնադրությամբ նախատեսված եղանակների հետ մեկտեղ կարող է (Խորհրդի որոշմամբ նախատեսված լինելու դեպքում) իրականացվել, իսկ տարեկան Ընդհանուր ժողովի դեպգում՝ պարտադիր իրականացվում է նաև հրապարակային՝ Բանկի կայքում հայտարարություն տեղադրելու և/կամ մամուլի միջոցով:

Ընդհանուր ժողովի վարման կանոնները և ընթացակարգերը, ի թիվս այլնի, ամրագրված են Կանոնադրության 5-րդ բաժնում: Կանոնադրությունը տեղադրված է Բանկի պաշտոնական կայքէջում:

Բանկը կորպորատիվ իրավահարաբերություններում առանձնահատուկ կարևորություն է տալիս բազմակարծության սկզբունքին, իրավասու անձանց ակտիվ և ներառական մասնակցությանը, ինչպես նաև խնդիրների համակողմանի վերլուծությանը և համապարփակ լուծումների մշակմանը: Այս համատեքստում առանցքային նշանակություն ունի Բանկի բաժնետերերի բովանդակային ներգրավվածությունը Բանկի կառավարման գործընթացներում: Բաժնետերերը մասնակցում են Բանկի կառավարմանը ընդհանուր ժողովների միջոցով, ինչպես նաև իրենց իրավունքների իրացմամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և Բանկի ներքին իրավական ակտերով նախատեսված կարգով:

Բանկը, առաջնորդվելով թափանցիկության և վստահության մշակույթով, շարունակաբար զարգացնում և կատարելագործում է իր հաղորդակցման գործիքակազմը՝ ընդլայնելով տեղեկատվության փոխանակման մեխանիզմները: Բանկը հետևողականորեն ձգտում է ապահովել, որ բաժնետերերը ժամանակին և ամբողջական ձևով ստանան ճշգրիտ, արժանահավատ և փաստարկված տեղեկատվություն, որը կծառայի որպես տեղեկացված և հիմնավորված որոշումների կայացման ամուր հիմք:

Համապատասխանության կարգավիճակ՝ համապատասխանում է:

ՍԿՉԲՈՒՆՔ I.2. Կազմակերպության խորհրդի անդամների թեկնածուների առաջադրման մասնակցի իրավունքը

Կազմակերպության կորպորատիվ կառավարման համակարգը պետք է խթանի մասնակցի արդյունավետ մասնակցությունը խորհրդի անդամների թեկնածուների առաջադրման և խորհրդի անդամների ընտրության գործընթացին:

Խորհրդի անդամի յուրաքանչյուր թեկնածուի ունակություններն ու համապատասխանությունն առաջադրվող պաշտոնին գնահատելու համար մասնակիցը պետք է ողջամիտ ժամկետներում ամբողջական և բավարար տեղեկատվություն ստանա խորհրդի անդամների թեկնածուների մասնագիտական որակավորման և փորձառության, անցյալում և ներկայում զբաղեցրած պաշտոնների, կազմակերպության և դրա հետ փոխկապակցված անձի (անձանց) նշանակալից մասնակից լինելու մասին:

Խորհրդի անդամների ընտրությունը վերապահվում է Ընդհանուր ժողովի բացառիկ իրավասությանը և չի կարող փոխանցվել Բանկի կառավարման այլ մարմնին կամ ղեկավարին:

Բանկի այն բաժնետերերը, որոնք Ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու օրվա դրությամբ տիրապետում են Բանկի տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի 10 (տասը) և ավելի տոկոսին, իրավունք ունեն առանց ընտրության ընդգրկվելու Խորհրդի կազմում կամ դրանում նշանակելու իրենց ներկայացուցչին: Բանկի այն բաժնետերերը, որոնք Ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու օրվա դրությամբ տիրապետում են Բանկի տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի մինչև 10 տոկոսին, կարող են միավորվել և Բանկի տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի 10 և ավելի տոկոսը համալրելու դեպքում՝ առանց Ընդհանուր ժողովի կողմից ընտրության ընդգրկել իրենց ներկայացուցչին Խորհրդի կազմում: Այդ ձևով ներկայացուցչի ընդգրկումը Խորհրդում հնարավոր է միայն Բանկի բաժնետերերի խմբի ստեղծման մասին համապատասխան պայմանագրի առկայության և այդ պայմանագրի վերաբերյալ Ընդհանուր ժողովին տեղեկացնելու դեպքում:

Բանկի տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի 10 տոկոսից պակասին տիրապետող այն բաժնետերերը, որոնք չեն կնքել Կանոնադրությամբ նշված պայմանագիրը, իրավունք ունեն Կանոնադրությամբ սահմանված կարգով՝ առանց Ընդհանուր ժողովի կողմից ընտրության իրենց շահերը ներկայացնող միասնական ներկայացուցչին ընդգրկելու Խորհրդի կազմում:

Ընդհանուր ժողովին Խորհրդի անդամների թեկնածուների վերաբերյալ առաջարկություններ կարող են ներկայացնել Բանկի բաժնետերերը, ինչպես նաև Խորհուրդը: Յուրաքանչյուր թեկնածուի վերաբերյալ նրա կամ նրան առաջարկած անձի կողմից ներկայացվում է Կանոնադրությամբ սահմանված տեղեկություն՝ այդ թվում մասնագիտությունը և կրթությունը, վերջին 10 տարվա ընթացքում զբաղեցրած պաշտոնները, տվյալ պաշտոնում (ընտրվելու) նշանակվելու տարին, ամիսը, ամսաթիվը և պաշտոնից ազատվելու տարին, ամիսը, ամսաթիվը, տվյալ պաշտոնում վերընտրվելու քանակը, ունեցած Բանկի բաժնետոմսերի քանակի մասին, եթե այդ անձիք հանդիսանում են Բանկի բաժնետեր, տեղեկություններ այն իրավաբանական անձանց մասին, որոնցում տվյալ անձը զբաղեցնում է ղեկավար պաշտոն, այդ անձի փոխհարաբերությունների բնույթը Բանկի և Բանկի հետ կապված անձանց հետ, Կանոնադրությամբ և ներքին իրավական ակտերով նախատեսված այլ տվյալներ:

Համապատասխանության կարգավիճակ՝ համապատասխանում է:

ՍԿՉԲՈՒՆՔ I.3. Կազմակերպության խորհրդի և գործադիր մարմնի վարձատրությունը

Մասնակիցը պետք է հնարավորություն ունենա կարծիք հայտնել խորհրդի և գործադիր մարմնի վարձատրության վերաբերյալ, այդ թվում՝ ընդհանուր ժողովում քվեարկության միջոցով:

Խորհրդի և գործադիր մարմնի վարձատրությունը պետք է համահունչ լինի կազմակերպության արժեքներին, կապ

ունենա կազմակերպության կատարողականի և գործունեության երկարաժամկետ արդյունքների, այդ թվում՝ կայունության թիրախների հետ:

Կազմակերպությունը պետք է ունենա խորհրդի և գործադիր մարմնի վարձատրության քաղաքականություն:

Խորհրդի և գործադիր մարմնի վարձատրության քաղաքականությունը, վարձատրության սխեմաները և դրանց փոփոխությունները խորհրդի առաջարկով հաստատվում են ընդհանուր ժողովի կողմից, եթե գործադիր մարմնի մասով այդ իրավասությունը վերապահված չէ խորհրդին:

Խորհրդի և գործադիր մարմնի վարձատրության քաղաքականությունները պետք է բացահայտվեն կազմակերպության համացանցային էջում:

Բանկը որդեգրել է աշխատակիցների կողմից ապահովված արդյունքին համարժեք վարձատրության, մոտիվացման քաղաքականություն, որն անհրաժեշտ չափով արտացոլված է նաև վարձատրության և խրախուսման հարաբերությունները կարգավորող ներքին իրավական ակտերում:

Կանոնադրությամբ, Խորհրդի և Վարչության կանոնակարգերով ամրագրված են Վարչության նախագահի, նրա տեղակալների և Վարչության այլ անդամների, Խորհրդի կողմից նշանակվող այլ ղեկավարների վարձատրության վճարման կարգն ու պայմանները:

Խորհրդի անդամների վարձատրության պայմանները սահմանվում են Ընդհանուր ժողովի կողմից կորպորատիվ կառավարմանը համահունչ՝ այնպիսի սկզբունքների հիման վրա, ինչպիսիք են կայունությունը, կանխատեսելիությունը, համաչափությունը, մրցունակությունը :

Խորհրդի անդամների վարձատրության և (կամ) փոխհատուցումների չափը և վճարման կարգը սահմանվում է տարեկան կտրվածքով՝ տարեկան Ընդհանուր ժողովի որոշմամբ: Խորհուրդը կարող է Ընդհանուր ժողովի քննարկմանը ներկայացնել Խորհրդի անդամներին վճարվող վարձատրությունների և (կամ) փոխհատուցմների կարգի, հաշվարկման եղանակների և սկզբունքների վերաբերյալ իր առաջարկությունները: Ընդհանուր ժողովի կողմից Խորհրդի անդամներին վճարվող վարձատրության չափի սահմանման մեխանիզմն ապահովում է Խորհրդի անդամների գործողությունների անկախությունն ապահովվելու հնարավորությունը: Խորհրդի անդամներին վճարվող վարձատրության չափը սահմանելու ընթացքում Ընդհանուր ժողովը կարող է հաշվի առնել Խորհրդի աշխատանքում և Բանկի երկարաժամկետ զարգացման մեջ Խորհրդի յուրաքանչյուր անդամի անձնական մասնակցության աստիճանը: Հարկ է ավելացնել, որ Խորհրդի անդամին կարող է տրամադրվել լրացուցիչ վարձատրություն նրա ակտիվ աշխատանքի, Խորհրդին առընթեր ստեղծվող մարմիններում նրա մասնակցության, ճշտապահության և այլ դրական արդյունք ապահովելու դեպքում: Որպես Խորհրդի անդամի աշխատանքի որակի չափորոշիչներ կարող են ծառայել նաև Խորհրդի նիստերին պատրաստվելու ընթացքում անդամի ճշտապահությունը, Խորհրդի նիստերի միջև ընկած ժամանակահատվածում նրա ակտիվությունը, մասնավորապես՝ Բանկի ռազմավարության և զարգացման նոր ուղղություններ փնտրելու հարցերում:

Կանոնադրության համաձայն Խորհրդի անդամների վարձատրության չափը սահմանվում է Ընդհանուր ժողովի կողմից, իսկ Վարչության նախագահի, նրա տեղակալների, գլխավոր հաշվապահի և Վարչության այլ անդամների վարձատրության պայմանների հաստատումը Խորհրդի իրավասության ներքո է:

Վարչության անդամների աշխատավարձի չափը, վճարման ժամկետներն ու վարձատրության այլ պայմանները սահմանվում են Բանկի խորհրդի կողմից: Վարչության անդամներին վճարվող վարձատրության չափը սահմանելու և պայմանագրի գործողության ընթացքում վերանայելու ընթացքում Խորհուրդը կարող է հաշվի առնել նաև Բանկի աշխատանքում և երկարաժամկետ զարգացման մեջ Վարչության յուրաքանչյուր անդամի անձնական մասնակցության աստիճանը:

Համապատասխանության կարգավիճակ՝ համապատասխանում է:

ՍԿՁԲՈՒՆՔ 1.4 Շահաբաժին ստանալու մասնակցի իրավունքը

Կազմակերպությունը միևնույն տեսակի (դասի) բաժնետոմսերի սեփականատերերի համար պետք է ապահովի հավասար և արդար վերաբերմունք մասնակցելու կազմակերպության շահույթի բաշխմանը շահաբաժին ստանալու միջոցով:

Կազմակերպությունը պետք է ընդունի շահաբաժինների վճարման քաղաքականություն, որը պետք է ներառի վճարվելիք շահաբաժնի նվազագույն գործակիցը (payout ratio): Այն կարող է հավասար լինել նաև զրոյի: Շահաբաժինների վճարման քաղաքականությունը մշակում և հաստատում է խորհուրդը:

Շահաբաժինների վճարման ընթացակարգերը պետք է ապահովեն հավասար վերաբերմունք միևնույն տեսակի (դասի) բաժնետոմսերի սեփականատերերի նկատմամբ:

Շահաբաժինների վճարման քաղաքականությունը պետք է հրապարակվի կազմակերպության համացանցային էջում:

Բանկի Խորհրդի կողմից հաստատված Շահութաբաժնային քաղաքականությունը իրագործվում է Կանոնադրությամբ, Խորհրդի կանոնակարգով, Բանկի Ընդհանուր ժողովի կազմակերպման և վարման կարգով սահմանված ընթացակարգերով:

Բանկն ինքնուրույն է որոշում իր զուտ շահույթի բաշխման սկզբունքները: Բանկի հաշվեկշռային և զուտ շահույթը որոշվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով: Բանկի զուտ շահույթը (կուտակված շահույթը) մնում է Բանկի տիրապետման ներքո և Ընդհանուր ժողովի որոշմամբ կարող է ուղղվել պահուստներ և այլ հիմնադրամներ ձևավորելու համար կամ բաշխվել բաժնետերերի միջև շահութաբաժինների տեսքով, ինչպես նաև ՀՀ օրենսդրության, Ընդհանուր ժողովի որոշումների և Բանկի ներքին իրավական ակտերի համաձայն օգտագործվել այլ նպատակներով:

Բանկն իրավունք ունի որոշում ընդունելու (հայտարարելու) իր մասնակիցներին եռամսյակային, կիսամյակայինկամտարեկանշահութաբաժիններիվճարմանմասին:Տարեկանշահութաբաժինների վճարման, շահութաբաժնի չափի, դրա վճարման ձևի և ժամկետի մասին որոշումն ընդունում է Ընդհանուր ժողովը՝ Խորհրդի առաջարկությամբ: Միջանկյալ (եռամսյակային և կիսամյակային) շահութաբաժինների վճարման, շահութաբաժնի չափի, դրա վճարման ձևի և ժամկետի մասին որոշումն ընդունում է Խորհուրդը (ընդ որում, միջանկյալ շահութաբաժինների վճարման ժամկետը սահմանվում է ոչ շուտ, քան տվյալ որոշման ընդունումից 30 (երեսուն) օր հետո):

Բանկի սովորական և արտոնյալ բաժնետոմսերի դիմաց շահութաբաժինները վճարվում են դրամով: Բանկի թողարկած արտոնյալ բաժնետոմսերի դիմաց վճարվող շահութաբաժնի չափը, դրա հաշվարկման և վճարման կարգն ու ժամկետները սահմանված են Կանոնադրության 9-րդ Գլխում:

Բանկն իր կայքէջում հրապարակում է Շահութաբաժնային քաղաքականությունը և շահութաբաժինների վճարման վերաբերյալ որոշման մասին տեղեկատվություն՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված կարգով, ինչն ապահովում է շահութաբաժինների վճարման մեխանիզմի թափանցիկության սկզբունքը (Շահութաբաժնային քաղաքականության 3.6-րդ կետ): Բանկի շահութաբաժնային քաղաքականությունը հասանելի է Բանկի պաշտոնական կայքէջում:

Համապատասխանության կարգավիճակ՝ համապատասխանում է:

ՍԿՁԲՈՒՆՔ 1.5 Նշանակալից մասնակցի պարտականությունները

Կազմակերպությունն ի շահ նշանակալից մասնակիցների կամ անմիջականորեն նշանակալից մասնակիցների կողմից կատարվող չարաշահումներից պետք է պաշտպանի փոքր բաժնեմասնակցություն ունեցող մասնակիցներին:

Կազմակերպության նշանակալից մասնակիցը պարտավոր է՝

1. բացահայտել կազմակերպության հետ կնքվող գործարքներում կամ կազմակերպության վրա ուղղակիորեն ազդող հարցերում ուղղակի, անուղղակի կամ երրորդ անձանց անունից հանդես գալու իր հնարավոր էական շահը և չմասնակցել տվյալ գործարքի կամ հարցի հետ կապված որոշման ընդունմանը,
2. բացահայտել խորհրդի և գործադիր մարմնի անդամների հետ իր ունեցած փոխկապակցվածությունը:

ԿանոնագրքինշվածսկզբունքիպահանջներըապահովվումենԲանկիԽորհրդիկողմիցհաստատված Բանկի հետ կապված անձանց հետ գործարքների կնքման և Շահերի բախման կանխարգելման և կառավարման կարգերով: Նշված իրավական ակտերով սահմանվում են շահագրգռվածության առկայությամբ գործարքների կնքման կարգը, պայմանները, շահագրգռվածության առկայության մասին տեղեկատվության բացահայտման պահանջները:

Ի հավելումն վերոնշյալի Կանոնադրության 17-րդ և 23-րդ գլուխներով սահմանված է Ընդհանուր ժողովի և

Խորհրդի իրավասությունը՝ Բանկերի և Բանկային գործունեության մասին ՀՀ օրենքի 39[5] հոդվածով նախատեսված՝ շահագրգռվածության առկայությամբ գործարքների կնքման մասին որոշումների ընդունման վերաբերյալ:

Համապատասխանության կարգավիճակ՝ համապատասխանում է:

ԳԼՈՒԽ II. ԽՈՐՀՈՒՐԴ

ՍԿԶԲՈՒՆՔ II.1 Խորհրդի առանցքային գործառույթները

Կազմակերպությունը պետք է առաջնորդվի արդյունավետ և կառուցողական խորհրդի կողմից, որի դերն է նպաստել կազմակերպության երկարաժամկետ հաջողությանը, մասնակիցների համար արժեքի ստեղծմանը և կազմակերպության շահակիցներին աջակցմանը:

Կազմակերպության կորպորատիվ կառավարման համակարգում իր դերն արդյունավետ կատարելու համար խորհուրդն ապահովում է հետևյալ առանցքային գործառույթների իրականացումը.

1. **կազմակերպության նպատակների, գործունեության սկզբունքների, կորպորատիվ արժեքների սահմանումը,**
2. **կորպորատիվ ռազմավարության, հիմնական գործողությունների պլանների, տարեկան բյուջեների և գործարար ծրագրերի դիտարկումն ու ուղղորդումը, կատարողականի թիրախային ցուցանիշների սահմանումը, կորպորատիվ ծրագրերի իրագործման և գործունեության, կապիտալ ծախսերի, ձեռքբերումների և վաճառքների վերահսկումը,**
3. **գործադիր մարմնի ձևավորումը, գործունեության վերահսկումը, անհրաժեշտության դեպքում լիազորությունների դադարեցումը, վարձատրության և դրա պայմանների որոշումն ու համապատասխանեցումը կազմակերպության երկարաժամկետ նպատակներին, այդ թվում՝ կայունության թիրախներին, և սերնդափոխության (իրավահաջորդության) պլանավորման վերահսկումը,**
4. **խորհրդի անդամների վարձատրության և դրա պայմանների վերաբերյալ ընդհանուր ժողովին առաջարկությունների ներկայացումը,**
5. **հաշվապահական հաշվառման և ֆինանսական ու ոչ ֆինանսական հաշվետվողականության ամբողջականության, ներառյալ՝ ներքին ու արտաքին աուդիտի անկախության, վերահսկման համապատասխան համակարգերի, մասնավորապես՝ ռիսկերի կառավարման, ֆինանսական ու գործառնական հսկողության, համապատասխանության ապահովումը,**
6. **կառավարման արդյունավետության մշտադիտարկումը և, ըստ անհրաժեշտության, փոփոխությունների իրականացումը,**
7. **խորհրդի և գործադիր մարմնի անդամների և մասնակիցների շահերի հնարավոր բախումների, ներառյալ՝ կազմակերպության ակտիվների ոչ իրավաչափ օգտագործման և շահագրգռվածության առկայությամբ գործարքների վերահսկումն ու կառավարումը,**
8. **կազմակերպության մասին տեղեկատվության բացահայտման և հաղորդակցության վերահսկումը, ինչպես նաև կազմակերպության ներքին իրավական ակտերով իրեն վերապահված այլ գործառույթներ:**

Բանկի խորհուրդը կարևոր դերակատարություն ունի Բանկի երկարաժամկետ զարգացման ռազմավարական ուղղորդման գործում՝ ապահովելով բոլոր շահառուների շահերի պաշտպանությունը: Խորհուրդը գործում է բարեխղճորեն՝ առաջնորդվելով պատասխանատվության, թափանցիկության և հաշվետվողականության սկզբունքներով, կատարում է Հայաստանի Հանրապետության Կորպորատիվ կառավարման կանոնագրով սահմանված իր առանցքային գործառույթները, մասնավորապես.

1. Կազմակերպության նպատակների, գործունեության սկզբունքների, կորպորատիվ արժեքների սահմանում.

Խորհուրդն իր իրավասությունների շրջանակներում իրականացնում է Բանկի գործունեության ընդհանուր ղեկավարումը: Խորհրդի իրավասությունները սահմանված են Կանոնադրության 23-րդ գլխով, Խորհրդի կանոնակարգով, Բանկի ներքին իրավական այլ ակտերով:

2. Կորպորատիվ ռազմավարության, հիմնական գործողությունների պլանների, տարեկան բյուջեների և գործարար ծրագրերի դիտարկումն ու ուղղորդումը, կատարողականի թիրախային ցուցանիշների սահմանումը, կորպորատիվ ծրագրերի իրագործման և գործունեության, կապիտալ ծախսերի, ձեռքբերումների և վաճառքների վերահսկում.

Բանկի Խորհուրդը մշակում է Բանկի ռազմավարական և ընդհանուր տնտեսական զարգացման քաղաքականությունը և վերջինիս իրականացման նկատմամբ սահմանում պատշաճ հսկողություն, հաստատում է Բանկի տարեկան ծախսերի նախահաշիվը և դրա կատարողականը:

Բանկի ռազմավարական զարգացման և ընդհանուր տնտեսական քաղաքականության մշակման, վերջինիս իրականացման նկատմամբ ընդհանուր հսկողության սահմանման, Բանկի գործունեության հեռանկարային և գերակա ուղղությունների սահմանման հետ առնչվող հարցերում Խորհուրդը հաստատում է Բանկի ռազմավարական ծրագիրը, առնվազն տարին մեկ անգամ քննարկում (վերանայում) է Բանկի ռազմավարությունը և անհրաժեշտության դեպքում վերջինիս փոփոխության հարցը, հաստատում է Բանկի տարեկան եկամուտների և ծախսերի նախահաշիվը:

3. Գործադիր մարմնի ձևավորում, գործունեության վերահսկում, անհրաժեշտության դեպքում լիազորությունների դադարեցում, վարձատրության և դրա պայմանների որոշումն ու համապատասխանեցումը կազմակերպության երկարաժամկետ նպատակներին, այդ թվում՝ կայունության թիրախներին, և սերնդափոխության (իրավահաջորդության) պլանավորման վերահսկում.

Խորհուրդը սահմանում է Վարչության քանակական կազմը, նշանակում է Վարչության նախագահին, նրա տեղակալներին, Վարչության անդամներին, գլխավոր հաշվապահին, տնօրեններին, ծառայությունների և դեպարտամենտների ղեկավարներին, վաղաժամկետ դադարեցնում է նրանց լիազորությունները, ինչպես նաև Վարչության նախագահի, նրա տեղակալների և Վարչության այլ անդամների, Խորհրդի կողմից նշանակվող այլ ղեկավարների վարձատրության կարգն ու պայմանները:

Բանկն ունի կայունության ռազմավարություն, որը հաստատվել է Բանկի խորհրդի կողմից և ներառում է Բանկի կարճաժամկետ և միջնաժամկետ ռազմավարական կայունության նպատակները: 2025 թվականին պատասխանատու ստորաբաժանման համար սահմանվել են կայունության թիրախներ: Գործադիր մարմնի վարձատրությունը համապատասխանեցվել է կայունության թիրախներին:

Բանկի Խորհրդի կողմից հաստատվել, այնուհետև՝ Բանկի պաշտոնական կայքէջում հրապարակվել է 2024թ. Կենսակայունության տարեկան հաշվետվությունը:

Բանկը, կառավարման շարունակականությունն ու կայունությունն ապահովելու նպատակով, բարձր առաջնահերթություն է տալիս կառավարման մարմինների սերնդափոխության հուսալի և

համակարգված պլանավորմանը: Բանկի և FMO-ի միջև ռազմավարական համագործակցությամբ ձևավորված Կորպորատիվ կառավարման բարելավման պլանի բաղկացուցիչ մաս է կազմում Սերնդափոխության ծրագիրը: Այն նախագծվել է՝ հիմնվելով Բանկի երկարաժամկետ ռազմավարական առաջնահերթությունների վրա, և սահմանում է Խորհրդի ու Վարչության օպտիմալ կազմը: Ծրագրում առանցքային տեղ են զբաղեցնում Խորհրդի անկախ անդամներին ներկայացվող պահանջները, ինչպես նաև բնապահպանական ու սոցիալական ռիսկերի (ESG) կառավարման պատասխանատվությունը: Բացի այդ, նախատեսվում են գենդերային ներկայացվածության հստակ թիրախներ, որոնք մոտ ապագայում կապահովեն կին անդամների թվի ավելացում Բանկի կառավարման մարմիններում:

4. Խորհրդի անդամների վարձատրության և դրա պայմանների վերաբերյալ ընդհանուր ժողովին առաջարկությունների ներկայացում.

Բանկի կառավարման մարմինների և ղեկավար անձանց գործունեության նկատմամբ հսկողության իրականացման (մոնիտորինգ) և դրա արդյունավետության գնահատման, ինչպես նաև աշխատակիցների մոտիվացման և խրախուսման համակարգի ձևավորման և կիրառվող մեթոդների մշակման հետ առնչվող հարցերում Խորհուրդը կարող է Ընդհանուր ժողովին ներկայացնել Խորհրդի անդամների վարձատրության պայմանների, հաշվարկման մեխանիզմների և սկզբունքների սահմանման հետ առնչվող հարցը, ընդունել որոշումներ Կանոնադրության համաձայն Խորհրդի կողմից նշանակվող ղեկավար անձանց նկատմամբ խրախուսման և կարգապահական պատասխանատվության միջոցների կիրառման վերաբերյալ, Բանկի ներքին իրավական ակտերով նախատեսված դեպքերում ընդունել որոշումներ առանձին դասերի աշխատողներին պարգևատրելու մասին:

5. Հաշվապահական հաշվառման և ֆինանսական ու ոչ ֆինանսական հաշվետվողականության ամբողջականության, ներառյալ՝ ներքին ու արտաքին աուդիտի անկախության, վերահսկման համապատասխան համակարգերի, մասնավորապես՝ ռիսկերի կառավարման, ֆինանսական ու գործառնական հսկողության, համապատասխանության ապահովում.

Բանկի Խորհուրդը, ի թիվս այլնի, սահմանում է Բանկում ներքին հսկողության ստանդարտները, նշանակում է Բանկի ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարին և անդամներին, ռիսկերի կառավարման գործառույթի իրականացման համար պատասխանատու անձին, համապատասխանության ապահովման գործառույթի իրականացման համար պատասխանատու անձին, ներքին դիտարկումների մարմնի ղեկավարին, վաղաժամկետ դադարեցնում է նրանց լիազորությունները և հաստատում վարձատրության պայմանները, հաստատում է Ներքին աուդիտի, Համապատասխանության ապահովման և Ֆինանսական դիտարկումների տարեկան աշխատանքային ծրագրերը, ապահովում է Բանկի արտաքին աուդիտն իրականացնող անձի ներկայացումը Ընդհանուր ժողովին, սահմանում է Բանկի արտաքին աուդիտն իրականացնող անձին վճարման չափը, անհրաժեշտության դեպքում՝ նախաձեռնում է Բանկում իրականացված աուդիտորական կամ այլ ստուգումների արդյունքում բացահայտված թերությունների վերացմանն ուղղված միջոցառումները ու վերահսկում է դրանց իրականացումը:

Խորհուրդը սահմանում է Բանկի հաշվապահական հաշվառման քաղաքականությունը՝ հաշվապահական հաշվառումը վարելու և ֆինանսական հաշվետվությունները կազմելու նպատակով կիրառվող սկզբունքները, հիմունքները, եղանակները, կանոնները, ձևերը և կարգերը:

6. Կառավարման արդյունավետության մշտադիտարկում և, ըստ անհրաժեշտության, փոփոխությունների իրականացում.

Բանկի Խորհուրդն ապահովում է Բանկի կառավարման արդյունավետությունը, կառավարման համակարգում ձևավորում է հակակշիռների և զսպումների համակարգը, ապահովում է Բանկի գործադիր մարմնի գործունեության և ներքին հսկողության համակարգի նկատմամբ պատշաճ հսկողությունը և գործունեության գնահատումը: Բանկում կառավարման արդյունավետ համակարգի ձևավորման, համապատասխան կազմակերպական կառուցվածքի ստեղծման, Բանկի և վերջինիս կառավարման մարմինների գործունեության (գործունեության արդյունքների) գնահատման, կառավարման անձնակազմի կազմավորման չափորոշիչների սահմանման հետ

առնչվող հարցերում Խորհուրդը, ի թիվս այլնի, Խորհրդին առընթեր ստեղծում է ժամանակավոր կամ մշտական կոմիտեներ, հանձնաժողովներ, հաստատում է նրանց կազմն ու գործունեությունը կանոնակարգող ներքին իրավական ակտերը:

7. Խորհրդի և գործադիր մարմնի անդամների և մասնակիցների շահերի հնարավոր բախումների, ներառյալ՝ կազմակերպության ակտիվների ոչ իրավաչափ օգտագործման և շահագրգռվածության առկայու-թյամբ գործարքների վերահսկում ու կառավարում.

Խորհրդի և գործադիր մարմնի անդամների և մասնակիցների շահերի հնարավոր բախումների առկայությամբ գործարքների նկատմամբ վերահսկողությունն իրականացվում է Խորհրդի կողմից հաստատված Շահերի բախման կանխարգելման և կառավարման կարգի, ինչպես նաև Բանկի Խորհրդի կողմից հաստատված Բանկի հետ կապված անձանց հետ գործարքների կնքման կարգի պահանջներին համապատասխան: Շահագրգռվածության առկայությամբ գործարքների վերահսկման և կառավարման գործընթացը կարգավորում է Բանկի Կանոնադրությամբ և օրենքով:

8. Կազմակերպության մասին տեղեկատվության բացահայտման և հաղորդակցության վերահսկում, ինչպես նաև կազմակերպության ներքին իրավական ակտերով իրեն վերապահված այլ գործառույթներ.

Խորհուրդը վերահսկում է Վարչության և այլ մարմինների ու պաշտոնատար անձանց կողմից հանրային տեղեկություններ տրամադրելու պահանջների իրականացումը: Բանկի կողմից տեղեկատվության հրապարակումը և տրամադրումն իրականացվում է համաձայն Հայաստանի Հանրապետության օրենսդրության, Կանոնակարգ 8/03-ի պահանջների, Տեղեկատվության հրապարակման կարգի և կարգի հիման վրա ընդունված ընթացակարգերի:

Համապատասխանության կարգավիճակ՝ համապատասխանում է:

ՍԿԶԲՈՒՆՔ II.2 Խորհրդի կազմը

Խորհրդի անդամները պետք է ունենան միմյանց լրացնող մասնագիտական տարատեսակ ունակություններ, կրթություն և փորձառություն: Խորհրդի գործունեության արդյունավետության և որոշումների օբյեկտիվության ու հավասարակշռվածության ապահովման նպատակով կազմակերպությունը պետք է ապահովի խորհրդի կազմի բազմազանությունը:

Կազմակերպությունն առաջնորդելու իր դերն ու պարտականություններն արդյունավետորեն և օբյեկտիվորեն իրագործելու համար խորհուրդը պետք է ստանձնի պատասխանատվություն իր կազմի և գործընթացների համար, որոնք թույլ են տալիս խորհրդում հասնել գիտելիքների, հմտությունների, փորձի, բազմազանության և անկախության պատշաճ հավասարակշռվածության:

Խորհուրդը պետք է խրախուսի իր անդամների բազմազանությունը, ներառյալ՝ ոլորտային մասնագիտացումը, կարողությունները, փորձառությունը, տարիքն ու սեռը: Ընդորում՝ խորհրդում յուրաքանչյուր սեռի ներկայացուցիչների թիվը չպետք է պակաս լինի 30%-ից:

Խորհուրդը պետք է սահմանի կազմակերպության բազմազանության քաղաքականությունը, որում կարող է նախատեսել բազմազանության այլ չափանիշներ և թիրախներ:

Կորպորատիվ կառավարման զեկույցում պետք է նկարագրվի բազմազանության քաղաքականությունը, դրա իրագործման միջոցառումները և կատարողականը, քաղաքականության թիրախներին չհասնելու դեպքում հնարավոր պատճառները և դրանք նվազեցնելու համար ձեռնարկված միջոցները:

Խորհրդի ձևավորման քաղաքականությունը ներառված է Կանոնադրության 24-րդ գլխում և Խորհրդի կանոնակարգում:

Խորհրդի կազմում ներգրավված են բանկային ոլորտում կիրառական մասնագիտական տարատեսակ ունակություններ, կրթություն և փորձառություն ունեցող անդամներ: Խորհրդի քանակական կազմը հաստատվում է բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովում՝ հաշվի առնելով Բանկի երկարաժամկետ ռազմավարությունը, բաժնետերերի ժողովի և Խորհրդի կողմից սահմանված Բանկի խնդիրները:

Բանկը կարևորում է բազմակարծությունը, իրավահավասարությունը և ըստ այդմ յուրաքանչյուր սեռի ներկայացուցչի ներդրումը գաղափարների ձևավորման և իրագործման փուլերում: Տվյալ պնդումը հաստատվում է Վարչության կազմում և ընդհանուր Բանկի համակարգում, այդ թվում՝ ղեկավար կազմում, յուրաքանչյուր սեռի ներկայացուցիչների ակտիվ ներգրավմամբ:

2025թ. ընթացքում կորպորատիվ կառավարման համակարգի բարելավման շրջանակում մշակվել է Խորհրդի սերնդափոխության պլանը, որի նպատակն է Բանկի Խորհրդի կազմում պարբերական և չնախատեսված փոփոխությունների կատարման անհրաժեշտության առաջացման դեպքերում Բանկի գործունեության շարունակականության ապահովումը՝ զուգորդված Բանկում կորպորատիվ կառավարման մշակույթի բարելավմամբ, Խորհրդի կազմում հմտությունների և կարողությունների պատշաճ մակարդակի և համադրության ապահովմամբ: Բանկի Խորհրդի սերնդափոխության պլանով սահմանվել են հստակ ուղենշային նպատակներ Բանկի Խորհրդի կազմում գենդերային ներկայացվածության ապահովման ուղղությամբ՝ նվազագույնը 30%, ինչը միտված է կին անդամների ներկայացվածության ավելացմանը և հավասարակշռված կազմի ձևավորմանը:

Համապատասխանության կարգավիճակ՝ համապատասխանում է:

ՍԿՉԲՈՒՆՔ II.3 Խորհրդի ոչ գործադիր անդամները

Խորհրդի ոչ գործադիր անդամները պետք է իրենց կառուցողական վարքագծով խնդիրներ առաջադրեն գործադիր մարմնին, ուղղորդեն կազմակերպության ռազմավարական զարգացումը, գործադիր մարմնին առաջարկեն իրենց խորհրդատվական աջակցությունը:

Ոչ գործադիր անդամները խորհրդում պետք է մեծամասնություն կազմեն:

Կորպորատիվ կառավարման համակարգում ոչ գործադիր անդամի դերը հիմնականում խորհրդին լրացուցիչ փորձառություն հաղորդելն է հետևյալ հարցերում.

1. **կազմակերպության առաջ ծառացած մարտահրավերների ընկալումը և աջակցությունը կազմակերպության ռազմավարական զարգացման հարցում,**
2. **գործադիր մարմնի վերահսկումը և կատարողականի գնահատումը,**
3. **տեղեկատվության արժանահավատության, ներքին հսկողության համակարգի, ռիսկերի կառավարման հուսալիության, ֆինանսական և ոչ ֆինանսական հաշվետվությունների արժանահավատության ապահովումը,**
4. **խորհրդի և գործադիր մարմնի սերնդափոխության (իրավահաջորդության) պլանավորումը, գնահատման ու վարձատրության քաղաքականությունների ու համակարգերի ձևավորումը:**

Խորհրդի բոլոր անդամները ոչ գործադիր են և անկախ են Բանկի գործադիր մարմնից: Խորհուրդը հաշվետու 2025թ. ավարտի դրությամբ կազմված է 6 ոչ գործադիր անդամից:

Համապատասխանության կարգավիճակ՝ համապատասխանում է:

ՍԿՉԲՈՒՆՔ II.4 Խորհրդի անկախ անդամները

Խորհուրդը պետք է դիտարկի բավարար թվով խորհրդի անկախ անդամների առաջադրման հարցը, որոնք ունակ են կատարել անկախ դատողություններ:

Խորհրդի անդամի անկախության ապահովմանը միտված սահմանափակումները պետք է գործեն խորհրդի անդամի պաշտոնավարման ողջ ժամանակահատվածում:

Խորհուրդը պետք է սահմանի խորհրդի անկախ անդամի վարքագծի կանոններ և խորհրդի անդամի որոշումների վրա հնարավոր ազդեցություն ունեցող հարաբերություններ կամ հանգամանքներ, որոնց անտեսումը կարող է կասկածելի դարձնել խորհրդի անդամի անկախ լինելու փաստը:

Խորհրդի առնվազն մեկ երրորդը պետք է լինի անկախ: Եթե մեկ երրորդը բնական թիվ չէ, ապա խորհրդի անկախ անդամների թիվ է համարվում մեկ երրորդին առավել մոտ ամբողջ թիվը:

Խորհրդի անկախ անդամը պարտավոր է ձեռնպահ մնալ իր անկախությունը վտանգող ցանկացած գործողությունից, իսկ անկախության կորստի դեպքում պարտավոր է այդ մասին տեղեկացնել խորհրդին՝ բացահայտելով պատճառները:

Խորհուրդը կորպորատիվ կառավարման տարեկան զեկույցում պետք է բացահայտի տեղեկատվություն անկախ

անդամների և անկախության չափանիշներին նրանց համապատասխանության մասին:

Հաշվետու 2025թ. ավարտի դրությամբ Խորհրդի գործող 6 անդամից 4 անդամ անկախ են՝ ապահովելով Խորհդի կազմի 2/3 մասի անկախություն և գերազանցելով ինչպես ՀՀ օրնսդրության, այնպես էլ Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված նվազագույն պահանջները:

Խորհրդի անդամի անկախության չափանիշները սահմանված են Խորհրդի կանոնակարգով: Չափանիշների մշակման համար հիմք են ընդունել ինչպես ՀՀ օրենսդրական պահանջները, այնպես էլ միջազգային լավագույն փորձը՝ մասնավորապես Միջազգային ֆինանսական կորպորացիայի կողմից սահմանվող անկախ խորհրդի անդամի համար սահմանվող չափանիշները:
Համապատասխանության կարգավիճակ՝ համապատասխանում է:

ՍԿՉԲՈՒՆՔ II.5 Խորհրդի նախագահը

Խորհուրդը ղեկավարում է նախագահը, ով պատասխանատու է խորհրդի արդյունավետ գործունեության համար: Նախագահը պետք է ունենա անկախ և անաչառ դատողություն, խթանի խորհրդի և կազմակերպության գործունեության թափանցիկությունն ու խորհրդում քաջալերի բանավեճի մշակույթը:

Նախագահը պետք է նպաստի խորհրդի գործադիր և ոչ գործադիր անդամների միջև կառուցողական հարաբերությունների ձևավորմանը և ապահովի, որ խորհրդի ոչ գործադիր անդամները տեղեկացված որոշումներ կայացնելու համար ժամանակին ստանան ճշգրիտ ու էական տեղեկատվություն:

Խորհրդի նախագահը պետք է լինի խորհրդի ոչ գործադիր անդամ:

Խորհրդի նախագահը՝

1. **սահմանում և հաստատում է խորհրդի օրակարգը.**
2. **խորհրդում խթանում է բազմազանության և ներառականության մշակույթը.**
3. **խրախուսում է խորհրդի բոլոր անդամների ներգրավվածությունը խորհրդի նիստերին՝ հիմնվելով նրանց հմտությունների, փորձի և գիտելիքների վրա.**
4. **ոչ գործադիր և գործադիր անդամների միջև խթանում է փոխադարձ հարգանքի և բաց հաղորդակցության վրա հիմնված հարաբերությունները.**
5. **տարեկան առնվազն մեկ անգամ հրավիրում է խորհրդի ոչ գործադիր անդամների նիստ՝ առանց գործադիր անդամների մասնակցության.**
6. **գործադիր մարմնի ղեկավարի հետ զարգացնում և ամրապնդում է արդյունավետ աշխատանքային հարաբերություններ, հարգելով վերջինիս պատասխանատվության շրջանակները՝ տրամադրում խորհրդատվական աջակցություն, ինչպես նաև իրականացնում է կազմակերպության ներքին իրավական ակտերով իրեն վերապահված այլ գործառույթներ:**

Խորհրդի նախագահը ունի առանցքային դեր Խորհրդի առաջնորդման, վերջինիս արդյունավետ գործունեության խթանման և ռազմավարական վերահսկողության ապահովման գործընթացում:

Կանոնադրության 26-րդ գլխում և Խորհրդի կանոնակարգի 21-րդ կետում նախատեսված են Խորհրդի նախագահի՝ Կանոնագրքի սկզբունք II 5-ում ամրագրված, ի թիվս այլնի ղեկավարման և կազմակերպչական գործառույթներին համապատասխանող իրավասություններ:

Խորհրդի նախագահն է Կարեն Սաֆարյանը, ով Խորհրդի ոչ գործադիր անդամ է:
Խորհրդի նախագահը պլանավորում և կազմակերպում է Խորհրդի աշխատանքը, գումարում և նախագահում է Խորհրդի նիստերը, սահմանում է նիստերի անցկացման ձևը, ձևավորում է Խորհրդի նիստերի նախնական օրակարգը, ապահովում է նիստին ներկայացվող հարցերի թափանցիկ և բաց քննարկումը, որոշումների մշակման ընթացքում Խորհրդի բոլոր անդամների կարծիքների հաշվի առնելը, ամփոփում է քննարկման արդյունքները, կարծիքները և հանձնարարություններն ու ստորագրում է Խորհրդի նիստի արդյունքներով ընդունված որոշումները: Խորհրդի նախագահը նաև հանդիսանում է խորհրդին կից հանձնաժողովների (կոմիտեների) (բացառությամբ Կորպորատիվ

կառավարման և մեթոդոլոգիայի կոմիտեի) անդամ, ինչպես նաև անձնական պատասխանատվություն է կրում Ընդհանուր ժողովի առջև Խորհրդի գործունեությունը կազմակերպելու համար:

Համապատասխանության կարգավիճակ՝ համապատասխանում է:

ՍԿՁԲՈՒՆՔ II.6 Խորհրդի հանձնաժողովները

Իր գործունեությանն աջակցելու համար խորհուրդը ձևավորում է մասնագիտացված հանձնաժողովներ:

Հանձնաժողովները նպատակ ունեն բարելավել խորհրդի գործունեությունը և առանցքային հարցերի վերաբերյալ տրամադրում են ավելի խորը փորձաքննություն:

Հանձնաժողովներն ունեն վերահսկողական և խորհրդատվական դերեր: Խորհուրդն է ամբողջությամբ պատասխանատվություն կրում իր որոշումների համար:

Իրենց պարտականությունները կատարելու համար հանձնաժողովները պետք է հասանելիություն ունենան անհրաժեշտ տեղեկատվության, ստանան համապատասխան ֆինանսավորում, անհրաժեշտության դեպքում ներգրավեն արտաքին փորձագետներ կամ խորհրդատուներ:

Հանձնաժողովները հաշվետու են խորհրդին և խորհրդի կողմից սահմանված ձևաչափով ու պարբերականությամբ հաշվետվություններ են ներկայացնում դրան:

Խորհրդի կողմից պետք է հաստատվեն և բացահայտվեն հանձնաժողովի առաքելությունը, կազմը, գործունեության շրջանակներն ու ընթացակարգերը:

Խորհուրդը կարող է ձևավորել աուդիտի, վարձատրության և նշանակումների հանձնաժողովներ, որոնք բացառապես կազմված են խորհրդի ոչ գործադիր անդամներից: Հանձնաժողովի նախագահն ընտրվում է խորհրդի կողմից:

Կազմակերպության չափից, կառուցվածքից, գործունեության ոլորտից կամ զարգացման մակարդակից, խորհրդի կարիքներից և դրա անդամների նկարագրից կախված՝ խորհուրդը կարող է ձևավորել այլ հանձնաժողովներ ևս, օրինակ՝ ռիսկերի կառավարման, ռազմավարության, կայունության և այլն:

Հատուկ կարիքներին կամ կորպորատիվ գործառնություններին արձագանքելու համար խորհուրդը կարող է ձևավորել ժամանակավոր կամ հատուկ հանձնաժողովներ, որոնց վրա կարող է չտարածվել տեղեկատվության բացահայտման պահանջը:

1) Աուդիտի հանձնաժողով

Աուդիտի հանձնաժողովի անդամների մեծ մասը պետք է լինի խորհրդի անկախ անդամ: Աուդիտի հանձնաժողովի նախագահը պետք է լինի խորհրդի անկախ անդամ: Խորհրդի նախագահի և աուդիտի հանձնաժողովի նախագահի պաշտոնները չեն կարող համատեղվել:

Աուդիտի հանձնաժողովի անդամները պետք է ունենան կազմակերպության գործունեության ոլորտին առնչվող գիտելիքներ: Աուդիտի հանձնաժողովի առնվազն մեկ անդամ պետք է պատշաճ փորձառություն ունենա ֆինանսների, աուդիտի կամ հաշվապահության ոլորտներում:

Աուդիտի հանձնաժողովն իրականացնում է՝

1. **կազմակերպության ֆինանսական հաշվետվությունների և գործունեության ֆինանսական ու ոչ ֆինանսական ցուցանիշների վերաբերյալ պաշտոնական հայտարարությունների արժանահավատության վերահսկումը և դրանցում ֆինանսական հաշվետվությունների առնչությամբ բովանդակվող էական դատողությունների վերլուծությունը,**
2. **տարեկան հաշվետվության հավաստիության, հավասարակշռվածության և հասկանալի լինելու վերաբերյալ խորհրդին խորհրդատվության տրամադրումը,**
3. **կազմակերպության դիրքերն ու կատարողականը, գործարար մոդելը և ռազմավարությունը գնահատելու համար մասնակիցներին համապատասխան տեղեկատվության տրամադրումը,**
4. **կազմակերպության ներքին ֆինանսական վերահսկողության և ներքին հսկողության ու ռիսկերի կառավարման վերլուծությունը, բացառությամբ դեպքերի, երբ կազմակերպությունում ձևավորվել է ռիսկերի կառավարման հանձնաժողով,**

5. **կազմակերպության ներքին աուդիտի գործառույթի արդյունավետության նկատմամբ հսկողությունը և վերլուծությունը, կամ, եթե այն դեռ չի ձևավորվել, ամեն տարի դրա անհրաժեշտության դիտարկումը և համապատասխան առաջարկության ներկայացումը խորհրդին,**

6. **աուդիտորական կազմակերպության ընտրման, վերընտրման և լիազորությունների դադարեցման, վարձատրության վերաբերյալ առաջարկությունների ներկայացումը խորհրդին,**

7. **աուդիտորական կազմակերպության անկախության և օբյեկտիվության վերահսկումն ու վերլուծությունը,**

8. **արտաքին աուդիտի գործընթացի արդյունավետության վերլուծությունը՝ հաշվի առնելով միջազգային մասնագիտական և կարգավորման պահանջները,**

9. **ոչ աուդիտորական ծառայությունների մատուցման համար աուդիտորական կազմակերպության ներգրավման քաղաքականության մշակումը և դրա նկատմամբ հսկողությունը, հաշվի առնելով ոչ աուդիտորական ծառայությունների ազդեցությունն աուդիտորական կազմակերպության անկախության վրա՝ այդ ծառայությունների ցանկի նախնական հաստատումը, ինչպես նաև կազմակերպության ներքին իրավական ակտերով իրեն վերապահված այլ գործառույթներ:**

Խորհրդին կից փաստացի գործում են Աուդիտի և ռիսկերի, Կադրային քաղաքականության և մոտիվացիայի, Ռազմավարության ու Կորպորատիվ կառավարման և մեթոդոլոգիայի կոմիտեները:

Յուրաքանչյուր կոմիտե ունի վերահսկողական իրավասություններ իրեն վերապահված ոլորտներում: Վերահսկողական իրավասությունները պատշաճ իրականացնելու համար նախատեսված են անհրաժեշտ լիազորություններ և պայմաններ, օրինակ՝ իրավասու ստորաբաժանումներից նյութեր, տեղեկություններ, հաշվետվություններ պահանջելու և ծանոթանալու, փորձագետներ ներգրավելու և այլն:

Կոմիտեների որոշումներն ունեն խորհրդատվական բնույթ: Կոմիտեների անդամները պատասխանատվություն են կրում կանոնակարգերով սահմանված պահանջների կատարման, կոմիտեների նիստերի ժամանակ կայացրած որոշումների, կոմիտեների նիստերի արձանագրություններում պարունակվող տեղեկությունների ճշգրտության և հավաստիության, Բանկի առջև իրենց դիտավորյալ գործողությունների (անգործության) հետևանքով Բանկին պատճառված իրական վնասի համար:

Խորհրդին կից ժամանակավոր և մշտական կոմիտեների (հանձնաժողովների) ստեղծումը և անդամների նշանակումը, դրանց ձևավորումը և գործունեությունը կարգավորող ներքին իրավական ակտերի ընդունումը Խորհրդի իրավասությունն է:

Յուրաքանչյուր կոմիտեի աշխատանքները կարգավորվում են Խորհրդի կողմից հաստատված կանոնակարգերով, որոնցով մասնավորապես սահմանում են կոմիտեների կազմը, հիմնական նպատակները, նիստերի անցկացման և որոշումների ընդունման կարգը, հաշվետվողականությունը, իրավասությունները և պատասխանատվությունը:

Խորհրդին առընթեր կոմիտեները, վերջիններիս գործունեությունը կարգավորող կանոնակարգերին համաձայն եռամսյակային պարբերականությամբ Խորհրդին ներկայացնում են համախմբված հաշվետվություն՝ նախորդ եռամսյակում իրականացված իրենց գործունեության վերաբերյալ:

Կորպորատիվ կառավարման համակարգի շարունակական բարելավման գործընթացի շրջանակներում Բանկի Խորհրդի կողմից 2025թ. վերանայվել է Աուդիտի և ռիսկերի կոմիտեի կանոնակարգը, հաստատվել կոմիտեի նոր կազմ, համաձայն որի Աուդիտի և ռիսկերի կոմիտեի նախագահ է նշանակվել Խորհրդի անկախ անդամ, իսկ կոմիտեի մնացած անդամները խորհրդի անդամներ են: Կոմիտեի կազմը հաստատելու վերաբերյալ Խորհրդի որոշմամբ նշանակվել է նաև մշտական խորհրդատու:

Աուդիտի և ռիսկերի կոմիտեի անդամներն ունեն Բանկի գործունեության ոլորտին առնչվող գիտելիքներ և փորձ, այդ թվում՝ ֆինանսների բնագավառում, իսկ կոմիտեի նախագահը նաև ոլորտային կրթություն (տնտեսագիտություն, աուդիտ և իրավունք):

Աուդիտի և ռիսկերի կոմիտեն իր կանոնակարգով և Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված կարգով իրականացնում է Կանոնագրքով նախատեսված գործառույթները:

Բարելավելով Կորպորատիվ կառավարման գործընթացները Խորհրդի կողմից 2025թ. ընթացքում

վերանայվել է նաև Կադրային քաղաքականության և մոտիվացիայի կոմիտեի կանոնակարգը: Ներդրվել է Բանկի Խորհրդի և Վարչության Սերնդափոխության պլանների գործընթացը, ինչպես նաև սահմանվել է Կադրային քաղաքականության և մոտիվացիայի կոմիտեի կողմից Սերնդափոխության պլանների տարեկան գնահատման և Խորհրդի հաստատմանը ներկայացման իրավասությունը: Վերանայման արդյունքում սահմանվել է, որ կադրային քաղաքականության և մոտիվացիայի կոմիտեն բաղկացած է բացառապես Խորհրդի անդամներից:

Համապատասխանության կարգավիճակ՝ համապատասխանում է:

ՍԿՉԲՈՒՆՔ II.7 Խորհրդի անդամների պարտականությունները

Խորհրդի անդամները պետք է գործեն լիարժեք տեղեկացված, բարեխղճորեն, պատշաճ ջանասիրությամբ և ողջամտորեն՝ ելնելով կազմակերպության ու մասնակիցների լավագույն շահերից և հաշվի առնելով կազմակերպության շահակիցների շահերը:

Խորհրդի անդամը պարտավոր է գործել օրենսդրությանը և կազմակերպության կողմից ընդունված ներքին իրավական ակտերին համապատասխան:

Խորհրդի անդամը որոշումներ կայացնելիս պարտավոր է կիրառել անկախ դատողություն:

Խորհրդի անդամը պետք է արդյունավետ կերպով ստանձնի իր պարտականությունները: Նա պարտավոր է իր պարտականությունները պատշաճ կատարելու համար հատկացնել բավարար ժամանակ, ուշադրություն և գործադրել ողջամիտ ջանքեր:

Խորհրդի անդամը պարտավոր է երրորդ անձանցից չընդունել այնպիսի օգուտներ, որոնք կարող են դիտարկվել որպես ոչ ողջամիտ և հանգեցնել կազմակերպության կամ դրա հետ փոխկապակցված անձանց հետ շահերի բախման:

Եթե խորհրդի անդամն ունի անձնական ուղղակի կամ անուղղակի շահագրգռվածություն կազմակերպության կողմից կնքվող գործարքում կամ ձեռքբերվող պայմանավորվածություններում, ապա նա պարտավոր է այդ մասին հայտնել խորհրդին մինչև գործարքի կնքումը կամ պայմանավորվածության ձեռքբերումը և ներկա չլինել գործարքը կնքելու մասին որոշման քննարկմանն ու քվեարկությանը:

Իր պարտականություններն իրականացնելիս խորհրդի անդամը պարտավոր է ապահովել հավասար և արդարացի վերաբերմունք նույն տեսակի (դասի) բոլոր մասնակիցների նկատմամբ:

Խորհրդի անդամը պարտավոր է աջակցել կազմակերպության հաջողությանը, ի թիվս այլ հանգամանքների, հաշվի առնելով՝

1. **ընդունվող որոշումների հնարավոր հետևանքները երկարաժամկետ հատվածում.**
2. **աշխատողների շահերը.**
3. **հաճախորդների, մատակարարների և այլ անձանց հետ հարաբերությունների ամրապնդման անհրաժեշտությունը.**
4. **գործունեության ազդեցությունը հասարակության և շրջակա միջավայրի վրա.**
5. **գործարար հեղինակությունն ամրապնդող համապատասխան վարքագիծ դրսևորելու անհրաժեշտությունը.**
6. **արդարամիտ գործելու անհրաժեշտությունը:**

Խորհրդի անդամն իր պարտականությունները պարտավոր է կատարել անձամբ: Դրանց կատարումը չի կարող փոխանցվել այլ անձի:

Անկախ փաստացի վնաս կրելու հանգամանքից՝ կազմակերպությունը պետք է պաշտպանության միջոցներ նախատեսի խորհրդի այն անդամների համար, որոնք որոշումները կայացնում են պատշաճ ջանասիրությամբ, ընթացակարգային պատշաճ զգուշավորությամբ, լիարժեք տեղեկացվածությամբ, առանց շահերի բախման, պատշաճ կերպով գնահատում են դրանց ազդեցությունը կազմակերպության երկարաժամկետ հաջողության և կատարողականի վրա:

Կազմակերպությունն իր միջոցների հաշվին ապահովագրում է խորհրդի անդամների պատասխանատվության ռիսկը:

Բանկի Խորհրդի անդամները գործում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված իրավասությունների շրջանակում: Խորհրդի անդամների գործունեությունը շարունակական է և չի սահմանափակվում Խորհրդի նիստերին

մասնակցությամբ: Նրանք գործում են բարեխղճորեն, իրենց իրավասությունների շրջանակում Խորհրդի նպատակների և խնդիրների համաձայն: Խորհրդի անդամների իրավունքները և պարտականությունները սահմանված են Խորհրդի կանոնակարգով:

Խորհրդի անդամները բավարար ժամանակ և ջանքեր են գործադրում իրենց պարտականությունները պատշաճ կատարելու համար: Բանկի կառավարման մարմինների և դրանց անդամների պատշաճ գործելակերպի հստակ ցուցիչ է Հայաստանի Հանրապետության բանկային համակարգում Բանկի զբաղեցրած առաջնային դիրքը:

Ի տարբերություն բաժնետերերի, ովքեր ընդհանուր ժողովում մասնակցությունը կարող են ապահովել լիազորված անձի միջոցով, Խորհրդի անդամները նիստերին մասնակցում են անձամբ և չեն կարող իրենց լիազորությունների կատարումը պատվիրակել այլ անձի: Խորհրդի նիստերին մասնակցելու անհնարության դեպքում կարող են գրավոր ձևով ներկայացնել իրենց կարծիքը քննարկվող հարցերի վերաբերյալ: Ձայնի և քվեարկության իրավունքի փոխանցումն այլ անձի (այդ թվում՝ Խորհրդի այլ անդամի) չի թույլատրվում:

Համապատասխանության կարգավիճակ՝ համապատասխանում է:

ՍԿԶԲՈՒՆՔ II.8 Խորհրդի էթիկական հանձնառությունը

Խորհուրդը պետք է հետևի բարձր էթիկական չափորոշիչների:

Բարձր էթիկական չափորոշիչներին հետևելը բխում է կազմակերպության երկարաժամկետ շահերից, նպաստում դրա նկատմամբ վստահության ամրապնդմանը և կորպորատիվ հեղինակության բարձրացմանը:
Խորհուրդը պետք է ստանձնի կազմակերպության էթիկական ու հակակոռուպցիոն համապատասխանությունն ապահովելու հանձնառությունն էթիկայի և համապատասխանության ծրագրի ներդրման և դրա իրագործման նկատմամբ հսկողություն ապահովելու միջոցով:

Խորհուրդը պետք է հաստատի կազմակերպության կորպորատիվ վարքականոնները և կազմակերպության էթիկական ու հակակոռուպցիոն համապատասխանությունը խթանող կորպորատիվ քաղաքականությունները:

Խորհուրդը պետք է ապահովի, որ կորպորատիվ վարքականոնները և քաղաքականությունները ներառեն կազմակերպության շահակիցների և ընդհանուր առմամբ հանրության հետ հարաբերվելու սկզբունքներն ու կանոնները:

Խորհուրդը պետք է հետևի, որ կազմակերպության կորպորատիվ վարքականոնները և քաղաքականությունները հասանելի լինեն աշխատողներին և այլ շահակիցներին:

Խորհրդի Կանոնակարգով սահմանված են Խորհրդի հիմնական նպատակները, այդ թվում՝ Բանկի կառավարման արդյունավետության ապահովում, կառավարման համակարգում հակակշիռների և զսպումների համակարգի ձևավորում, Բանկի կորպորատիվ արժեքների ու կորպորատիվ մշակույթի ձևավորում, դրանց զարգացում և գործնականում կիրառման ապահովում: Խորհրդի խնդիրները, ի թիվս այլնի, ներառում են Բանկում ներքին հսկողության արդյունավետ համակարգի ներդրումը և դրա իրականացման ապահովումը, Բանկի գործադիր և կառավարման մարմինների, բարձր ղեկավարության գործունեության նկատմամբ հսկողության իրականացնումը, կորպորատիվ կառավարման նորմերի ձևավորումը և ներդնումը, այդ թվում՝ էթիկայի և մասնագիտական վարքագծի և վարվեցողության կանոնները:

Այս օրակարգի շրջանակում Խորհրդի կողմից ընդունվել են մի շարք ներքին իրավական ակտեր, որոնց թվում հատկանշանական են հակակոռուպցիոն միջոցառումների իրականացման կարգը, Շահերի բախման կանխարգելման և կառավարման կարգը, Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման կանխարգելման կարգը և Բանկի մարդկային ռեսուրսների կառավարման քաղաքականությունը:

Դրա հիման վրա Խորհուրդը ընդունել է Բանկի համակարգի աշխատանքային, այդ թվում՝ էթիկական հարաբերությունները կարգավորող իրավական ակտեր՝ Անձնակազմի հավաքագրման և ադապտացիայի կարգը, Անձնակազմի կոմպետենտության կառավարման կարգը, Խրախուսման և վարձատրության համակարգի կառավարման ընթացակարգը, Աշխատողների գործարար էթիկայի և կորպորատիվ վարվելակերպի կանոններ և իրավական այլ ակտեր:

Բանկի կորպորատիվ վարքականոնների և քաղաքականության հիմնադրույթները ներառված են Կանոնադրությունում, որը եռալեզու տարբերակով տեղադրված է Բանկի պաշտոնական կայքէջում:

Բանկի պաշտոնական կայքէջում տեղադրված է նաև Բանկի աշխատողների գործարար էթիկայի և կորպորատիվ վարվելակերպի կանոնները:

Համապատասխանության կարգավիճակ՝ համապատասխանում է:

ՍԿՁԲՈՒՆՔ II.9 Տեղեկատվություն և մասնագիտական խորհրդատվություն ստանալու Խորհրդի անդամների իրավունքները

Իր պարտականությունները պատշաճ կատարելու համար խորհրդի անդամը պետք է հասանելիություն ունենա և համոզված լինի, որ ստանում է արդիական, հավաստի և համապատասխան տեղեկատվություն: Անհրաժեշտության դեպքում նա պետք է հնարավորություն ունենա կազմակերպության միջոցների հաշվին ներգրավել արտաքին անկախ խորհրդատվություն:

Խորհրդի անդամների կողմից տեղեկացված որոշումների կայացմանը նպաստում են կորպորատիվ քարտուղարը, ներքին աուդիտորը, ռիսկերի կառավարման և համապատասխանության ապահովման գործառույթները:

Իր պարտականությունները պատշաճ իրականացնելու համար խորհրդի ոչ գործադիր անդամն իրավունք ունի հիմնավոր պահանջ առաջադրել կազմակերպության միջոցների հաշվին արտաքին անկախ խորհրդատու ներգրավելու վերաբերյալ:

Բանկի Խորհրդի նիստերի հրավիրման, Խորհրդի անդամներին ծանուցելու հետ կապված իրավահարաբերությունները կարգավորվում են Կանոնադրությամբ, ինչպես նաև խորհրդի գործունեությունը կանոնակարգող ներքին իրավական ակտերով: Խորհրդի կանոնակարգով սահմանվում է, որ Խորհրդի անդամն իրավունք ունի ՀՀ օրենսդրությամբ և իրավական ակտերով, Կանոնադրությամբ, կանոնակարգով և Բանկի այլ ներքին իրավական ակտերով սահմանված իր իրավասություններն իրականացնելու համար անհրաժեշտ ցանկացած տեղեկություն (փաստաթղթեր և նյութեր) պահանջել և ստանալ Բանկի մարմիններից, ղեկավար անձանցից և աշխատակիցներից:

Խորհրդի որոշումների, նիստերի արձանագրությունների և այլ փաստաթղթերի, այդ թվում՝ Խորհրդին առընթեր կոմիտեների փաստաթղթերի հաշվառումն ու պահպանումն իրականացնող անձինք պարտավոր են Խորհրդի անդամի պահանջով անհապաղ նրան տրամադրել այդ փաստաթղթերի հաստատված պատճենները:

Բանկի պաշտոնատար անձինք պարտավոր են Խորհրդի անդամի պահանջով 5 (հինգ) օրվա ընթացքում ներկայացնել Խորհրդի անդամին իր գործառույթների իրականացման համար անհրաժեշտ ինչպես Բանկի գործունեության, այնպես էլ բանկի գործունեության հետ կապ չունեցող իրենց հայտնի տեղեկությունները:

Եռամսյակային պարբերականությամբ Խորհրդին հաշվետվություն են ներկայացնում Բանկի Վարչության նախագահը, Գլխավոր հաշվապահը, ներքին աուդիտի ստորաբաժանումը, ռիսկերի կառավարման, համապատասխանության ապահովման գործառույթների համար պատասխանատուներն ու ֆինանսական դիտարկումների ստորաբաժանումը:

Բացի այդ՝ Խորհրդի լուծմանը ենթակա հարցերը նախապես քննարկվում են ոլորտային կոմիտեներում, որում ընդգրկված են Խորհրդի անդամներ: Խորհրդի անդամները ամենօրյա ռեժիմով հասանելիություն ունեն Խորհրդի քարտուղարին, ինչպես նաև իրենց հետաքրքրող հարցին տիրապետող այլ իրավասու անձանց:

Իր գործունեության ընթացքում Խորհուրդը կարող է ներգրավել համապատասխան որակավորում ունեցող փորձագետների, խորհրդատուների և (կամ) փորձագիտական (խորհրդատվական) կազմակերպություններ:

Համապատասխանության կարգավիճակ՝ համապատասխանում է:

ՍԿՁԲՈՒՆՔ II.10 Խորհրդի գնահատումը

Խորհուրդը կանոնավոր հիմունքներով պետք է գնահատի իր կատարողականը և որոշի իր անդամների փորձառության ու կարողությունների համադրության պատշաճությունը:
Խորհրդի գնահատումը նպատակ է հետապնդում բացահայտել խորհրդի՝ որպես մեկ ամբող-

ջության և դրա յուրաքանչյուր անդամի արդյունավետ գործելու ունակությունը:

Գնահատման են ենթակա խորհրդի, դրա հանձնաժողովների, նախագահի և անդամների կատարողականները:

Առնվազն հինգ տարին մեկ անգամ խորհուրդը պետք է գնահատվի արտաքին գնահատողի կողմից: Խորհուրդը տարեկան առնվազն մեկ նիստ պետք է նվիրի իր գործունեության գնահատմանը:

Եթե խորհրդի գործունեությունը գնահատվում է արտաքին գնահատողի կողմից, ապա դրա մասին տեղեկատվությունը բացահայտվում է կազմակերպության կորպորատիվ կառավարման զեկույցում՝ արտաքին գնահատողի՝ կազմակերպության կամ խորհրդի անդամների հետ ունեցած կապի առկայության (բացակայության) մասին հայտարարության հետ միասին: Խորհրդի որոշմամբ խորհրդի գնահատման մասին տեղեկատվությունը, այդ թվում՝ արդյունքները, կարող են բացահայտվել կազմակերպության կորպորատիվ կառավարման զեկույցում:

Խորհուրդը, նվազագույնը տարեկան մեկ անգամ, կանոնավոր հիմունքներով գնահատում է իր կատարողականը և որոշում իր անդամների փորձառության ու կարողությունների համադրության պատշաճությունը: Ընդ որում, գնահատման գործընթացին կարող է ներգրավվել արտաքին գնահատող:

Խորհրդի գործունեության ամբողջական գնահատումն անցկացնում է Ընդհանուր ժողովը, որին Խորհրդի նախագահը ներկայացնում է Խորհրդի գործող կազմի կողմից իրականացված աշխատանքների մասին ամփոփ հաշվետվությունը (Խորհրդի կողմից հաստատված գնահատականը) և հեռանկարային ծրագրերը.

Խորհրդի 29.05.2025թ. թիվ 08/25-05-Լ որոշմամբ, Խորհրդի գնահատմանը աջակցելու նպատակով, ներգրավվել է արտաքին օժանդակող կազմակերպություն՝ Սիլկ Ռոադ Գրուպ ԲՎ (Silk Road Group BV) ի դեմս ներկայացուցիչ Դուրդոնա Կադիրովայի՝ պատշաճ մակարդակի և օբյեկտիվությամբ Բանկի Խորհրդի ինքնագնահատման գործընթացը կազմակերպելու նպատակով: Խորհրդի գնահատման համար արտաքին օժանդակող կազմակերպության, համապատասխան փորձագետի ընտրությունն իրականացվել է FMO (Nederlandse Financierings-Maatschappij voor Ontwikkelingslanden N.V., Dutch Entrepreneurial Development Bank, Հոլանդական ձեռնարկատիրական զարգացման բանկ) խորհրդատվությամբ՝ ապահովելով միջազգային փորձագիտական լավագույն մակարդակ:

Խորհրդի կողմից հաստատված գնահատման ծրագրի համաձայն, գնահատումը հնարավորություն է տվել Խորհրդին գնահատել իր ընդհանուր արդյունավետությունը, կոմիտեների աշխատանքը, առանձին անդամների ներգրավվածությունը, ինչպես նաև կորպորատիվ կառավարման ընդհանուր մակարդակը Բանկում: Արդյունքները ներկայացված են Խորհրդի քննարկմանը 2026 թվականի սկզբին:

Համապատասխանության կարգավիճակ՝ համապատասխանում է:

ՍԿՁԲՈՒՆՔ II.11 Խորհրդի անդամների շարունակական մասնագիտական զարգացումը և Խորհրդի նոր անդամների կողմնորոշումը

Խորհուրդը պետք է ապահովի իր գիտելիքների և գործունեության համապատասխանությունը կազմակերպության ածին և կառուցվածքի բարդացմանը:

Խորհուրդը պարտավոր է ապահովել իր անդամների շարունակական մասնագիտական զարգացումը:

Խորհուրդը պարտավոր է իր նոր անդամների համար անցկացնել ներածական դասընթացներ՝ ներկայացնելու կազմակերպության գործունեության ոլորտն ու մրցակցային միջավայրը, կազմակերպության կառավարման ու կորպորատիվ կառուցվածքը, խորհրդի և գործադիր մարմնի կազմը, այդ թվում՝ առանցքային աշխատողներին, կազմակերպության գործարար մոդելի առանձնահատկությունները, արտադրական (ծառայությունների), տեխնոլոգիական, ֆինանսական, սոցիալական, բնապահպանական գործընթացները, հիմնական ռիսկերը, կազմակերպության գործունեության ոլորտը կարգավորող իրավական դաշտը, հաճախորդների, գործընկերների և այլ շահակիցների հիմնական շրջանակը, ինչպես նաև խորհրդի կողմից էական համարվող այլ տեղեկատվություն:

Խորհրդի անդամները և բանկի այլ աշխատակիցները հնարավորություն ունեն Բանկի միջոցների հաշվին մասնակցել կրթական, վերապատրաստման ծրագրերի: Բանկը որդեգրել է համակարգի ֆորմալ և ոչ ֆորմալ կրթության, ինքնակատարելագործման խթանման քաղաքականություն:

Խորհրդի նոր անդամների, ինչպես նաև աշխատակիցների արագ ադապտացման համար Բանկն

իրականացնում է մի շարք ծրագրեր: Խորհրդի նոր անդամներին Բանկի առանձնահատկությունները, բնորոշ ռիսկերը, առաջնահերթությունները ներկայացնելու և այլ անհրաժեշտ գիտելիքներ ապահովելու համար կազմակերպվում են հանդիպումներ Բանկի իրավասու պաշտոնատար անձանց հետ:

Կորպորատիվ քարտուղարն ի պաշտոնե նաև իրականացնում է Խորհրդի անդամների և հատկապես նոր անդամների իրավաբանական խորհրդատվություն:

Համապատասխանության կարգավիճակ՝ համապատասխանում է:

ՍԿՁԲՈՒՆՔ II.12 Խորհրդի անդամների առաջադրումը

Խորհրդի անդամների առաջադրման և ընտրության գործընթացները պետք է լինեն թափանցիկ ու կանոնակարգված: Խորհրդի անդամների ընտրությունը պետք է հիմնվի օբյեկտիվ չափանիշների վրա:

Խորհրդի կազմը պետք է պարբերաբար թարմացվի՝ երաշխավորելու, որ խորհրդի կարողությունները բավարար են արագ փոփոխվող գործարար մարտահրավերներին արձագանքելու համար: Թարմ մտածելակերպը և նոր մոտեցումները պետք է հավասարակշռվեն կազմակերպությունում գործելու փորձառության հետ:

Խորհուրդը պետք է պլանավորի իր սերնդափոխությունը (իրավահաջորդությունը):

Խորհրդի սերնդափոխության (իրավահաջորդության) պլանավորումը հիմնվում է կազմակերպության ռազմավարության և խորհրդի գնահատման արդյունքների վրա:

Խորհրդի ոչ գործադիր անդամի թեկնածուի որոնումը կարող է կատարվել բաց գովազդի կամ արտաքին խորհրդատուի՝ խորհրդի անդամի ներգրավման գծով ծառայություններ մատուցող անձի միջոցով:

Եթե խորհուրդը ներգրավում է արտաքին խորհրդատուի, ապա վերջինիս մասին տեղեկատվությունը պետք է բացահայտվի կորպորատիվ կառավարման զեկույցում՝ կազմակերպության կամ խորհրդի անդամների ու գործադիր մարմնի հետ ունեցած որևէ կապի առկայության (բացակայության) մասին հայտարարության հետ միասին:

Եթե խորհրդի գործող անդամը գտնվում է հնարավոր թեկնածուների ցանկում (վերընտրվում է), ապա խորհուրդը պետք է ներկայացնի դրա պատշաճ հիմնավորումը:

Խորհրդի անդամների ընտրության և առաջադրման գործընթացները նկարագրված են Կանոնադրության 17.1 կետի 5-րդ ենթակետում, ինչպես նաև 25-րդ գլխում: Բաժնետերերի ընդհանուր տարեկան ժողովում ձայների մեծամասնությամբ սահմանվում է Խորհրդի կազմը և ընտրվում են անդամները (բացառությամբ օրենքով սահմանված կարգով առանց Ընդհանուր ժողովի ընտրության Խորհրդի կազմում ընդգրկվող Խորհրդի անդամների):

Խորհրդի անդամների տվյալները հրապարակված են Բանկի պաշտոնական կայքէջում, նաև ներառված են Բանկի Կորպորատիվ կառավարման հաշվետվության մեջ:

Բանկը բարձր առաջնահերթություն է տալիս կառավարման մարմինների սերնդափոխության հուսալի և համակարգված պլանավորմանը: Որպես կորպորատիվ կառավարման համակարգի շարունակական բարելավման տարր շարունակական կատարելագործվում է նաև Բանկի սերնդափոխության պլանավորման գործընթացը:

Համապատասխանության կարգավիճակ՝ համապատասխանում է:

ԳԼՈՒԽ III. ՆԵՐՔԻՆ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ, ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏ

ՍԿՁԲՈՒՆՔ III.1 Ներքին հսկողություն

Կազմակերպությունը պետք է ունենա ներքին հսկողության արդյունավետ գործընթացներ ու ընթացակարգեր՝ կազմակերպության կողմից ֆինանսական, ոչ ֆինանսական և հաշվապահական տեղեկատվության ամբողջականությունն ապահովելու, հաշվետվողականությունը խթանելու և խարդախությունները կանխելու համար:

Ներքին հսկողության նպատակն է ապահովել կազմակերպության ռեսուրսների արդյունավետ կառավարումը, հաշվետվությունների ճշգրտությունն ու ամբողջականությունը, օրենքների և կանոնակարգերի պահպանումը, խարդախությունների և սխալների կանխումը, կազմակերպության ներկա վիճակի և հեռանկարների օբյեկտիվ, արդար և հստակ պատկերացման տրամադրումը, կազմակերպության կողմից ընդունված ռիսկերի ողջամտությունը:

Կազմակերպության գործադիր մարմինը պետք է ապահովի ներքին հսկողության արդյունավետ համակարգի ձևավորումն ու պահպանումը խորհրդի կողմից սահմանած ներքին հսկողության կազմակերպման քաղաքականությունների շրջանակում:

Բանկն ունի համապարփակ ներքին հսկողության համակարգ, որի նպատակն է ապահովել ֆինանսական և ոչ ֆինանսական հաշվետվությունների ամբողջականությունը և արժանահավատությունը, խթանել գործառնական արդյունավետությունը, ապահովել իրավական և վերահսկողական պահանջներին համապատասխանությունը, ինչպես նաև նվազեցնել զեղծարարությունների և սխալների առաջացման ռիսկը:

Հսկողական գործառույթ իրականացնողները, յուրաքանչյուրն իր ոլորտը կարգավորող ներքին իրավական ակտերին համապատասխան, իրականացնում են հսկողություն և հաշվետու են վերադաս կառավարման մարմնին: Ներքին հսկողական համակարգը հիմնական սկզբունքներն են. Բանկի բոլոր մակարդակներում հստակ սահմանված պարտականություններ, անկախ վերահսկողության մեխանիզմներ՝ օբյեկտիվության պատշաճ մակարդակ ապահովելու համար, շարունակական մոնիթորինգ և հաշվետվողականություն:

Ներքին հսկողության համակարգում ներառվում են Բանկի գլխամասի և մասնաճյուղերի ներքին հսկողության համակարգերը, մասնավորապես.

- Բանկի կառավարման մարմինները (Ընդհանուր ժողով, Խորհուրդ, Վարչության նախագահ և Վարչություն, ներառյալ՝գլխավոր հաշվապահ և Վարչության նախագահի նրա տեղակալներ).
- Բանկի մասնաճյուղերի ղեկավարները (նրանց տեղակալները).
- Բանկի Ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարն ու աշխատակիցները.
- Բանկի ռիսկերի կառավարման, համապատասխանության ապահովման և ֆինանսական դիտարկումների գործառույթների իրականացման համար պատասխանատու ստորաբաժանումներն ու անձինք,
- Բանկի առանձնացված ստորաբաժանումների ղեկավարներն ու Բանկի այլ աշխատակիցները.
- Բանկի արտաքին աուդիտն իրականացնող անձը:
- Բանկի Ներքին հսկողության համակարգի առանձին օղակների հսկողական գործառույթների մասին անդրադարձ է կատարվում սույն Հայտարարագրի թեմատիկ բաժիններում:

Բանկը շարունակաբար բարելավում է իր ներքին հսկողության համակարգը՝ ապահովելով դրա զարգացումը՝ համահունչ Բանկի աճին, օրենսդրական փոփոխություններին, շահառուների ակնկալիքներին և ի հայտ եկող ռիսկերի նոր մարտահրավերներին:

Համապատասխանության կարգավիճակ՝ համապատասխանում է:

Սկզբունք III.2 Կազմակերպության ռիսկերի կառավարումը

Կազմակերպությունը պետք է ունենա ռիսկերի կառավարման գործառույթ, որն արդյունավետորեն և ամբողջությամբ հնարավորություն է տալիս իրագործել ռիսկերի կառավարման ռազմավարությունը, ապահովում է կազմակերպության ռիսկերի մասին հաշվետվողականությունն ու հաղորդակցությունը և կազմակերպության կողմից իր ռազմավարական նպատակներին

հասնելու վերաբերյալ ձևավորում ողջամիտ սպասումներ:

Կազմակերպության ռիսկերի կառավարման գործառույթի իրականացման համար պատասխանատու անձի նշանակումը, նրա լիազորությունների դադարեցումը, վարձատրության պայմանների հաստատումը, խրախուսման և կարգապահական պատասխանատվության միջոցների կիրառումն իրականացվում են կազմակերպության գործադիր մարմնի կողմից՝ խորհրդի համաձայնությամբ:

Ռիսկերի կառավարման գործառույթի իրականացման համար պատասխանատու անձի գիտելիքներն ու հմտությունները պետք է համապատասխանեն իր զբաղեցրած պաշտոնին, և նա պետք է հստակ ըմբռնի իր դերը կորպորատիվ կառավարման համակարգում:

Ռիսկերի կառավարման գործառույթի իրականացման համար պատասխանատու անձը՝

1. **բացահայտում և գնահատում է կազմակերպության գործունեությանը ներհատուկ էական ռիսկերը և աջակցում դրանց արդյունավետ կառավարմանը,**
2. **վերահսկում է ռիսկերի կառավարման գործընթացը՝ համոզվելու համար, որ ռիսկերի կառավարումը կատարվում է կազմակերպության ռիսկերի կառավարման մշակույթի, ռիսկերի ախորժակի և ռիսկերի սահմանաչափերի շրջանակում,**
3. **ձևավորում է խախտումների վաղ բացահայտման և կանխարգելման համակարգ,**
4. **ապահովում է ռիսկերի կառավարման վերաբերյալ հաշվետվողականությունը և հաղորդակցությունը,**
5. **առաջարկներ է ներկայացնում ռիսկերի կառավարման ռազմավարության, ռիսկերի ախորժակի և ռիսկերի սահմանաչափերի, ռիսկերի կառավարման քաղաքականության (ների) վերաբերյալ,**
6. **խորհրդի կողմից սահմանված պարբերականությամբ խորհրդին, գործադիր մարմնին, անհրաժեշտության դեպքում՝ նաև հսկողական գործառույթներ իրականացնող այլ անձանց ռիսկերի կառավարման վերաբերյալ ներկայացնում է հաշվետվություններ,**
7. **ժամանակին և պատշաճ կարգով խորհրդին, գործադիր մարմնին տեղեկատվություն է տրամադրում բոլոր այն հանգամանքների մասին, որոնք կարող են էապես բացասաբար ազդել կազմակերպության ռիսկերի կառավարման համակարգի վրա, ինչպես նաև իրականացնում է կազմակերպության ներքին իրավական ակտերով իրեն վերապահված այլ գործառույթներ:**

Ռիսկերի կառավարման գործառույթի իրականացման համար պատասխանատու անձը նշանակվում և ազատվում է Խորհրդի կողմից: Վարչության կազմի խրախուսման և կարգապահական պատասխանատվության հարցերը պատկանում են Խորհրդի իրավասությանը:

Բանկի ռիսկերի կառավարման պատասխանատուն ունի երեսուն տարուց ավելի աշխատանքային փորձ ֆինանսների և բանկային գործունեության համակարգում, որի մի մասը բանկի հսկողական գործառութի՝ ներքին աուդիտի, իրականացման պատասխանատուի պաշտոնում, ունի ոլորտին վերաբերող համապարփակ գիտելիքներ, անհրաժեշտ հմտություններ: Այդ թվում, ունենալով երկարամյա աշխատանքային փորձ միջազգային ֆինանսական ինստիտուտներում, կարևորում է միջազգային լավագույն փորձի շարունակական ինտեգրումը Բանկի գործարար գործընթացներում՝ մասնավորապես ռիսկերի կառավարման և կորպորատիվ կառավարման համակարգի բարելավման ուղղությամբ: Բանկում Ռիսկերի կառավարման պատասխանատուն համակարգում է այնպիսի ոլորտներ, ինչպիսիք են տեղեկատվական անվտանգությունը, անձնական տվյալների պաշտպանությունը, ֆինանսական դիտարկումների և համապատասխանության ապահովման ստորաբաժանումների աշխատանքները:

Բանկի ռիսկերի կառավարման պատասխանատուն գործում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի խորհրդի 16.04.2013թ. «Բանկերի ներքին հսկողության իրականացման նվազագույն պայմանները» Կանոնակարգ 4-ին, Կանոնադրության, Կանոնագրքին համապատասխան, մասնավորապես իրականացնում է.

- Բանկի գործունեությանը ներհատուկ ֆինանսական և ոչ ֆինանսական ռիսկերի բացահայտում, գնահատում, մոնիտորինգ,
- պոտենցիալ ռիսկերի վաղ բացահայտման և գնահատման նպատակով ներքին և արտաքին միջավայրի պարբերաբար գնահատում,
- ռիսկերի կառավարման ռազմավարության, ռիսկի ախորժակը, ինչպես նաև առանձին ռիսկերի կառավարման քաղաքականությունների մշակում և ներկայացում Բանկի խորհրդի հաստատմանը,

- Բանկի կապիտալի համարժեքության գնահատման ներքին գործընթացին մասնակցություն՝ իր գործառույթների մասով, սթրես-թեստերի իրականացում խորհրդի կողմից հաստատված ներքին կարգավորումների համաձայն,
- Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված պահանջների համաձայն ռիսկերի կառավարման գործառույթին վերաբերելի հաշվետվողականության պատրաստում և ներկայացում Բանկի Խորհրդին, Խորհրդին կից կոմիտեներին, Վարչությանը:

Ռիսկերի կառավարման քաղաքականության համաձայն՝ Բանկում ռիսկերի կառավարումը հիմնված է ռիսկերի կառավարման եռաստիճան համակարգի վրա, մասնավորապես.

1. Առաջին մակարդակ՝ ներառում է գործընթացների մասնակից այն անձանց, որոնք ուղակիորեն ներգրավված են առօրյա գործունեության մեջ: Այս մակարդակը ընդգրկում է այն անձանց և միավորներին, ովքեր պատասխանատու են գործարքների և առաջադրանքների կատարման համար,
2. Երկրորդ մակարդակ՝ ներառում է այն անձանց, որոնք ներգրավված են միջանկյալ մակարդակում՝ ապահովելով հսկողություն և աջակցություն առաջին աստիճանին: Այս մակարդակը ներառում է այն անձանց և միավորներին, ովքեր պատասխանատու են ռիսկերի մոնիթորինգի, գնահատման և կառավարման համար
3. Երրորդ մակարդակ՝ ներառում է այն անձանց, որոնք ունեն անկախ գնահատման ֆունկցիաներ, վերանայում ու գնահատում են կազմակերպության ռիսկերի կառավարման և վերահսկման գործընթացների արդյունավետությունը:

Ռիսկերի կառավարման ոլորտի զարգացումներին համահունչ, Բանկը շարունակական ջանքեր է գործադրել նաև ոչ ֆինանսական ռիսկերի կառավարման համակարգի արդյունավետ համակարգի ձևավորման ուղղությամբ. մշակելով այդ թվում ոչ ֆինանսական ռիսկերի ախորժակի համակարգ, սահմանել այդ ռիսկերի ախորժակի գնահատման և չափման գործուն ռիսկի ցուցիչներ: Այդ թվում հաշվետու ժամանակահատվածում միջազգային լավագույն փորձի կիրառմամբ ներդրվել է Բանկի ոչ ֆինանսական ռիսկերի թվայնացված գնահատման համակարգը՝ կիրառելով պատմական տվյալները և կանխատեսումների փորձագիտական մոտեցումը:

Համապատասխանության կարգավիճակ՝ համապատասխանում է:

ՍԿՁԲՈՒՆՔ III.3 Կազմակերպության համապատասխանության ապահովումը

Կազմակերպությունը պետք է ունենա համապատասխանության ապահովման գործառույթ, որն արդյունավետորեն և ամբողջությամբ հնարավորություն է տալիս գնահատել կազմակերպության համապատասխանության ռիսկը և նպաստել կազմակերպության համապատասխանության ապահովմանը:

Համապատասխանության ապահովման գործառույթի իրականացման համար պատասխանատու անձի նշանակումը, նրա լիազորությունների դադարեցումը, վարձատրության պայմանների հաստատումը, խրախուսման և կարգապահական պատասխանատվության միջոցների կիրառումն իրականացվում են կազմակերպության գործադիր մարմնի կողմից՝ խորհրդի համաձայնությամբ:

Համապատասխանության ապահովման գործառույթի իրականացման համար պատասխանատու անձի գիտելիքներն ու հմտությունները պետք է համապատասխանեն իր զբաղեցրած պաշտոնին, և նա պետք է հստակ ըմբռնի իր դերը կորպորատիվ կառավարման համակարգում:

Համապատասխանության ապահովման գործառույթի իրականացման համար պատասխանատու անձը՝

1. **խթանում է պատասխանատու և բարեվարք վարվելակերպը կազմակերպությունում ու ապահովում կազմակերպության գործունեության համապատասխանությունն օրենքների և այլ իրավական ակտերի, ներառյալ՝ կազմակերպության ներքին իրավական ակտերի պահանջներին,**
2. **աջակցում է աշխատողների գործունեության համապատասխանությանն օրենքների և այլ իրավական ակտերի, ներառյալ՝ ներքին իրավական ակտերի պահանջներն արժևորող կորպորատիվ մշակույթի ձևավորմանը: Դա ներառում է կորպորատիվ վարքականոնների և կորպորատիվ այլ քաղաքականությունների ու ընթացակարգերի վերաբերյալ սեմինարների և քննարկումների պարբերաբար կազմակերպումը,**
3. **կառավարում է կազմակերպության գործունեության համապատասխանության ապահովման հետ կապված ռիսկերը, այդ թվում՝ կազմակերպության մատակարարման շղթայի,**
4. **գնահատում է կազմակերպության գործունեության վրա իրավական հնարավոր փոփոխությունների ազդե-**

ցությունը և դրա հետ կապված հնարավոր ռիսկերը,

5. կազմակերպության գործունեության համապատասխանությունն ապահովելու նպատակով առաջարկում և իր իրավասությունների շրջանակում իրագործում է ուղղիչ և կանխարգելիչ միջոցառումներ,
6. նպաստում է կազմակերպությունում էթիկայի և հակակոռուպցիոն համապատասխանության ծրագրի ներդրմանը և ապահովում դրա իրականացումը,
7. նպաստում է ազդարարման կառուցակարգերի ներդրմանը, որոնք հնարավորություն են տալիս կազմակերպության աշխատողներին (ներառյալ՝ գործադիր մարմնի անդամներին), դրանց ներկայացուցչական մարմիններին (առկայության դեպքում) և արտաքին շահակիցներին խորհրդին կամ այլ մարմնին գրավոր կամ բանավոր հաղորդել (ազդարարել) կազմակերպությունում տեղ գտած ոչ իրավաչափ գործողությունների և վարվելակերպի, այդ թվում՝ կոռուպցիոն բնույթի դեպքերի, շահերի բախման, կորպորատիվ վարքականոնների հետ կապված խախտման կամ կազմակերպության շահերին ուղղված այլ վնասի կամ դրանց սպառնալիքի վերաբերյալ տեղեկություններ,
8. խորհրդի կողմից սահմանված պարբերականությամբ խորհրդին, գործադիր մարմնին, անհրաժեշտության դեպքում նաև հսկողական գործառույթներ իրականացնող այլ անձանց ներկայացնում է հաշվետվություններ համապատասխանության ապահովման գործընթացների վերաբերյալ,
9. ժամանակին և պատշաճ կարգով խորհրդին, գործադիր մարմնին տեղեկատվություն է տրամադրում բոլոր այն հանգամանքների մասին, որոնք կարող են էապես բացասաբար ազդել կազմակերպության համապատասխանության, ինչպես նաև իրականացնում կազմակերպության ներքին իրավական ակտերով իրեն վերապահված այլ գործառույթներ:

Բանկի համապատասխանության ապահովման գործառույթի համար պատասխանատու անձի նշանակումը, նրա լիազորությունների դադարեցումը, վարձատրության պայմանների հաստատումը, խրախուսման և կարգապահական պատասխանատվության միջոցների կիրառումը Բանկում իրականացվում է Կանոնագրքի պահանջներին համապատասխան:

Բանկն ունի առանձին ստորաբաժանում՝ Ռիսկերի կառավարման տնօրինության Համապատասխանության ապահովման վարչություն, որն ապահովում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 16.04.2013թ. «Բանկերի ներքին հսկողության իրականացման նվազագույն պայմանները» Կանոնակարգ 4-ով նախատեսված համապատասխանության ապահովման գործառույթների կատարումը:

Կանոնակարգ 4-ի 146-րդ կետի համաձայն՝ հսկողական գործառույթների (բացառությամբ՝ ներքին աուդիտի գործառույթի) իրականացման համար պատասխանատու անձանց, այդ թվում՝ համապատասխանության ապահովման գործառույթի իրականացման համար պատասխանատու անձի նշանակումը, նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը, վարձատրության պայմանների հաստատումը, գործունեության պարբերական գնահատումը, խրախուսման և կարգապահական պատասխանատվության միջոցների կիրառումն իրականացվում է բանկի գործադիր մարմնի կողմից՝ խորհրդի համաձայնությամբ:

Բանկի համապատասխանության ապահովման պատասխանատուն ունի երկարամյա աշխատանքային փորձ բանկային համակարգում, հիմնականում ռիսկերի կառավարման, ներքին աուդիտի ոլորտներում: Համապատասխանության պատասխանատուի գիտելիքներն ու հմտությունները համապատասխանում են զբաղեցրած պաշտոնին և նա հստակ ըմբռնում է իր դերը կորպորատիվ կառավարման համակարգում:

Բանկի համապատասխանության ապահովման պատասխանատուն գործում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, Կանոնակարգ 4-ին, Կանոնադրությանը, Կանոնագրքին համապատասխան և, մասնավորապես իրականացնում է.

- Համապատասխանության ռիսկի բացահայտում, բացահայտված անհամապատասխանությունների (ռիսկերի) ուղղությամբ առաջարկությունների ներկայացում, բացահայտված ռիսկերի նվազեցման ուղղությամբ միջոցառումների ծրագրի կազմում,
- Օրենսդրական և վերահսկողական պահանջների փոփոխություններով պայմանավորված Բանկի ներքին իրավական ակտերի փոփոխությունների նախաձեռնման և հսկման գործընթացների կազմակերպում,

- Համապատասխանության ռիսկի կառավարման թեմայով Բանկի անձնակազմի համար դասընթացների կազմակերպում, ինչպես նաև մեծ պատասխանատվություն կրող, բարձր ռիսկային գործունեությամբ զբաղվող աշխատակիցների համար հիմնական իրավական և վերահսկողական պարտավորությունների վերաբերյալ սեմինարների պարբերաբար կազմակերպում,
- Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված պահանջների համաձայն համապատասխանության ապահովման գործառույթին վերաբերելի հաշվետվողականության պատրաստում և ներկայացում Բանկի Խորհրդին, Խորհրդին կից կոմիտեներին, Վարչությանը:
- Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման օրենսդրական պահանջների համապատասխանությունն ապահովվում է Բանկի ֆինանսական դիտարկումների ստորաբաժանման կողմից:

Բանկը շարունակաբար վերանայում է համապատասխանության ապահովման գործառույթի ոլորտը կանոնակարգող ներքին իրավական ակտերը՝ լավարկելով և համապատասխանեցնելով միջազգային լավագույն փորձին և գործող կարգավորումներին:

Համապատասխանության կարգավիճակ՝ համապատասխանում է:

ՍԿՉԲՈՒՆՔ III.4 Կազմակերպության ներքին աուդիտը

Կազմակերպությունը պետք է ունենա ներքին աուդիտոր/ներքին աուդիտի ստորաբաժանում, որն անկախ և օբյեկտիվ հավաստիացումներ ու խորհուրդներ է տրամադրում կազմակերպության խորհրդին և գործադիր մարմնին կազմակերպության ներքին հսկողության և ռիսկերի կառավարման, կորպորատիվ կառավարման համակարգերի համարժեքության

ու արդյունավետության վերաբերյալ և աջակցում կազմակերպության նպատակների իրագործմանն ու գործունեության բարելավմանը:

Ներքին աուդիտորը/ներքին աուդիտի ստորաբաժանումն անկախ է գործադիր մարմնից:

Ներքին աուդիտորը/ներքին աուդիտի ստորաբաժանման աշխատողները նշանակվում են խորհրդի կողմից: Ներքին աուդիտորը/ներքին աուդիտի ստորաբաժանումը հաշվետու է խորհրդին, իսկ աուդիտի հանձնաժողովի առկայության դեպքում՝ վերջինիս:

Խորհուրդը/աուդիտի հանձնաժողովը հաստատում է ներքին աուդիտի տարեկան ծրագիրը:

Ներքին աուդիտորը/ներքին աուդիտի ստորաբաժանման աշխատողները չեն կարող լինել կազմակերպության խորհրդի և գործադիր մարմնի անդամներ ու դրանց հետ փոխկապակցված անձինք:

Ներքին աուդիտորի/ներքին աուդիտի ստորաբաժանման աշխատողների գիտելիքներն ու հմտությունները պետք է համապատասխանեն իրենց զբաղեցրած պաշտոնին, և նրանք պետք է հստակ ըմբռնեն իրենց դերը կորպորատիվ կառավարման համակարգում: Ներքին աուդիտորի/ներքին աուդիտի ստորաբաժանման գործառույթները քաղաքացիաիրավական պայմանագրի կնքմամբ կարող են փոխանցվել կազմակերպության հետ աշխատանքային կամ գործարար հարաբերությունների մեջ չգտնվող անձի:

Ներքին աուդիտորի/ներքին աուդիտի ստորաբաժանման աշխատանքների պլանավորումը կատարվում է ռիսկերի գնահատման հիման վրա:

Ներքին աուդիտորը/ներքին աուդիտի ստորաբաժանումը՝

1. **դիտարկում և գնահատում է կորպորատիվ քաղաքականությունների, գործընթացների, դրանց փաստաթղթավորման և հսկողական գործառույթների կիրառման համարժեքությունը և արդյունավետությունը,**
2. **պարբերաբար գնահատում է ռիսկերի կառավարման, համապատասխանության ապահովման գործառույթների արդյունավետությունը և ռիսկերին դրանց համարժեքությունը,**
3. **գնահատում է կազմակերպության կառավարման տարբեր մակարդակներում որոշումների կայացման գործընթացները,**
4. **գնահատում է որոշումների կայացման գործընթացում օգտագործվող տեղեկատվության արժանահավատությունը,**
5. **ստուգում է ռիսկերի կառավարման արդյունավետությունը,**
6. **ստուգում է ֆինանսական հաշվետվություններում ակտիվների պատշաճ արտացոլումը, իսկ անհրաժեշտության դեպքում՝ ակտիվների ֆիզիկապես առկայությունը և ակտիվների պահպանման եղանակները, ինչպես նաև պարտավորությունների լիովին բացահայտված և պատճառաբանված լինելը,**
7. **ստուգում է աշխատողների և կազմակերպական միավորների կողմից կազմակերպության քաղաքա-**

կանություններին և կարգերին (կանոնակարգերին, ընթացակարգերին, հրահանգներին, ուղեցույցներին) համապատասխան գործելը,

8. **գնահատում է տեղեկատվական համակարգի անվտանգությունը,**
9. **խորհրդի/աուդիտի հանձնաժողովի կողմից սահմանված պարբերականությամբ խորհրդին/աուդիտի հանձնաժողովին ներկայացնում է հաշվետվություններ,**
10. **հաշվետվություններ է ներկայացնում գործադիր մարմնին՝ բացահայտված խախտումների ու անհամապատասխանությունների մասին տեղեկացնելու նպատակով,**
11. **ժամանակին և պատշաճ կարգով խորհրդին/աուդիտի հանձնաժողովին տեղեկատվություն է տրամադրում բոլոր այն հանգամանքների մասին, որոնք կարող են էապես բացասաբար ազդել նպատակներին հասնելու կազմակերպության կարողության վրա, ինչպես նաև իրականացնում է կազմակերպության ներքին իրավական ակտերով իրեն վերապահված այլ գործառույթներ:**

Նպատակը և խնդիրները

Համաձայն Բանկի Ներքին աուդիտի քաղաքականության՝ Ներքին աուդիտի նպատակն է անկախ, օբյեկտիվ հավաստիացման և խորհրդատվության միջոցով Բանկի գործունեության արդյունքի բարելավումը և համապատասխանության հաստատումը:

Ներքին աուդիտի հիմնական խնդիրները ներառում են՝ Բանկում կորպորատիվ կառավարման գնահատում, ռիսկերի գնահատման և կառավարման գործընթացի գնահատում, ներքին հսկողության արդյունավետության գնահատում, գործառնական և ֆինանսական տեղեկատվության արժանահավատության գնահատում, գործունեության տնտեսական արդյունավետության գնահատում, գործունեության համապատասխանության գնահատում գործող ներքին և արտաքին իրավական ակտերին, խարդախության կանխարգելման ուղղված միջոցառումների նկատմամբ հսկողություն:

Անկախություն և անաչառություն

Ներքին աուդիտի ծառայությունը հաշվետու է Բանկի Խորհրդին:
Ներքին աուդիտի ծառայության ղեկավարի և աշխատակիցների նշանակման, վերջիններիս լիազորությունների դադարեցման վերաբերյալ որոշումը կայացնում է Խորհուրդը:

Բանկում գործնականում կարևորվում է Ներքին աուդիտի անկախությունը գործադիր մարմնից:

Խորհուրդը հաստատում է Ներքին աուդիտի տարեկան ծրագիրը, ինչպես նաև եռամսյակային պարբերականությամբ քննարկում է Ներքին աուդիտի ծառայության հաշվետվությունը՝ տարեկան ծրագրի կատարման ընթացքի, ներքին հսկողության համակարգի արդյունավետության, բացահայտված խնդիրների լուծման ուղղված միջոցառումների իրականացման արդյունքների վերաբերյալ:

Աուդիտի և ռիսկերի կոմիտեն աջակցում է Խորհրդին աուդիտի բնագավառում իր գործառույթներն արդյունավետ իրականացնելու գործում, համակարգում է ՆԱԾ գործունեության հետ կապված հարցերը: Խորհուրդը, որպես կանոն, Բանկի աուդիտին վերաբերող հարցերը քննարկում է տվյալ հարցերի վերաբերյալ Աուդիտի և ռիսկերի կոմիտեի դրական եզրակացության առկայության դեպքում:

Ներքին աուդիտի անդամ չեն կարող լինել Բանկի կառավարման մարմինների անդամները, այլ ղեկավարներ ու աշխատակիցներ, ինչպես նաև Վարչության նախագահի և Վարչության անդամների հետ փոխկապակցված անձինք: Ներքին աուդիտի ծառայության կազմում ընդգրկված անձինք չեն հանդիսանում Խորհրդի կամ գործադիր մարմնի անդամներ, վերջիններիս հետ փոխկապակցված անձինք չեն:

Մասնագիտական համապատասխանություն

Կարևորելով ներքին աուդիտի դերը Բանկի կառավարման համակարգում՝ դրա կազմում նշանակվում են անձինք, որոնց գիտելիքները, հմտությունները, ներքին աուդիտի դերի վերաբերյալ մասնագիտական ընկալումները համապատասխանում են իրենց զբաղեցրած պաշտոնին:

Ներքին աուդիտի ղեկավարն ունի երկարամյա աշխատանքային փորձ ֆինանսաբանկային համակարգում, համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի սահմանած որակավորման և մասնագիտական համապատասխանության չափանիշներին:

Ներքին աուդիտի ծառայության աշխատակիցների համար տարեկան կտրվածքով կազմվում և իրագործվում է վերապատրաստման ծրագիր՝ աուդիտորական կարողությունների զարգացման, բանկի գործունեության առանցքային ոլորտների ուղղությամբ գիտելիքների ընդլայնման նպատակով: Վերապատրաստման ծրագիրը մաս է կազմում Ներքին աուդիտի զարգացման ծրագրի, որն իր հերթին հիմնված է ներքին և արտաքին մարտահրավերների և հնարավորությունների գնահատման վրա:

Ներքին աուդիտի անձնակազմի հետ մշտապես իրականացվում են աշխատանքային քննարկումներ, հանդիպումներ Խորհրդի, Աուդիտի և ռիսկերի կոմիտեի անդամների հետ՝ Բանկի ռազմավարական նպատակների, կորպորատիվ կառավարման համակարգում և ներքին հսկողության համակարգում առկա խնդիրների, դրանց հաղթահարման գործում իրենց դերակատարման, ինչպես նաև ներքին աուդիտի գործառույթի զարգացման հնարավորությունների վերաբերյալ:

Աուդիտի պլանավորում, իրականացում և հաշվետվողականություն

Ներքին աուդիտն օրենքով և Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված իր գործառույթներն իրականացնում է ռիսկերի վրա հիմնված պլանավորման սկզբունքով: Այս սկզբունքի ներքո Ներքին աուդիտի ծառայությունը կազմում և յուրաքանչյուր տարի թարմացնում է Աուդիտի բազմությունը և Ռիսկերի քարտեզը, որը ներառում է Բանկի հիմնական գործարար գործընթացները և դրանց գծով ռիսկերի գնահատման արդյունքները:

Ռիսկերի գնահատումն իրականացվում է յուրաքանչյուր գործընթացի գծով հետևյալ մոտեցմամբ. «Բնորոշ ռիսկերի» և «Հսկողության համակարգի» գնահատում, որոնց համակցությամբ գնահատվում է «Մնացորդային ռիսկը» եռամակարդակ աստիճանային համակարգով՝ «Բարձր», «Միջին», «Ցածր»:

Ռիսկերի գնահատման հիման վրա կազմվում է Աուդիտի տարեկան և եռամյա պլանը: Պլանի կազմման գործընթացում հաշվի են առնվում նաև վերջին աուդիտի ամսաթիվը, ԿԲ և արտաքին աուդիտի կողմից բարձրացված խնդիրները, կատարված փոփոխությունները, հաճախորդներից, գործընկերներից, այլ ներքին և արտաքին կողմերից ստացված ազդակները, Խորհրդի հանձնարարականները:

Ներքին աուդիտի կողմից իր գործառույթների պատշաճ կատարման նպատակով կարող են իրականացվել ինչպես գործընթացային աուդիտորական հանձնառություններ և թեմատիկ ստուգումներ, այնպես էլ անակնկալ ստուգումներ և գույքագրումներ: Իր գործառույթների կատարման համար Ներքին աուդիտն ունի Բանկի ներքին իրավական ակտերով ամրագրված բավարար լիազորություններ և տեղեկատվության անսահմանափակ հասանելիություն: Յուրաքանչյուր հանձնառության և/կամ ստուգման արդյունքների վերաբերյալ կազմվում է հաշվետվություն, որը ներկայացվում է Բանկի Վարչությանը՝ դիտարկումների, դրանց պատճառների քննարկման և առաջարկվող միջոցառումների ծրագրի հաստատման նպատակով, Աուդիտի և ռիսկերի կոմիտեին, ինչպես նաև Խորհրդին:

Իր գործունեության վերաբերյալ Ներքին աուդիտի ծառայությունը առնվազն եռամսյակային պարբերականությամբ Խորհրդի կողմից հաստատված ձևաչափով հաշվետվություն է ներկայացնում Խորհրդին, Աուդիտի և ռիսկերի կոմիտեին՝ ներառելով տեղեկատվություն Աուդիտի ծրագրի իրականացման ընթացքի, առանձին գործընթացների ստուգումների արդյունքների, բացահայտված էական ռիսկերի, ներքին հսկողության համարժեքության, ռիսկերի կառավարման մակարդակի, ինչպես նաև ամրագրված միջոցառումների և կառավարման մարմինների կողմից տրված հանձնարարականների կատարման ընթացքի վերաբերյալ:

Համապատասխանության կարգավիճակ՝ համապատասխանում է:

ԳԼՈՒԽ IV. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ ԵՎ ԹԱՓԱՆՑԻԿՈՒԹՅՈՒՆ

ՍԿՉԲՈՒՆՔ IV.1 Կազմակերպության տեղեկատվական քաղաքականությունը

Կազմակերպությունը պետք է ապահովի իր թափանցիկությունը, այդ թվում՝ իր ֆինանսական վիճակի, գործունեության արդյունքների, կայունության, սեփականության և կորպորատիվ կառավարման բոլոր էական հարցերի վերաբերյալ արդիական և արժանահավատ տեղեկատվության ժամանակին բացահայտումը:

Կազմակերպությունը պետք է ունենա տեղեկատվական քաղաքականություն, որն առնվազն պետք է սահմանի կազմակերպության կողմից տեղեկատվության բացահայտման նպատակները, սկզբունքները, ժամկետները, պարբերականությունը, կարգն ու հաղորդակցման ուղիները, բացահայտման ենթակա տեղեկատվության ցանկը, եթե այն գերազանցում է օրենսդրությամբ նախատեսվածը:

Տեղեկատվական քաղաքականությունը պետք է նախատեսի տեղեկատվության հավասար և տնտեսապես արդյունավետ հասանելիության ապահովում: Տեղեկատվության պարբերական բացահայտումները պետք է ուղեկցվեն կազմակերպության էական զարգացումների վերաբերյալ տեղեկատվության բացահայտմամբ:

Կազմակերպությունը պետք է երաշխավորի գաղտնի, ներքին տեղեկությունների պահպանումը և իր տեղեկատվական անվտանգությունը:

Խորհրդի կողմից հաստատված Տեղեկատվության հրապարակման կարգով սահմանվում են Բանկի կողմից տեղեկատվության հրապարակման և երրորդ անձանց տեղեկատվության տրամադրման սկզբունքները: Սահմանված է, որ Բանկի կողմից հրապարակվող Տեղեկատվությունը ներկայացվում է ճշգրիտ և արժանահավատ, ժամանակին և ամբողջական (բավարար չափով), պարզ և մատչելի լեզվով:

Բանկի կողմից տեղեկատվության հրապարակումը և տրամադրումն իրականացվում է համաձայն Հայաստանի Հանրապետության օրենսդրության, Կանոնակարգ 8/03-ի պահանջների, Տեղեկատվության հրապարակման կարգի և կարգի հիման վրա ընդունված ընթացակարգերի:

Վարչության կողմից հաստատված Բանկի կողմից տեղեկատվության հրապարակման ընթացակարգով սահմանվել է Բանկի կողմից սպասարկման սրահներում և ինտերնետային տիրույթում հրապարակման ենթակա տեղեկությունների ցանկը, ժամկետները, պարբերականությունը, կարգը, իրավասու ստորաբաժանումների համագործակցության մանրամասները:

Հաճախորդների հետ հարաբերությունները կրում են պայմանագրային բնույթ: Պայմանագրերով նախատեսվում են նաև հաճախորդների շահերին առնչվող տեղեկատվության տրամադրման եղանակները, այդ թվում՝ էլեկտրոնային փոստի միջոցով:

Բանկը հաշվետու թողարկող է, հետևաբար Բանկի նկատմամբ կիրառվում է նաև Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի խորհրդի կողմից 11.03.2008թ. հաստատված «Ազդագիր և հաշվետու թողարկողների հաշվետվություններ» կանոնակարգ 4/04-ը, որի 23-րդ գլխին համապատասխան Բանկը պաշտոնական կայքէջում հրապարակում է նաև էական փաստերի (զարգացումների) մասին տեղեկատվությունը:

Համապատասխանության կարգավիճակ՝ համապատասխանում է:

ՍԿՉԲՈՒՆՔ IV.2 Կազմակերպության հաշվետվությունները

Կազմակերպության կողմից Էական հարցերի վերաբերյալ տեղեկատվության բացահայտումը պետք է ներառի, սակայն չսահմանափակվի տարեկան հաշվետվությունների հրապարակմամբ:

Կազմակերպության տարեկան հաշվետվությունը պետք է ներառի՝

1. **խորհրդի նախագահի և գործադիր մարմնի ղեկավարի ուղերձը,**
2. **գործադիր մարմնի զեկույցը, որը պետք է ներառի հաշվետու ժամանակահատվածում կազմակերպության կատարողականի, ներառյալ՝ հիմնական ռիսկերի (այդ թվում՝ սոցիալական, բնապահպանական) վերլուծությունը, գործունեության կանխատեսումները և հնարավոր ռիսկերը, դրանք կառավարելու եղանակները,**

3. կազմակերպության ֆինանսական հաշվետվությունները և դրանց վերաբերյալ աուդիտորական եզրակացությունը,

4. կազմակերպության նպատակները և կայունության հաշվետվությունը,

5. շահագրգռվածության առկայությամբ (փոխկապակցված) գործարքներին վերաբերող տեղեկատվությունը,

6. կազմակերպության կորպորատիվ կառավարման զեկույցը, որը ներառում է՝

1) կազմակերպության վարչակազմակերպական և կորպորատիվ կառուցվածքի նկարագրությունը,

2) նշանակալից մասնակիցների, այդ թվում՝ իրական շահառուների մասին տեղեկատվությունը,

3) խորհրդի անդամների հակիրճ կենսագրությունը (տարիք, կրթություն, փորձառություն, ներկա աշխատատեղ, այլ խորհուրդներում ներգրավվածություն, որակավորումներ, պարգևներ և այլն), պաշտոնավարման ժամկետը, խորհրդում կարգավիճակը (նախագահ, գործադիր անդամ, ոչ գործադիր անդամ, ոչ գործադիր անկախ անդամ), խորհրդի նիստերին խորհրդի անդամների մասնակցության վերաբերյալ տվյալները, խորհրդի անկախ անդամների անկախության չափանիշներին համապատասխանության արդյունքները, խորհրդի հանձնաժողովների գործունեության տարեկան զեկույցը, խորհրդի (հանձնաժողովների), ոչ գործադիր անդամների կողմից հրավիրված նիստերի քանակը, դրանց հրավիրման եղանակը և նախաձեռնող անձի (անձանց) տվյալները, խորհրդի անդամների շարունակական մասնագիտական զարգացման, գնահատման մասին տեղեկատվությունը, խորհրդի տարեկան անհատական վարձատրության վերաբերյալ տեղեկատվությունը և վարձատրության կապը կայունության կորպորատիվ թիրախների հետ, կազմակերպության գործարքներում ու պայմանավորվածություններում շահագրգռվածության բացահայտման վերաբերյալ խորհրդի անդամների հայտարարությունը,

4) գործադիր մարմնի (անհատական կամ ընդհանուր) տարեկան վարձատրության վերաբերյալ տեղեկատվությունը և վարձատրության կապը կայունության կորպորատիվ թիրախների հետ,

5) կազմակերպության բաժնետոմսերի քանակը, որոնք հանդիսանում են խորհրդի և գործադիր մարմնի անդամների սեփականությունը,

6) աուդիտորական կազմակերպության անվանումը և վարձատրությունը, ինչպես նաև դրա անկախության փաստի ստուգման արդյունքները,

7) կազմակերպության կողմից թողարկված և տեղաբաշխված բաժնետոմսերով ամրագրվող իրավունքները՝ ըստ դրանց տեսակների (դասերի),

8) կորպորատիվ կառավարման վերաբերյալ կազմակերպությանը և խորհրդին խորհրդատվական ծառայություններ, այդ թվում՝ խորհրդի գնահատման, խորհրդի անդամի ներգրավման գծով ծառայություններ մատուցած անձանց մասին տեղեկատվությունը և վարձատրությունը,

9) կորպորատիվ կառավարման տարեկան հայտարարագիրը,

10) խորհրդի հայեցողությամբ այլ տեղեկատվություն:

Օրենսդրական սահմանափակումների շրջանակում տարեկան հաշվետվության մեջ արտացոլված էական տեղեկատվության կամ փաստի փոփոխության դեպքում կազմակերպությունը պարտավոր է ողջամիտ ժամկետներում բացահայտել համապատասխան տեղեկատվությունը կամ փաստերը:

Բանկը պարբերաբար հրապարակում է իր գործունեության ֆինանսական և ոչ ֆինանսական արդյունքների, ռազմավարական ուղղությունների, ռիսկերի կառավարման և այլ գործառույթների վերաբերյալ շահակիցների համար կարևոր և էական տեղեկատվություն՝ ապահովելով թափանցիկությունն ու հաշվետվողականությունը:

2024 թվականից սկսած՝ Բանկը հրապարակում է Կորպորատիվ կառավարման զեկույցը և Կենսակայունության հաշվետվությունը՝ ներկայացնելով կորպորատիվ կառավարմանն ու կենսակայուն զարգացմանն առնչվող առավել մանրամասն տեղեկատվություն: Այս տարի ևս Բանկը կհրապարակի Կորպորատիվ կառավարման զեկույցը, Կենսակայունության հաշվետվությունը և տարեկան ֆինանսական հաշվետվությունները՝ շարունակելով զարգացնել առավել համապարփակ և թափանցիկ հաշվետվողականության ձևաչափը:

Համապատասխանության կարգավիճակ՝ համապատասխանում է մասամբ:

ՍԿՁԲՈՒՆՔ IV.3 ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ ԱՈՒԴԻՏԸ

Կազմակերպությունը պետք է ենթարկվի արտաքին աուդիտի անկախ, կոմպետենտ և որակավորված աուդիտորական կազմակերպության կողմից՝ աուդիտի, էթիկայի և անկախության միջազգային չափորոշիչներին համապատասխան՝ խորհրդին ու մասնակից-ներին ողջամիտ հավաստիացում տրամադրելու այն մասին, որ կազմակերպության ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով, արժանահավատորեն արտացոլում են դրա ֆինանսական վիճակը, գործունեության ֆինանսական արդյունքները և պատրաստվել են ֆինանսական հաշվետվությունների կիրառելի հիմունքներին համապատասխան:

Կազմակերպությունը պետք է ունենա աուդիտորական կազմակերպության ընտրության ձևակերպված և փաստաթղթավորված չափանիշներ, որոնք հնարավորություն են տալիս որոշել դրա անկախությունը կազմակերպությունից, խորհրդից, գործադիր մարմնից ու նշանակալից մասնակցից (մասնակիցներից):

Աուդիտորական կազմակերպության անկախությունն ապահովելու համար կազմակերպությունը պետք է ունենա դրա ընտրության կարգ, որը պետք է նախատեսի աուդիտորական կազմակերպության և աուդիտորների ռոտացիայի ժամկետները:

Աուդիտորական կազմակերպությունը ստուգում է նաև կազմակերպության ներքին հսկողության համակարգը և ռիսկերի կառավարումը:

Աուդիտորական կազմակերպությունը պետք է հաշվետու լինի մասնակիցներին:

Աուդիտորական կազմակերպությունը կարող է կազմակերպությանը մատուցել օրենքով չարգելված այլ ոչ աուդիտորական բնույթի ծառայություններ բացառապես խորհրդի/աուդիտի հանձնաժողովի թույլտվությամբ:

Խորհուրդը/աուդիտի հանձնաժողովը պետք է կանոնավոր հանդիպումներ ունենա աուդիտորների հետ:

Կանոնադրության 36.1-ին կետի, «Բանկերի և բանկային գործունեության մասին» օրենքի 58-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր տարի բանկի ֆինանսատնտեսական գործունեության ստուգման նպատակով Բանկը պետք է ներգրավի օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով աուդիտորական ծառայությունների իրականացման իրավունք ունեցող անկախ աուդիտ իրականացնող անձի՝ կնքելով նրա հետ համապատասխան պայմանագիր: Բանկի արտաքին աուդիտին ընտրում է Ընդհանուր ժողովը՝ Կենտրոնական բանկի կողմից սահմանված կարգով: Արտաքին աուդիտի ծառայությունների համար վճարվող գումարի չափը որոշում է Բանկի Խորհուրդը: Բանկի արտաքին աուդիտն իրականացնող անձը հաշվետու է Բաժնետերերի ընդհանուր ժողովին:

Խորհրդի 12.04.2024թ. թիվ 05/24-05Լ որոշմամբ հաստատված Արտաքին աուդիտորական կազմակերպության ընտրության կարգի 5.1.3-րդ և 5.1.4-րդ կետերի համաձայն՝ արտաքին աուդիտորական կազմակերպության ընտրության և վերջինիս հետ պայմանագիր կնքելիս կիրառվում են «Ֆինանսական կազմակերպությունների ֆինանսատնտեսական գործունեության աուդիտ իրականացնող անձին ներկայացվող չափանիշները» Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի կանոնակարգ 22-ով սահմանված պահանջները: Կանոնակարգ 22-ով սահմանված են կազմակերպության և պատասխանատու աուդիտորների ռոտացիայի ժամկետները: Այսպես, ֆինանսական կազմակերպության և աուդիտորական կազմակերպության միջև պայմանագիրը կարող է կնքվել մինչև 3 տարի ժամկետով: Աուդիտորական կազմակերպությունը կարող է իրականացնել միևնույն ֆինանսական կազմակերպության ֆինանսատնտեսական գործունեության աուդիտը անընդմեջ առավելագույնը 6 տարի, ընդ որում, տվյալ աուդիտորական կազմակերպության պատասխանատու աուդիտորը կարող է իրականացնել տվյալ ֆինանսական կազմակերպության աուդիտը առավելագույնը 3 տարի: Աուդիտորական կազմակերպությունը Կանոնակարգով նշված 6 տարի անընդմեջ աուդիտի իրականացման դեպքում չի կարող իրականացնել տվյալ ֆինանսական կազմակերպության աուդիտը առնվազն 3 տարի: Բանկը պահպանում է ռոտացիայի վերոնշյալ ժամկետները:

Համապատասխանության կարգավիճակ՝ համապատասխանում է:

ԳԼՈՒԽ V. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՇԱՀԱԿԻՑՆԵՐԻ ՀԵՏ

ՍԿԶԲՈՒՆՔ V.1 Կազմակերպության շահակիցները կորպորատիվ կառավարման համակարգում

Կազմակերպությունը պետք է ճանաչի իր շահակիցների իրավունքները, դերերն ու շահե-րը և խրախուսի կազմակերպության, մասնակիցների ու շահակիցների միջև ակտիվ համագործակ-ցությունը, որն ուղղված է արժեքի, այդ թվում՝ որակյալ աշխատատեղեր ստեղծելուն, ինչպես նաև կենսակայուն և դիմակայուն կազմակերպություն ձևավորելուն:

Շահակիցների ներդրումն արժեքավոր ռեսուրս է մրցունակ ու շահութաբեր բիզնես ձևավորելու համար: Կազմա-կերպության և մասնակիցների երկարաժամկետ շահերից է բխում էական շահակիցների բացահայտումը, նրանց օրինական շահերի ճանաչումը և նրանց հետ համագործակցության խթանումը:

Շահակիցների նկատմամբ կազմակերպությունները կարող են ստանձնել օրենսդրությամբ և պայմանագրերով նախատեսվածից ավել պարտավորություններ:

Շահակիցները պետք է կարողանան խորհրդին կամ իրավասու այլ մարմիններին ազատորեն, առանց սահմանա-փակումների ու հետապնդումների կամ խտրական վերաբերմունքի հայտնել իրենց մտահոգությունները կազմա-կերպության անօրինական կամ ոչ էթիկական գործելաոճի վերաբերյալ: Անօրինական և ոչ էթիկական վարքագծի վերաբերյալ բողոքների ներկայացման նպատակով կազմակերպությունը պետք է մշակի և ներդնի ազդարարման քաղաքականություն, ընթացակարգեր ու կառուցակարգեր:

Շահակիցների հետ հարաբերությունների մասին կազմակերպությունը հաղորդակցվում է կայունության հաշվետվութ-յունների միջոցով:

Հայտարարագրում հանգամանորեն ներկայացվել են Բանկի կողմից շահակիցներին տեղեկատվու-թյան տրամադրման, ծանուցումների կարգավորումները: Հավելենք, որ Բանկի և հաճախորդների հաղորդակցման գործընթացը կանոնակարգված է Բանկի Վարչության 29.01.2026թ. թիվ 01/007-36Լ որոշմամբ վերահաստատված Բանկի և հաճախորդների հաղորդակցման ընթացակարգով:

Բացի այդ, Վարչության նախագահի 2025թ. հոկտեմբերի 20-ի թիվ 92Լ հրամանով նոր խմբագրությամբ հաստատվել են Բանկային ծառայությունների մատուցման պայմանները, որոնցով մանրամասն կարգավորվում են հաճախորդների հետ հաղորդակցման հարաբերությունները:

Բանկն իր պաշտոնական կայքում հրապարակում է աշխատողների գործարար էթիկայի և կորպորատիվ վարվելակերպի կանոնները, որոնցով սահմանվում են այն սկզբունքները, որոնցով պետք է առաջնորդվի բանկի յուրաքանչյուր աշխատակից իր աշխատանքային պարտա-կանությունները կատարելիս և բանկի բնականոն գործունեությունն ապահովելիս:

Բանկում գործում են ազդարարման քաղաքականությանն առնչվող ներքին իրավական ակտեր, մասնավորապես, հակակոռուպցիոն քաղաքականությունը, Շահերի բախման և կանխարգելման կարգը, Համապատասխանության ռիսկի կառավարման կարգը, Համապատասխանության ռիսկի կառավարման ընթացակարգը, հաճախորդների բողոք-պահանջների և բողոքարկումների ներկայացման և քննության կանոնները:

2025թ.-ից ներդրված է նաև Բանկի տարբեր խումբ շահակիցների բնապահպանական և սոցիալական բնույթի մտահոգությունների ներկայացման արտաքին հաղորդակցման համակարգը, որից ստացված ազդակները պատշաճ մշակվում են Բանկի ներքին կարգավորումների համաձայն:

Համապատասխանության կարգավիճակ՝ համապատասխանում է:

«ԱՐԴՇԻՆԲԱՆԿ» ԲԲԸ ՎԱՐՉԱԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ

Հավելված 1
ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
«Արդշինբանկ» ԲԲԸ Խորհրդի
20.11.2025թ. թիվ 13/25-01- Լ որոշմամբ

Խորհրդի նախագահ՝
_____ Կարեն Սաֆարյան

Վարչություն

Դեպարտամենտ

Ստորաբաժանում

Վարչություն

Բաժնետերերի ընդհանուր ժողով

Բանկի խորհուրդ

Խորհրդի աշխատակազմ

Ներքին աուդիտի ծառայություն

Անվտանգության ծառայություն

Վարչության նախագահ (CEO)

Կորպորատիվ բիզնեսի տնօրեն

Կորպորատիվ բիզնեսի զարգացման վարչություն

Կորպորատիվ հաճախորդների հետ աշխատանքների վարչություն

Գործարքների կառուցվածքի մշակման վարչություն

Կորպորատիվ բիզնեսի մասնաճյուղ

Կորպորատիվ բիզնեսի վերլուծական վարչություն

Առցանց ծառայությունների վարչություն

Առևտրի ֆինանսավորման վարչություն

ՓՄՁ բիզնեսի տնօրեն

ՓՄՁ բիզնեսի զարգացման վարչություն

ՓՄՁ հաճախորդների հետ աշխատանքների վարչություն

ՓՄՁ հաճախորդների մշտադիտարկման վարչություն

Մանրածախ բիզնեսի տնօրեն

Մանրածախ բիզնեսի զարգացման վարչություն

Ցանցային վաճառքների վարչություն

Մասնաճյուղ № XX և Հաճախորդների սպասարկման վարչություն

Կենտրոնացված վաճառքների վարչություն

«ՍՏԱՏՈՒՍ» հաճախորդների սպասարկման վարչություն

«ՍՏԱՏՈՒՍ» ծառայությունների զարգացման վարչություն

ՎՆ տեղակալ, Փրայվիթ բանկինգի տնօրեն

Փրայվիթ բանկինգի զարգացման վարչություն

Փրայվիթ հաճախորդների հետ աշխատանքների վարչություն

Պրեմիում հաճախորդների հետ աշխատանքների վարչություն

Վի Այ Փի հաճախորդների սպասարկման վարչություն

Փրայվիթ բանկինգի վաճառքների վարչություն

ՎՆ տեղակալ, Ներդրումային բիզնեսի տնօրեն

Ներդրումային բիզնեսի զարգացման վարչություն

Ֆինանսական ինստիտուտների հետ աշխատանքների վարչություն

Գանձապետական գործառնությունների վարչություն

Ներդրումային բանկինգի վարչություն

Ներդրողների հետ աշխատանքների վարչություն

Ներդրումային գործառնությունների վարչություն

Ֆինանսական շուկաներում գործառնությունների ուղեկցման վարչություն

Խնդրահարույց ակտիվների կառավարման դեպարտամենտ

Խնդրահարույց ակտիվների գործընթացների զարգացման վարչություն

Կորպորատիվ վարկերի վերակառուցման վարչություն

Մանրածախ վարկերի վերակառուցման վարչություն

Դատական գործերի վարման վարչություն

Խնդրահարույց ակտիվների վարչություն

Բռնագանձված գույքի իրացման վարչություն

Ոչ պրոֆիլային ակտիվների կառավարման դեպարտամենտ

Գործերի կառավարչություն

Կապիտալ շինարարության վարչություն

Ոչ պրոֆիլային ակտիվների կառավարման վարչություն

Ռիսկերի կառավարման տնօրեն

Վարկային ռիսկի գնահատման վարչություն

Տեղեկատվական անվտանգության վարչություն

Գործառնական ռիսկերի կառավարման վարչություն

Ֆինանսական ռիսկերի կառավարման վարչություն

Ֆինանսական դիտարկումների վարչություն

Համապատասխանության ապահովման վարչություն

Ռիսկային ակտիվների վերլուծության, մոնիթորինգի և հաշվետվողականության վարչություն

Ռիսկի ախորժակի և մոդելների կառավարման վարչություն

Իրավական հարցերի գծով տնօրեն

Իրավական ապահովման վարչություն

Դատական ներկայացուցչության վարչություն

Միջազգային իրավական ապահովման վարչություն

Ֆինանսական տնօրեն

Հաշվապահություն

Ստեղծական պլանավորման վարչություն

Ֆինանսավերլուծական վարչություն

Թվայնացման և տաղանդների կառավարման գծով տնօրեն

Անձնակազմի կառավարման վարչություն

Նախագծային գործունեության կառավարման վարչություն

Վարչական հարցերով վարչություն

Բանկային համակարգերի զարգացման վարչություն

Թվային բանկինգի զարգացման վարչություն

Տեղեկատվական տեխնոլոգիաների սպասարկման վարչություն

Մեթոդաբանության վարչություն

Ինովացիաների և SS արխիտեկտուրայի կենտրոն

Ծրագրավորման կենտրոն

Գործառնական դեպարտամենտ

Վարկային հետգործառնությունների վարչություն

Վճարահաշվարկային գործառնությունների վարչություն

Վճարային քարտերով գործառնությունների վարչություն

Բանկային հաշիվների և դրամարկղային գործառնությունների վարչություն

Թեստավորման կենտրոն

Տվյալների կառավարման կենտրոն

Բիզնեսի զարգացման դեպարտամենտ

Ռազմավարական մարքեթինգի վարչություն

Մարքեթինգային հաղորդակցություններ վարչություն

Փարիզի ներկայացուցչություն

Դուբայի ներկայացուցչություն

Լոս-Անջելոսի ներկայացուցչություն

Որակի կառավարման վարչություն

«Արդշինբանկ» ԲԲԸ Խորհրդի նախագահ Կարեն Սուրենի Սաֆարյան

Կարեն Սաֆարյանը հանդիսանում է «Արդշինբանկ» ԲԲԸ խորհրդի նախագահ բանկի հիմնադրման պահից՝ 2003 թվականից:

Կարեն Սաֆարյանն իր աշխատանքային գործունեությունը սկսել է ԲՈՒՀ-ը ավարտելուն պես՝ 1985 թվականին: Մինչև 1994 թվականը նա աշխատել է Հայաստանի տարբեր արդյունաբերական կազմակերպություններում՝ որպես ինժեներ: Հետագայում նա տեղափոխվել է Ռուսաստան, ուր սկսել է ձեռներեցի իր կարիերան:

Արդեն 2000-ականների սկզբին Կարեն Սաֆարյանն ուներ մի քանի տասնյակ բիզնեսներ Ռուսաստանում ու Հայաստանում: Բացի բանկային բիզնեսից, այդ ժամանակահատվածում Կարեն Սաֆարյանի բիզնես հետաքրքրությունները հիմնականում վերաբերում էին արդյունաբերական ու շինարարական ոլորտներին: Թերևս ամենանշանակալի շինարարական նախագծերից են եղել Երևանում Կառավարության թիվ 3 ու Երևանի քաղաքապետարանի շենքերի կառուցումը:

2007 թվականից հետո Կարեն Սաֆարյանը փոխել է իր բիզնես հետաքրքրությունների շրջանակն ու աստիճանաբար դուրս եկել Ռուսաստանի շուկայից: Զուգահեռաբար, հատկապես 2008 թվականի ճգնաժամից հետո, նա նաև դադարեցրել է շինարարության ու արդյունաբերական ոլորտներում իր նախագծերը:

Սկսած 2019 թվականից Կարեն Սաֆարյանի ամբողջ բիզնես գործունեությունը կենտրոնացված է Հայաստանում՝ ֆինանսական ոլորտում: Կարեն Սաֆարյանի հիմնադրած «Արինս գրուպ» հոլդինգային ընկերության կազմում ներկայումս գործում են «Արդշինբանկ» ՓԲԸ, «Արմենիա» ապահովագրական ընկերությունը, ներդրումային մի շարք ֆոնդեր:

Կարեն Սաֆարյանն ավարտել է Ադրբեջանի պոլիտեխնիկական ինստիտուտը:

Կարեն Սաֆարյանը ծնվել է 05.01.1963 թվականին, ունի 3 դուստր:

«Արդշինբանկ» ԲԲԸ Խորհրդի անդամ Արամ Հուսիկի Անդրեասյան

Արամ Անդրեասյանը ստանձնել է «Արդշինբանկ» ԲԲԸ խորհրդի անդամի պաշտոնը 2009 թվականին: Մինչ այդ, 1994-1998 թվականներին հանդիսացել է «Արդշինբանկ» ԲԲԸ վարչության նախագահի տեղակալ և վարչության նախագահ, 2003-2009 թվականներին զբաղեցրել է «Արդշինինվեստբանկ» ՓԲԸ վարչության նախագահի պաշտոնը, իսկ 2005-2006 թվականներին հանդիսացել է խորհրդի անդամ-վարչության նախագահ:

Նախքան բանկային ոլորտում գործունեություն սկսելը՝ 1980-1992 թվականներին, Արամ Անդրեասյանը աշխատել է «Հրազդան-Մաշ» արտադրական միավորումում՝ որպես տնտեսագետ, պլանավորման բաժնի պետ, ֆինանսական բաժնի պետ և գլխավոր տնօրենի տեղակալ: 1992-1994 թվականներին աշխատել է Հրազդանի շրջանի հարկային պետական տեսչությունում՝ որպես տեսչության պետ, իսկ 1998-2003 թվականներին ՀՀ նախագահի վերահսկողության ծառայությունում աշխատել է որպես վերահսկողության ծառայության պետի խորհրդատու և ՀՀ գործադիր իշխանության վերահսկող մարմինների բաժնի վարիչ:

Երկար տարիներ զբաղեցրել է «Միջազգային Բիզնես Կենտրոն» ՀՁ ՓԲԸ տնօրենների խորհրդի նախագահի տեղակալ-խորհրդի անդամի պաշտոնը:

Արամ Անդրեասյանն ավարտել է Երևանի ժողովրդական տնտեսության ինստիտուտը:

Արամ Անդրեասյանը ծնվել է 11.10.1955 թվականին, ամուսնացած է, ունի 1 որդի, 2 դուստր

«Արդշինբանկ» ԲԲԸ Խորհրդի անդամ Վաչե Վազգենի Գաբրիելյան

Վաչե Գաբրիելյանը ստանձնել է «Արդշինբանկ» ԲԲԸ խորհրդի անդամի պաշտոնը 2019 թվականից: Նա հանդիսանում է նաև «Արմենիա Ինշուրանս» ապահովագրական ՍՊԸ խորհրդի անդամ, ինչպես նաև՝ 2019 թվականից զբաղեցնում է Հայաստանի ամերիկյան համալսարանի բիզնեսի և տնտեսագիտության ֆակուլտետի դեկանի պաշտոնը, որտեղ դասավանդում է 1999 թվականից:

Հանրային կառավարման և ֆինանսների բնագավառում իր գործունեությունը սկսել է 1990 թվականին՝ որպես ՀՀ Գերագույն Խորհրդի ֆինանսավարկային և բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովի փորձագետ:

Վաչե Գաբրիելյանն իր դասախոսական փորձառությունն սկսել է դեռ 1994 թվականին, մինչև 1998 թվականը նա դասախոսել է Ռատգերս համալսարանի հանրային կառավարման և քաղաքագիտության ֆակուլտետներում և եղել է հանրային արտադրողականության կենտրոնի փոխտնօրենը:

1998-2010 թվականներին աշխատել է ՀՀ Կենտրոնական բանկում՝ զբաղեցնելով նախագահի տեղակալի, մինչ այդ՝ նախագահի խորհրդականի և խորհրդի անդամի պաշտոնները:

2010-2013 թվականներին Վաչե Գաբրիելյանը ստանձնել է ՀՀ ֆինանսների նախարարի պաշտոնը, մինչ այդ հանդիսացել է ՀՀ Կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարար, 2014 թվականի ապրիլից մինչև նոյեմբերը աշխատել է որպես ՀՀ վարչապետի գլխավոր խորհրդական, այնուհետև հանդիսացել է ՀՀ միջազգային տնտեսական ինտեգրման և բարեփոխումների նախարար, ՀՀ փոխվարչապետ:

Վաչե Գաբրիելյանն ավարտել է ԵՊՀ տնտեսագիտական կիբերնետիկայի ֆակուլտետը, ունի Ջերսի նահանգի Ռատգերս համալսարանի Պետական կառավարման մագիստրի (MPA) և գիտությունների դոկտորի (Ph.D.) աստիճան

Վաչե Գաբրիելյանը ծնվել է 24.11.1968 թվականին, ամուսնացած է, ունի 1 որդի, 1 դուստր:

«Արդշինբանկ» ԲԲԸ Խորհրդի անդամ Տիգրան Սուրենի Սարգսյան

Տիգրան Սարգսյանը ստանձնել է «Արդշինբանկ» ԲԲԸ խորհրդի անդամի պաշտոնը 2022 թվականից: 2020 թվականից զբաղեցնում է Եվրասիական զարգացման բանկի Կառավարման խորհրդի նախագահի տեղակալի պաշտոնը, իսկ մինչ այդ՝ 2016 - 2020 թվականներին, հանդիսացել է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի նախագահ:

Իր գիտական գործունեությունը Տիգրան Սարգսյանը սկսել է 1987-1990 թվականներին՝ աշխատելով որպես ավագ գիտաշխատող ու Հայաստանի տնտեսության և պլանավորման գիտահետազոտական ինստիտուտի միջազգային տնտեսական կապերի գիտահետազոտական խմբի ղեկավար, իսկ 1988-1990 թվականներին՝ երիտասարդ մասնագետների ու գիտնականների հանրապետական խորհրդի նախագահ:

Հանրային կառավարման և ֆինանսների բնագավառում Տիգրան Սարգսյանն սկսել է աշխատել 1990 թվականին՝ հանդիսանալով Գերագույն Խորհրդի պատգամավոր, Ազգային Ժողովի ֆինանսավարկային հարցերով հանձնաժողովի նախագահ:

1995-1998 թվականներին Տիգրան Սարգսյանը գլխավորել է Հայաստանի բանկերի ասոցիացիան: 1998-2008 թվականներին նա աշխատել է որպես ՀՀ Կենտրոնական բանկի նախագահ, իսկ 2014-2016 թվականներին ստանձնել է Ամերիկայի Միացյալ Նահանգներում Հայաստանի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպանի պաշտոնավարումը:

Տիգրան Սարգսյանը 2008-2014 թվականներին զբաղեցրել է Հայաստանի վարչապետի պաշտոնը: Տիգրան Սարգսյանն ավարտել է Երևանի ժողովրդական տնտեսության ինստիտուտի պլանավորման ու էկոնոմիկայի ֆակուլտետը և Վոզնեսենսկու անվան Լենինգրադի ֆինանսատնտեսական ինստիտուտը: Ունի տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճան:

Տիգրան Սարգսյանը ծնվել է 29.01.1960 թվականին, ամուսնացած է, ունի 2 որդի, 1 դուստր:

«Արդշինբանկ» ԲԲԸ Խորհրդի անդամ Ալեքսանդր Ֆոն Գլայխ

Ալեքսանդր Ֆոն Գլայխը ստանձնել է «Արդշինբանկ» ԲԲԸ խորհրդի անդամի պաշտոնը 2023 թվականից:Միաժամանակ հանդիսանում է TOO Global Expert Development Group Տնօրենների խորհրդի անդամ, իսկ 2025 թվականի հուլիսից՝ նաև Ուզբեկստանի Ազգային բանկի Դիտորդ խորհրդի անդամ:

Նախկինում զբաղեցրել է մի շարք ղեկավար պաշտոններ ֆինանսական ոլորտում.

2016–2020 թթ. աշխատել է որպես ֆինանսական տնօրեն «Յունի-Կրեդիտ Բանկ»-ում (UniCredit Bank), Ղազախստան:

1999–2003 թթ. «ՊրոԿրեդիտ Բանկ»-ում ((ProCredit Bank), Վրաստան) զբաղեցրել է գործադիր տնօրենի պաշտոնը: 2003–2006 թթ. աշխատել է որպես ներդրումային գծով տնօրեն Միջազգային ֆինանսական կորպորացիայում (IFC), Համաշխարհային բանկի խմբում: 2006–2008 թթ. եղել է գործադիր տնօրենի տեղակալ «Կասպի Բանկ»-ում (Kaspi Bank): 2014-2016 թվականներին աշխատել է որպես Խորվաթիայի Hypo Alpe Adria բանկի գլխավոր տնօրեն, իսկ 2014-2017 թվականներին Ալեքսանդր Ֆոն Գլայխը զբաղեցրել է Ռուսաստանի Դաշնության Ալիանզ (Allianz) ապահովագրական ընկերության գլխավոր տնօրենի տեղակալի պաշտոնը և Allianz Ուկրաինայի տնօրենների խորհրդի անդամի պաշտոնը: 2018–2023թթ. եղել է «Ուզպրոմստրոյբանկ» ԲԲԸ-ի Տնօրենների խորհրդի և Դիտորդ խորհրդի անդամ, իսկ 2021–2022 թթ՝ տնօրենների խորհրդի անդամ «Կազախտելեկոմ»-ում (Kazakhtelecom):

Ալեքսանդր ֆոն Գլայխը ավարտել է Բոննի համալսարանի (Գերմանիա)՝ տնտեսագիտության և իրավունքի ֆակուլտետը:

Ալեքսանդր Ֆոն Գլայխը ծնվել է 16.06.1967 թվականին, ամուսնացած է, ունի 2 որդի:

«Արդշինբանկ» ԲԲԸ Խորհրդի անդամ Ֆիլիպպ դեռ Մեգրեդիտչիան

Ֆիլիպպ Դեռ Մեգրեդիտչիանը ստանձնել է «Արդշինբանկ» ԲԲԸ խորհրդի անդամի պաշտոնը 2025 թվականին: Նա հանդիսանում է Փարիզում հիմնված ներդրումային ընկերության Olma Holdings SAS նոր ներդրումային հարթակի գլխավոր գործադիր տնօրենը, ինչպես նաև 2012 թվականից մինչև 2025 թվականի սեպտեմբերը եղել է OLMA Capital Management ներդրումների կառավարման ընկերության ղեկավարն ու հիմնադիրը, որը կառավարում է OLMA Luxury Holdings-ը:

Մասնավոր կապիտալի, միաձուլումների և ձեռքբերումների, ինչպես նաև ֆինանսական խորհրդատվության ոլորտում ավելի քան 25 տարվա փորձ ունեցող Ֆիլիպպ Դեռ Մեգրեդիտչիանը ղեկավար պաշտոններ է զբաղեցրել մի շարք միջազգային ֆինանսական հաստատություններում: OLMA-ն հիմնադրելուց առաջ Ֆիլիպպը եղել է Baring Vostok Capital Partners-ի գործընկեր (2004-08), Eagle Venture Partners-ի գործադիր տնօրեն (2002-04), որը պատասխանատու էր Ռուսաստանում և Ղազախստանում ՎԶԵԲ-ի ներդրումների վերահսկողության և դուրսբերման համար, Meridian Capital Management միաձուլումների և ձեռքբերումների խորհրդատվական ընկերության հիմնադիր և գործադիր տնօրեն (1997-2002), ինչպես նաև ներդրումային վերլուծաբան Framlington Investments-ում (1993-97) և Crédit Commercial de France-ում (1992-93): Նա նաև ակտիվորեն ներգրավված է այլ մասնագիտական գործունեություններում՝ լինելով Domaine Chanzy SA-ի նախագահը և զբաղեցնելով ղեկավար պաշտոններ Caviar House & Prunier Group SA-ում և Artemest Srl-ում:

Ֆիլիպպ Դեռ Մեգրեդիտչիանը ունի բիզնեսի կառավարման մագիստրոսի աստիճան Փարիզի École des Hautes Études Commerciales (HEC)-ից:

Ֆիլիպպ Դեռ Մեգրեդիտչիանը ծնվել է 12.02.1970, ամուսնացած է, ունի 3 որդի և 1 դուստր:

Հավելված 3 - Վարչության անդամների հակիրճ կենսագրություն

«Արդշինբանկ» ԲԲԸ Վարչության նախագահ

Արտակ Կլիմենտի Անանյան

Արտակ Անանյանը ստանձնել է «Արդշինբանկ» ԲԲԸ վարչության նախագահի պաշտոնը 2018 թվականի օգոստոսին: Մինչ այդ, 2017-2018 թվականներին հանդիսացել է «Արդշինբանկ» ՓԲԸ վարչության նախագահի տեղակալը, ոչ պրոֆիլային ակտիվների կառավարման տնօրենը:

Հայաստանի ֆինանսական համակարգում Արտակ Անանյանի ավելի քան 25 տարվա փորձը սկսվել է ՀՀ Կենտրոնական բանկում 1998 թվականին՝ իբրև բանկային վերահսկողության դեպարտամենտի տեսչական վերահսկողության վարչության մասնագետ: Հետագայում նա աշխատել է «Հայագրոբանկ» ԲԲԸ-ում՝ զբաղեցնելով բանկային ռիսկերի վերահսկման և տարածքային ստորաբաժանումների գործունեության կոորդինացման խմբի ղեկավարի, բանկային ռիսկերի վերահսկման և տեղեկատվական հոսքերի անվտանգության խմբի ղեկավարի, ներքին աուդիտի և վերլուծությունների վարչության պետի, վարկային դեպարտամենտի պետ-գործադիր տնօրենի տեղակալի, վարչության անդամի-գործադիր տնօրենի տեղակալի պաշտոնները:

«Արդշինբանկ» ՓԲԸ-ում Արտակ Անանյանի աշխատանքային գործունեությունը սկսվել է 2003 թվականին: Այստեղ նա զբաղեցրել է տարածքային կառավարման վարչության պետի, վարկային դեպարտամենտի տնօրենի, ռազմավարական հաճախորդների դեպարտամենտի տնօրենի, կորպորատիվ հաճախորդների դեպարտամենտի տնօրեն և վարչության անդամի պաշտոնները: 2015-2017 թվականների նա եղել է «Առեքսիմբանկ Գազպրոմբանկի խումբ» ՓԲԸ-ի գլխավոր տնօրենը:

Արտակ Անանյանը ավարտել է Երևանի պետական համալսարանի մեխանիկայի ֆակուլտետը՝ մաթեմատիկոս-կիրառողի որակավորմամբ: Այնուհետև ուսանել է ՀՀ ԳԱԱ մեխանիկայի ինստիտուտի ասպիրանտուրայում և ստացել ֆիզ. մաթ. գիտությունների թեկնածուի գիտական աստիճան:

Արտակ Անանյանը ծնվել է 13.02.1972 թվականին, ամուսնացած է, ունի երկու որդի:

«Արդշինբանկ» ԲԲԸ վարչության նախագահի տեղակալ, փրայվիթ բանկինգի տնօրեն

Արթուր Էդուարդի Գյուլազյան

Արթուր Գյուլազյանը ստանձնել է «Արդշինբանկ» ԲԲԸ վարչության նախագահի տեղակալ, փրայվիթ բանկինգի տնօրենի պաշտոնը 2022 թվականի նոյեմբերին: Մինչ այդ, 2008 թվականից, նա հանդիսացել է բանկի ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարը, իսկ 2013 թվականից զբաղեցրել է մանրածախ բիզնեսի ու կորպորատիվ բիզնեսի տնօրենի պաշտոնները:

Հայաստանի ֆինանսական համակարգում աշխատելու ավելի քան 20 տարվա մասնագիտական փորձը սկիզբ է առել 2003 թվականին՝ ՀՀ Կենտրոնական բանկի բանկային վերահսկողության դեպարտամենտում, որտեղ նա աշխատել է որպես մասնագետ, վերահսկող, ավագ վերահսկող:

Արթուր Գյուլազյանը ավարտել է Երևանի պետական տնտեսագիտական համալսարանը, ստացել տնտեսագետի որակավորում, այնուհետև գերազանցությամբ ավարտել Գլազգոյի համալսարանը և ստացել միջազգային մենեջմենթի և առաջնորդության գիտության մագիստրոսի կոչում:

Արթուր Գյուլազյանը ծնվել է 24.05.1979 թվականին, ամուսնացած է, ունի մեկ դուստր, երկու որդի:

«Արդշինբանկ» ԲԲԸ վարչության նախագահի տեղակալ, ներդրումային բիզնեսի տնօրեն

Դավիթ Ռաֆայելի Սարգսյան

Դավիթ Սարգսյանը ստանձնել է «Արդշինբանկ» ԲԲԸ վարչության նախագահի տեղակալի, ներդրումային բիզնեսի տնօրենի պաշտոնը 2022 թվականի նոյեմբերից: Մինչ այդ, 2014 թվականից, հանդիսացել է «Արդշինբանկ» ՓԲԸ ֆինանսական տնօրենը:

Ֆինանսաբանկային ոլորտում իր աշխատանքային գործունեությունը Դավիթ Սարգսյանը սկսել է ՀՀ ֆինանսների նախարարությունում՝ իբրև արտաքին պետական պարտքի կառավարման մասնագետ: Հետագայում շուրջ ինը տարի աշխատել է ՀՀ Կենտրոնական բանկում՝ զբաղեցնելով նախագահի օգնական-ռեֆերենտի, բանկային մեթոդաբանության ու կարգավորման բաժնի պետի, Ֆինանսական համակարգի քաղաքականության ու վերլուծությունների վարչության պետի պաշտոնները: Հանրային կառավարման և ֆինանսների բնագավառում 25 տարուց ավելի իր աշխատանքային փորձը ներառում է նաև ՀՀ ֆինանսների նախարարի պաշտոնը 2013-2014 թվականներին և ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավարի պաշտոնը՝ 2008-2013 թվականներին:

Դավիթ Սարգսյանը ավարտել է Երևանի պետական տնտեսագիտական համալսարանը, ստացել տնտեսագետի որակավորում, այնուհետև ուսանել նույն համալսարանի ասպիրանտուրայում և ստացել տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճան:

Դավիթ Սարգսյանը ծնվել է 14.07.1977 թվականին, ամուսնացած է, ունի մեկ դուստր, երկու որդի:

«Արդշինբանկ» ԲԲԸ վարչության անդամ, ռիսկերի կառավարման տնօրեն

Լուսինե Ռուբենի Ներսիսյան

Լուսինե Ներսիսյանը ստանձնել է «Արդշինբանկ» ԲԲԸ ռիսկերի կառավարման տնօրենի պաշտոնը 2023 թվականի մայիսին: Մինչ այդ, 2017-2018 թվականներին, նա զբաղեցրել է «Արդշինբանկ» ՓԲԸ գլխավոր հաշվապահի պաշտոնը, իսկ հետագայում, 2018 թվականից հանդիսացել է բանկի ներքին աուդիտի ծառայության ղեկավարը:

Հայաստանի ֆինանսական համակարգում Լուսինե Ներսիսյանի ավելի քան 30 տարվա մասնագիտական փորձը սկիզբ է առել 1992 թվականին Ազգային կոմերցիոն բանկ «Արմենիա»-ի թղթակցային հարաբերությունների և արտարժութային գործառնությունների բաժնում՝ որպես առաջատար մասնագետ: Հետագայում նա աշխատել է «Նոյ» առևտրային բանկում՝ որպես հաշվապահ, «Արդշինբանկ» ԲԲԸ-ում (լուծարվել է ՀՀ ԿԲ Խորհրդի 29.01.2025թ. թիվ 11Ա որոշմամբ)՝ միջազգային հարաբերությունների վարչության բաժնում: 1996թ-ին միջազգային փորձի ձեռքբերման նպատակով նա գործուղվել է Bank Of America եռամսյա ժամկետով: 2004-ից սկսած Լուսինե Ներսիսյանը զբաղեցրել է միջազգային բանկերում տարբեր ղեկավար պաշտոններ՝ «Սևծովյան Միջազգային Առևտրային Բանկ» (Հայաստան) ՓԲԸ գլխավոր հաշվապահ, «Պրոկրեդիտ Բանկ» ՓԲԸ գլխավոր հաշվապահ և հետագայում գործադիր տնօրենի տեղակալ:

Լուսինե Ներսիսյանը ավարտել է Երևանի Բանկային տնտեսագիտական ինստիտուտը, որակավորվել է ՊրոԿրեդիտ Հոլդինգ կառավարման ակադեմիայում (Գերմանիա) և ստացել բանկային գործի թոփ մենեջերի որակավորում, ինչպես նաև ստացել է ACCA աուդիտորի և հաշվապահի միջազգային որակավորում (Մեծ Բրիտանիա):

Լուսինե Ներսիսյանը ծնվել է 30.07.1975 թվականին, ամուսնացած է, ունի մեկ դուստր:

«Արդշինբանկ» ԲԲԸ վարչության անդամ, կորպորատիվ բիզնեսի տնօրեն

Արմեն Արթուրի Գասպարյան

Արմեն Գասպարյանը ստանձնել է «Արդշինբանկ» ԲԲԸ կորպորատիվ բիզնեսի տնօրենի պաշտոնը 2023 թվականի ապրիլից: Մինչ այդ, 2015-2019 թվականներին, հանդիսացել է «Արդշինբանկ» ՓԲԸ ռազմավարական զարգացման տնօրեն, իսկ 2019-2023 թվականներին՝ ոչ պրոֆիլային ակտիվների կառավարման տնօրեն:

Իր աշխատանքային կարիերան սկսել է հենց Արդշինբանկում՝ 2005 թվականին, վճարային քարտերով ծառայությունների զարգացման վարչությունում՝ որպես բաժնի պետ, վարչության պետի տեղակալ-բաժնի պետ, վարչության պետ: Նա զբաղեցրել է նաև մանրածախ բիզնեսի տնօրենի տեղակալի պաշտոնը:

Արմեն Գասպարյանը ավարտել է Երևանի ճարտարապետության և շինարարության պետական համալսարանը՝ ձեռնարկությունների տնտեսագիտություն և կառավարում մասնագիտությամբ, այնուհետև ավարտել է Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանի բիզնես դպրոցը՝ ֆինանսներ և վարկ մասնագիտությամբ: Նա նաև ուսանել է SBS Swiss բիզնես դպրոցում, ստանալով MBA աստիճան և Օքսֆորդի համալսարանի Սաիդ բիզնես դպրոցում՝ ստանալով գործադիր կառավարման դիպլոմ:

Արմեն Գասպարյանը ծնվել է 15.02.1982 թվականին, ամուսնացած է, ունի մեկ դուստր:

«Արդշինբանկ» ԲԲԸ վարչության անդամ, թվայնացման և տաղանդների կառավարման գծով տնօրեն

Հարություն Զաքարի Իսպիրյան

Հարություն Իսպիրյանը ստանձնել է «Արդշինբանկ» ԲԲԸ թվայնացման և տաղանդների կառավարման գծով տնօրենի պաշտոնը 2023 թվականին: Մինչ այդ, 2015 թվականից նա հանդիսացել է բանկի գործառնական տնօրենը:

Հարություն Իսպիրյանը իր աշխատանքային կարիերան սկսել է հենց «Արդշինբանկ» ՓԲԸ-ում 2005 թվականին՝ աշխատելով բանկի ակտիվների և պասիվների կառավարման վարչությունում՝ որպես վերլուծաբան, բաժնի պետ: Տարբեր ժամանակահատվածներում նաև հանդիսացել է բանկի ներքին աուդիտի ստորաբաժանման անդամ, ղեկավարի տեղակալ, ղեկավար:

Հարություն Իսպիրյանը ավարտել է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանը և ասպիրանտուրան, ստացել տնտեսագիտության թեկնածուի կոչում: Այնուհետև վերապատրաստվել է Մոսկվայի Սկոլկովո բիզնես դպրոցում Chief Digital Transformation Officer ծրագրով:

Հարություն Իսպիրյանը ծնվել է 22.12.1982 թվականին, ամուսնացած է, ունի երկու դուստր:

«Արդշինբանկ» ԲԲԸ վարչության անդամ, իրավական հարցերի գծով տնօրեն

Ռուստամ Վարդանի Բադասյան

Ռուստամ Բադասյանը ստանձնել է «Արդշինբանկ» ԲԲԸ վարչության անդամի, իրավական հարցերի գծով տնօրենի պաշտոնը 2025 թվականի հունվարից:

Ռուստամ Բադասյանը սկսել է իր մասնագիտական գործունեությունը 2012 թվականին հանրային հաստվածում՝ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեում: 2014-2018 թվականներին տարբեր ընկերություններում զբաղեցրել է իրավաբանի և ավագ իրավաբանի պաշտոններ, հանդիսացել է առաջատար փաստաբանական գրասենյակներից մեկի գործընկեր: Հաջորդիվ Ռուստամ Բադասյանը հանդիսացել է ՀՀ ՊԵԿ նախագահի տեղակալը, այնուհետև՝ ՊԵԿ նախագահ:

2019-2021 թվականներին զբաղեցրել է ՀՀ արդարադատության նախարարի պաշտոնը:

Հանրային հատվածում առաջնորդել է բիզնես պրոցեսների օպտիմալացումը, թվայնացման նախագծերը և մի շարք այլ հիմնարար բարեփոխումներ:

Մասնավոր հատվածում ներկայացրել է տնտեսվարող սուբյեկտների շահերը ՀՀ դատարաններում և վարչական մարմինների առջև, հաջողությամբ ավարտված մի շարք գործերի մասնակից է:

Ռուստամ Բադասյանը ավարտել է Երևանի պետական համալսարանը՝ իրավագիտություն մասնագիտությամբ, այնուհետև ուսանել ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնում, ստացել իրավագետի որակավորում:

Ռուստամ Բադասյանը ծնվել է 27.01.1991 թվականին, ամուսնացած է, ունի մեկ որդի:

«Արդշինբանկ» ԲԲԸ վարչության անդամ, գլխավոր հաշվապահ

Արմինե Սերյոժայի Խաչատրյան

Արմինե Խաչատրյանը ստանձնել է «Արդշինբանկ» ԲԲԸ-ի վարչության անդամի, գլխավոր հաշվապահի պաշտոնը 2025 թվականի ապրիլից: Մինչ այդ, 2018-ից նա հանդիսացել է Բանկի գլխավոր հաշվապահի տեղակալ և 2013-ից՝ ՀՀ ԿԲ ներկայացվող հաշվետվությունների բաժնի ղեկավար:

Արմինե Խաչատրյանն իր կարիերան սկսել է 2003 թվականին՝ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ում, այնուհետև, 2005-ից շուրջ 8 տարի զբաղեցրել է տարբեր պաշտոններ Արդշինբանկի մասնաճյուղերում:

Արմինե Խաչատրյանը ավարտել է Երևանի պետական տնտեսագիտական համալսարանը, ստացել տնտեսագետի որակավորում:

Արմինե Խաչատրյանը ծնվել է 17.03.1981 թվականին, ամուսնացած է, ունի մեկ դուստր:

«Արդշինբանկ» ԲԲԸ վարչության անդամ, Մանրածախ բիզնեսի տնօրեն

Միհրան Գառնիկի Մուրադյան

Միհրան Մուրադյանը ստանձնել է «Արդշինբանկ» ԲԲԸ-ի մանրածախ բիզնեսի տնօրենի պաշտոնը 2026 թվականի հունվարից: Մինչ այդ, 2025 թվականի ապրիլից, նա հանդիսացել է ՓՄՁ բիզնեսի տնօրեն: 2024 թվականի նոյեմբերից, նա հանդիսացել է «Արդշինինվեստբանկ» ՓԲԸ-ի (մինչև անվանափոխումը՝ «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ» ՓԲԸ) անհատական բանկային ծառայությունների դեպարտամենտի տնօրենը:

Նա փորձառու տնտեսագետ է՝ բանկային գործունեության, ֆինանսական կառավարման և տնտեսական ռազմավարության ոլորտներում ավելի քան երկու տասնամյակի լայն փորձով:

2002 թվականին սկսելով իր մասնագիտական ուղին՝ Միհրան Մուրադյանն աշխատել է որպես գլխավոր հաշվապահ «Էջմիածին Ռոգում» ՊՓԲԸ-ի Հայթաղ մասնաճյուղում: Այս պաշտոնում նա պատասխանատու է եղել ֆինանսական հաշվառումների վերահսկման և հաշվետվությունների ճշգրտության ապահովման համար՝ նպաստելով ընկերության գործառնական արդյունավետությանը:

2003 թվականին նա տեղափոխվել է սպորտի ոլորտ և ստանձնել Հայաստանի առաջատար ֆուտբոլային ակումբներից մեկի՝ «Արարատ» ֆուտբոլային ակումբի ֆինանսական տնօրենի պաշտոնը:

2004 թվականին Միհրան Մուրադյանն աշխատանքի է անցել Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստանում, որտեղ գրեթե երկու տասնամյակ աշխատելու ընթացքում ձեռք է բերել անհատական բանկային ծառայությունների ոլորտում համապարփակ փորձառություն: Աստիճանաբար առաջադիմելով Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստանում՝ նա 2012 թվականից մինչև 2024 թվականը ստանձնել է անհատական բանկային ծառայությունների դեպարտամենտի տնօրենի պաշտոնը: Նրա ղեկավարությամբ դեպարտամենտն ընդլայնել է մատուցվող ծառայությունների ցանկը և բարելավել հաճախորդների գոհունակությունը՝ զգալիորեն նպաստելով բանկի շուկայական դիրքի ամրապնդմանը:

Միհրան Մուրադյանը ավարտել է Երևանի պետական համալսարանը, ստացել տնտեսագետի որակավորում:

Միհրան Մուրադյանը ծնվել է 27.10.1976 թվականին: Ամուսնացած է, ունի երկու դուստր, մեկ որդի:

«Արդշինբանկ» ԲԲԸ վարչության անդամ, ֆինանսական տնօրեն

Գարեգին Արարատի Գևորգյան

Գարեգին Գևորգյանը ստանձնել է «Արդշինբանկ» ԲԲԸ-ի վարչության անդամի, ֆինանսական տնօրենի պաշտոնը 2025 թվականի հունիսից: Մինչ այդ, նա հանդիսացել է Alliance for Financial Inclusion կազմակերպության գործադիր տնօրենի տեղակալը:

Գարեգին Գևորգյանն ունի գրեթե երեք տասնամյակի լայն փորձ ֆինանսական կարգավորման, բանկային գործի և գործադիր կառավարման ոլորտներում:

Գարեգին Գևորգյանն իր մասնագիտական ուղին սկսել է ՀՀ Կենտրոնական բանկում 1996 թվականին, որտեղ աշխատել է որպես Պահուստների կառավարման բաժնի ավագ մասնագետ: Ավելի ուշ, շուրջ երկու տարի, նա զբաղեցրել է Ֆինանսական ռիսկերի կառավարման վարչության պետի պաշտոնը:

2000 թվականին Գարեգին Գևորգյանը աշխատել է InterEquity Capital Partners-ում որպես հետազոտական վերլուծաբան՝ ձեռք բերելով արժեքավոր գիտելիքներ մասնավոր կապիտալի շուկաների վերաբերյալ: Այնուհետև նա ստանձնել է «Յունիբանկ» ՓԲԸ-ի ֆոնդային կենտրոնի տնօրենի պաշտոնը: 2002-ից 2004 թվականներին Գարեգին Գևորգյանը միացել է USAID Bank Training Program-ին որպես ավագ բանկային խորհրդատու:

Նրա գործադիր կառավարման ուղին շարունակվել է «Կասկադ Կրեդիտ» ՈւՎԿ ՓԲԸ-ում, որտեղ 2004-2008 թվականներին զբաղեցրել է գործադիր տնօրենի պաշտոնը, իսկ 2008 թվականին՝ աշխատել է «Սիմբիոթիքս» ընկերությունում՝ որպես ինստիտուցիոնալ վարկառուների ներգրավման խորհրդատու:

Նույն թվականին Գարեգին Գևորգյանը ստանձնել է «ՍԵՖ Ինտերնեյշնլ» ՈւՎԿ ՍՊԸ-ի գործադիր տնօրենի պաշտոնը, որը նա զբաղեցրել է ավելի քան 13 տարի:

2022 թվականին Գարեգին Գևորգյանը վերադարձել է ՀՀ Կենտրոնական բանկ՝ այս անգամ որպես Ֆինանսական կայունության և կարգավորման դեպարտամենտի տնօրեն:

Գարեգին Գևորգյանն հավատարմագրված ֆինանսական վերլուծաբան է (CFA charterholder), Հարվարդի բիզնես դպրոցի շրջանավարտ, ունի միջազգային հարաբերությունների և տնտեսագիտության մագիստրոսի աստիճան և տնտեսագիտության թեկնածուի աստիճան՝ Երևանի պետական համալսարանից:

Գարեգին Գևորգյանը ծնվել է 08.02.1975 թվականին:

«Արդշինբանկ» ԲԲԸ վարչության անդամ, ՓՄՁ բիզնես տնօրեն

Արամ Էդուարդի Փինաջյան

Արամ Փինաջյանը ստանձնել է «Արդշինբանկ» ԲԲԸ-ի վարչության անդամի և ՓՄՁ բիզնեսի տնօրենի պաշտոնը 2026 թվականի հունվարից: Մինչ այդ՝ 2025 թվականի ապրիլից հանդիսացել է Բիզնեսի զարգացման դեպարտամենտի ղեկավար: 2024 թվականի նոյեմբերից նա հանդիսացել է «Արդշինինվեստբանկ» ՓԲԸ-ի (մինչև անվանափոխումը՝ «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ» ՓԲԸ) գլխավոր գործադիր տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար:

Նա փորձառու տնտեսագետ և բանկային բարձրակարգ ղեկավար է՝ ֆինանսների, ռիսկերի կառավարման և բիզնեսի զարգացման ոլորտներում:

Իր կարիերայի զգալի մասը Արամ Փինաջյանը անցկացրել է Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստանում, որտեղ զբաղեցրել է մի շարք ղեկավար պաշտոններ: 2015–2017 թվականներին նա հանդիսացել է առևտրային բանկային պորտֆելի ռիսկերի տարածաշրջանային ղեկավար՝ պատասխանատու լինելով Եվրոպայի տարածաշրջանի համար: 2017–2023 թվական-ներին նա ստանձնել է ռիսկերի կառավարման գծով գլխավոր տնօրենի և գլխավոր գործադիր տնօրենի տեղակալի պաշտոնը, իսկ 2023–2024 թվականներին ղեկավարել է ռիսկերի կառավարման և համապատասխանության դեպարտամենտը՝ միաժամանակ հանդի-սանալով գլխավոր գործադիր տնօրենի տեղակալ: 2025 թվականից նա նաև հանդիսանում է Հայաստանում Ամերիկայի առևտրի պալատի խորհրդի անդամ՝ նպաստելով հայ-ամերիկյան գործարար հարաբերությունների զարգացմանը

2023 թվականից մինչ այժմ Արամ Փինաջյանը հանդիսանում է Հայ-բրիտանական գործարար-ության պալատի տնօրենների խորհրդի նախագահ՝ նպաստելով հայ-բրիտանական գործարար կապերի զարգացմանը

Արամ Փինաջյանը ավարտել է Երևանի պետական համալսարանը և Կառավարման և տնտե-սական բարեփոխումների ինստիտուտը, ստացել տնտեսագետի որակավորում:

Արամ Փինաջյանը ծնվել է 22.04.1982 թվականին: Ամուսնացած է, ունի երկու որդի: